



Ն. Ի. ԴՈՒՌԻԽԱՆՈՎԱ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍԱԲ  
ԿՈՒԲՈՐՏԱՅԻՆ  
ՀԱՐՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

14317 46893

Долуханов Ч Н.  
горіквіе догаїсіва  
жкос ССР. Ереван<sup>31</sup>



ՀԱՆՐԵԴՈՒՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԵԴՈՒՆՈՒԹՅՈՒՆ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР  
НАУЧНО-ПОПУЛЯРНАЯ СЕРИЯ

4

Н. И. ДОЛУХАНОВА

КУРОРТНЫЕ БОГАТСТВА  
АРМЯНСКОЙ ССР

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР  
ЕРЕВАН

1963

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍԸ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ԳԻՏԱ-ՄԱՍԱՀԱՅԱԿԱՆ ՍԵՐԻԱ

4

Ն. Բ. ԳՈԼՈԽԵԱՆ ՈՎԱ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍԸ ԿՈՒՐՈՐՏԱՅԻՆ  
ՀԱՐԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

143/7 46893



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍԸ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՈԼՈԳԻԿԱԿԱՆ ՀԱՐԱՏՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 1963

Դրբում նկարագրվում են Հայկական ՍՍԾ կուրորտային  
հարստությունները՝ բազմաթիվ և բազմատեսակ հանքային  
աղբյուրներ, բուժիչ ցեխների և տորֆերի հանքավայրեր, ինչ-  
պես նաև Հայաստանի կլիմայական կուրորտները և կուրոր-  
տային վայրերը։ Համառոտակի տրված է Հայաստանում կու-  
րորտային գործի զարգացման պատմությունը

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ-Ն ԿՈՒՐՈՐՏԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐՈՎ ՀԱՐՈՒՏ ԵՐԿԻՐ Է

Հայկական ՍՍՌ-Ն բացառիկ հետաքրքրություն ներկայացնող երկիր է։ Սովետական Միության ռեսպուբլիկաների մեջ լինելով ամենափոքրը, նա ամենաբազմազան բնական պայմաններ ունի։ Լեռնային փոքրիկ այդ երկիրը երկրաբանական ամենաուշ շրջանում հրաբխային գործունեության վայր էր, որի վերջին ժայթքումները տեղի էին ունենում արդեն մարդու աշքի առջև։ Հրաբխայնությունն իր կնիքն է դրել Հայաստանի ողջ բնական դիմանկարի վրա։ Այդ նրա հանգած հրաբուխներն են, քարքարոտ հողերը, ստորլավային սառն աղբյուրները և, հատկապես, այն շինանյութերը (զանազանագույն տուֆերը, պեմզան, բազալտները և այլն, որոնցով կառուցվում են Հայաստանի քաղաքներն ու գյուղերը)։

Հայաստանը ծովի մակերևույթից շատ բարձր է։ Այն գրավում է Անդրկովկասի երկու գետերի՝ Քուտի և Արաքսի միջև ընկած բարձր ջրբաժան մակերևույթը։ Նրա տերիտորիայի շորս հինգերորդ մասը ընկած է ավելի քան 1000 մետր բարձրության վրա։ Առանձին լեռնաշղթաների գագաթները 3000—3500 մետրի են հասնում։


Հայաստանը բնական բազմազանությունների երկիր է։ Անտառներն ու դաշտերը, ձյունաթույր բարձունքներն ու ծաղկած արոտավայրերը, հարթավայրերն ու ժայռերը միացնում են լրացնում են միմյանց։

Հայաստանին վերեկից նայելիս, երևում են բարձր լեռնաշղթաներ, լավային բարձրադիր սեղանաձև սարահարթեր, որոնք միահյուսվում են գետերի նեղ և լճերի ընդարձակ ավազաններին, ուրիշագծվում են խոշոր հրաբխային զանգվածներ՝ հանգած հրաբուխների կոներով, որոնք կտրտված

Են գետերի խոշոր կիրճերով։ Դեպի երկինք է համբառնում քառագագաթ Արագածը, իսկ նրա կողքին տարածվում են Արարատյան դաշտի մրգատու և խաղողի այգիները։ Երկրի հյուսիսում Փամբակի և Դիլիջանի անտառապատ լեռներն են, իսկ Հարավում՝ վեր են խոյանում Զանգեզուրի անմատչելի խոլժայռերը։ Երկրի կենտրոնում կապուտակ աշբի նման ժպտում է Սևանա լիճը։

Այս ողջ բազմազանությամբ հանդերձ, Հայկական ՍՍՌ-ն իր բնական պայմաններով բաժանվում է չորս մարզերի (նկ. 1)։


Առաջին մարզը ընդգրկում է ռեսպուբլիկայի հյուսիսարևելյան մասը՝ Քուռ գետի ավազանը, ուր ձգվում են կանաչապատ լեռնաշարերը։ Նրանց հյուսիսային և հյուսիս-արե-



Նկ. 2. Հյուսիսային Հայաստան  
Լուսանկար՝ Ե. Ա. Սարգսյանի

լիջան լանջերը ծածկված են անտառներով։ Անտառային տարածություններն այդ տերիտորիայի 28—30 տոկոսն են կազմում։ Գերակշռում են սաղարթավոր անտառները։

Այդ մարզի (նկ. 2) լեռնա-անտառային շրջաններն ունեն բացառիկ առողջարար կլիմա և բազմազան բնապատկերներ։



Նկ. 1. I—Հայական ԱՋՎԱՄԿ Հյուսիս-արևելյան լեռնաշղթաները, II—Հայաստանի հրաբխային սարահարթը, III—Հայական ԱՋՎԱՄԿ Հարավ-արևելյան լեռնաշղթաները, IV—Արարատյան դաշտավայրը:

Այդ շրջաններում կլիմայական առողջարաններ ստեղծելու այն հնարավորություններ կան:

Երկրորդ մարզը ուսագուբլիկայի կենտրոնական հրաբխալին սարավանդն է: Այն ձգվելով Զավախքի (Խոնավ) լեռներից, անցնում է Գեղամա և Վարդենիսի հրաբխային զանգվածների վրայով դեպի Դարաբաղի բարձրավանդակը: Սարավանդի ոելյեֆը կտրտված է բլուրներով: Նրա մակերեւույթի վրա, որը կազմված է լավալի երիտասարդ հեղեղներից և ծածկույթից, աշքի են ընկնում հանգած հրաբուխներն ու խարամային կոները:

Այդ մարզի գետերը հոսում են խոր կիրճերի միջով: Սարավանդը սառը կլիմա ունի: Տարածված են ալպիական մարդագետինները, որոնք ծածկված են բարձր խոտերի և վառ ծաղիկների ճոխ գորգերով:


Սարավանդի հյուսիս-արևելյան մասում ընկած է Լոռու բարձրավանդակն իր հիանալի հողերով և հրաշալի առողջարար կլիմայով: Լոռու բարձրավանդակը բուժիչ վայրերի հոչակ է վայելում: Ամռան ամենատոթ օրերին այստեղ թարմացնող զով է լինում:

Հայկական հրաբխային սարավանդի կենտրոնում ձյան դժիգ վեր խորանում են լեռնային զանգվածները: Նրանց մեջ ամենաբարձրը Արագածն է:

Հրաբխային սարավանդում կան ոչ մեծ լճեր, որոնք գրադիցնում են առանձին գողավորությունների ու հրաբխային կոների հատակը (նկ. 3): Այդ նույն մարզում ավելի քան 1900 մ բարձրության վրա տարածվում է Սևանա լիճը: Նրա կապույտ մակերեսը, որն ասես ամփոփված է հեռավոր, գրեթե թափանցիկ լեռների շրջանակի մեջ, անմոռանալի տպավորություն է թողնում: Սևանի բնապատկերները անկրկնելի են: Մաքսիմ Գորկին այն անվանել է «երկնքի մի պատառիկ», որն իշել է գետին՝ լեռների մեջ», իսկ Միխայիլ Կոլցովը՝ «Հայաստանի կիսահեքիաթային հրաշք»:

Բարձր լեռնային և ծովային կլիմաների հազվագյուտ զուգորդությունը, մաքուր օդը, արևի առատությունը Սևանի ափը դարձնում են բուժման և հանգստի կազմակերպման հա-

մար գրեթե հազվագյուտ մի վայր։ Այստեղ բնությունը մարդուն իր բռլը բարիքներն է պարզեցում՝ և՛ ծով, և՛ արև, և՛ օդ։ Երրորդ մարզը Հայկական ՍՍՌ հարավ-արևելյան մասի շատ բարձր լեռնաշղթաներն են, որոնք ընդգրկում են Եղեգ-



### Նկ. 3. Արագածի լանջերը


Լուսանկար՝ Ա. Պ. Բալյանի

նաձորի, Սիսիանի, Գորիսի, Ղափանի, Մեղրու շրջանները։ Այդ, այսպես կոչված, Հայոցձորն ու Զանգեզուրն է (նկ. 4)։

Հայոցձորի և Զանգեզուրի լեռները աշքի են ընկնում իրենց ոելյեֆի շատ մեծ թեքությամբ և կտրտվածությամբ։ Մեծ են նաև բացարձակ բարձրությունների տարբերությունները։ Ոչ այնքան էլ մեծ Զանգեզուրի տերիտորիայում բարձրությունների տարբերությունը ավելի քան 3500 մետր է։ Զանգեզուրի լեռնաշղթայի ամենաբարձր լեռնագագաթը՝ Կապուտջիղը, 3906 մետր է, Մեղրի շրջկենտրոնի բացարձակ բարձրությունը՝ 400 մետր։ Նրանց միջև ընկած տարածությունն օդով մոտավորապես 40 կմ է։

✓ Միմյանց հաջորդող խոր կիրճերն ու ժայռոտ լեռները դժվարացնում են հաղորդակցությունն այդ լեռներում, հատ-

կապես ձմռանը, երբ ձյան շերտը փակում է բարձրադիր լեռնանցքերը; Այստեղ բուականությունը աղքատ է. անտառային զանգվածներ գրեթե չկան, անտառները գրավում են ողջ տերիտորիայի սոսկ 5 տոկոսը: Հիմնականում դրանք կաղնուծառեր են և թփեր:



Նկ. 4. Զանգեզուրի լեռներում  
Լուսանկար՝ Ս. Պ. Բալլանի


Անտառազուրկ լեռներում ուժեղ են հողմնահարության պրոցեսները: Ցուցօրինակ լեռներով առանձնապես հոշակված են Գորիս քաղաքն ու նրա շրջակայքը (նկ. 5):

Այդ մարզի կլիման ընդհանուր առմամբ ցամաքային է, բայց նրա ֆոնի վրա, նայած ծովի մակերեսույթի նկատմամբ ունեցած բարձրությանը, հերթագայվում են կլիմայական գոտիների բոլոր տարբերակները: Անցումները կտրուկ են: Այսպես, ամռան ամիսներին, երբ Դափանում (750 մ ծ. մ. բ.) խեղդով է և շոգ, Քաջարանում (2000 մ ծ. մ. բ.) ցուրտ է: Նրանց միջև ընկած տարածությունը, խճուղային ճանապարհով, ընդհամենը 35 կմ է, այնպես որ ավտոմեքենայով կատարած մեկժամյա ուղևորության ընթացքում կարելի է ամռանից ընկնել աշուն կամ աշնանից՝ ձմեռ:

✓ Ողջ Զանգեզուրը հոշակված է իր առողջարար կլիմայով, բնակիչների երկարակեցությամբ, բնության գեղեցկությամբ:


Վերջապես, շորրորդ մարզը Արարատյան տոթակեղ հովիտն է, որն ընկած է Հայկական ՍՍՌ հարավում, Արագած և Արարատ հրաբխային զանգվածների միջև: Նրա ռելյեֆը հարթ է, տեղումները շատ քիչ, տարեկան մոտ 250—300 մմ, այն էլ հիմնականում տարվա սառնաշունչ կեսին: Ամառը շորային է և շոգ:

Անցյալում Արարատյան գոգահովտի բնակիչներին հնձում էր տենդը: Այժմ այն լիովին վերացված է: Սովետական մարդկանց շանքերով ճահճները շորացվել են, աղուտները ոռոգվել: Նախկինում ամայի տարածություններում տնկվել



Նկ. 5. Գորիսի ժայռերը

Լուսանկար՝ Գուրոսի



Նկ. 6. Ալպարտայան դաշտը

Խուսանելով՝ Յու. Մ. Շեխտմանի

Են խաղողի և մրգատու այգիներ: Արարատյան դաշտավայրը վեր է ածվել մի դրախտային բարերեր երկրի: Իզուր չէ, որ ժողովուրդն այն անվանում է Արարատյան ծաղկող դաշտավայր:

Նրա բնանկարը դարդարում է հսկա Արարատը, որը զարմացնում է հարթավայրում ունեցած իր անսպասելի դիրքով (նկ. 6): Այն ցայտոնորեն առանձնանում է հարթավայրի կապույտ երկնքի ֆոնի վրա և լուսավորության ու ամպերի շնորհիվ հաճախ փոփոխում իր տեսքը:


Ամեն ոք, ով Հայաստան է գալիս, հիանում է նրա բնական գեղեցկություններով:

✓ Բայց ավելի հարուստ է Հայաստանի ընդերքը: Այն իր մեջ ամփոփում է բազմաթիվ օգտակար հանածոներ, որոնց մեջ գլխավոր տեղերից մեկը գրավում են հանքային ջրերի գործնականում անսպառ պաշարները:

Ներկայումս Հայկական ՍՍՌ տերիտորիայում գրանցված է մոտ 500 հանքային աղբյուր և հորատանցք, որոնք հանքային ջուր են ցայտում: Նրանց ընդհանուր գերիտը մեկ վայրկյանում 700 լիտր է, օրական մոտ 60 միլիոն լիտր:

Հանքային աղբյուրների առանձին խմբեր այնքան շատ չուր են արտամղում, որքան, ասենք, լեռնային գետակը: Դրանք Արարատի, Արագածի, Զերմուկի, Հանքավանի, Արզնու, Տաթևի և այլ աղբյուրների ջրերն են: Հայաստանի հանքային ջրերից շատերը համեմատաբար ոչ մեծ դեբիտ ունեն, որը տատանվում է օրական մի քանի հազարից մինչև 50—70 հազար լիտրի միջև:

Հայկական ՍՍՌ հանքային աղբյուրների ջերմությունը լայն տատանումներ ունի, այն  $4^{\circ}$ -ից ( $\Phi$ ոի ձոր) հասնում է մինչև  $64^{\circ}$ -ի (Զերմուկ): Սակայն, հանքային աղբյուրների մեծամասնությունը սառը ջրերն են, որոնց ջերմաստիճանը հասնում է  $20^{\circ}$ -ի: Որոշ աղբյուրներ գոլ և տաք ջուր ունեն: Այդ ջրերը հիմնականում բաժանվում են երեք խմբի: 1-ինը՝ Արարատյան, Տաթևյան և այլն, որոնց ջերմաստիճանը  $24-26^{\circ}$  է: 2-րդը՝ Հանքավանի թերմերը և Բուգուշայ գետի մոտ գտնվող աղբյուրները, որոնց ջերմաստիճանը  $30-35^{\circ}$  է: 3-րդը՝ Զերմուկի թերմերը, որոնց ջերմաստիճանը  $55-64^{\circ}$  է:



Vol. 7.

Այս ջրերը իրենց բուժիչ հատկություններից բացի, աշքի են ընկնում որպես բնական ջերմության աղբյուրներ։ Երկրորդ խմբի տաք ջրերը կարող են օգտագործվել ջերմոցների հողը տաքացնելու և տնտեսական այլ նպատակներով, երբորդ խմբինը՝ ջեռուցման համար։ Էլեկտրոէներգիա արտադրող ջերմասարքավորումների համար անհրաժեշտ տաքություն ունեցող ջրեր Հայաստանում դեռևս չեն հայտնաբերվել։ Նման ջրերի որոնման հետազոտական և հետախուզական աշխատանքներ են տարվում։

Հայաստանի հանքային աղբյուրներն իրենց քիմիական բաղադրությամբ և թերապևտիկ հատկություններով բավականին բազմազան են։ Քիմիական տեսակետից տարբերվում են հանքային ջրերի 76 առանձին տիպեր։

Այդ ջրերն իրենց գազային բաղադրությամբ բոլորն եւ ածխաթթվային են։ Այդ տեսակետից հատուկ խմբեր են կազմում 1. Արարատի և Արգիճիի աղբյուրները, որոնց գազային բաղադրության մեջ խիստ աճում է ազոտի և ազնիվ գազերի քանակը և 2. Ախուրյանի ածխաթթվա-ծծմբաջրածնային ջրերը, որոնք հայտնաբերվել են վերջին տարիներու կատարված հորատման աշխատանքների միջոցով։

Հայկական ՍՍՌ հանքային ջրերից մի քանիսն են միայն ուղիուակտիվ, և դրանք էլ բարձր ցուցանիշներ չունեն։

Հանքային աղբյուրները երկրի մակերեսութ են ելնում գետերի հուներում և լեռնահովիտներում։ Այդ լավ երեսում է Հայկական ՍՍՌ հանքային աղբյուրների սխեմատիկ քարտեզում (նկ. 7)։ Այսպես, օրինակ, հանքային ջրերի Հանքավանի խումբը գտնվում է Մարմարիկ գետի մոտ, Արգնու-Առքելինը՝ Հրազդանի կիրճում, Դիլիջանի-Ֆիոլետովոյինը՝ Աղստեղ գետի հովտում, Զերմուկինը՝ Արփա գետի կիրճում, Կամոյի աղբյուրները՝ Գավառագետի հովտում, Տաթևինը՝ Որոտանի գետաբերանում և այլն։ Նույնը կարելի է ասել նաև մյուս աղբյուրների մասին։ Աղբյուրների մեծամասնությունը հայտնաբերվել է լեռնային կտրտված ոելյեֆ ունեցող վայրերում։ Հայաստանի կենտրոնական հրաբխային, բլրածածկ ոելյեֆ ունեցող սարավանդում շատ ավելի քիչ հանքային աղբյուրներ կան։

Հայաստանի՝ իրենց բաղադրությամբ և չերմությամբ տարրեր հանքային աղբյուրների հեռանկարներն անսահման են, իսկ արդեն գոյություն ունեցող առողջարանները (Արդնի, Զերմուկ և այլն) հաստատուն կերպով հիմնվում են հանքային ջրերի հարուստ ոեսուրաների վրա:

Հետախուզված են նաև Հանքավանում, Զառում, Արարատում, Ֆիոլետովովոյում, Կամոյում, Տաթևում, Ախուրյանում, Լիճքում, Մարտունիում և շատ այլ վայրերում դժուվող արժեքավոր հանքային ջրերի հարուստ պաշարները: Այդ ջրերը առաջժմ մասնակիորեն են օգտագործվում:




Ռեսպուբլիկայի հարավում, Հայոցձորում ստեղծված Զերմուկ ջրաբուժական առողջարանում հանքային ջրերի ընդհանուր դերիտը օրական հասնում է մոտավորապես 2 միլիոն լիտրի (տարեկան 730 միլիոն), իսկ առավելագույն չերմաստիճանը՝ 64-ի: Այդ ջրերն իրենց քիմիական բազադրությամբ նույնանման են Զեխոսլովակիայի համաշխարհային հոչակ ունեցող Կառլովի Վարի առողջարանի ջրերին:

Զերմուկի ջրերը ընդհանուր ճանաչում են գտել որպես ստամփաի լյարդի, միզամուլ ուղիների և այլ հիվանդությունների բուժման միջոց: Բուժիչ է նաև Զերմուկի լեռնային օդը: Զերմուկում տարեկան լցվում է մոտ 28 միլիոն շիշ հանքային ջուր:

Զերմուկի շրջակայքում նմանօրինակ ջրեր են հայտնաբերվել Կեշուտում, Դալիում, Սաոցալիում և այլն: Դրանք Զերմուկի «արբանյակներն» են: Այդ տիպի շատ հանքային աղբյուրներ կան Հայկական ՍՍՌ Ազիգրեկովի և Սիսիանի շրջաններում:

Երևանից 18 կմ հեռու, Հրազդանի կիրճում ստեղծված Համամիութենական նշանակություն ունեցող ջրաբուժական առողջարանում ջրի օրական դերիտը նույնպես մոտ 2 միլիոն լիտր է (տարեկան մոտ 750 միլիոն լիտր), իսկ ջրերի չերմաստիճանը հասնում է 24-ի: Այնտեղ տարեկան 19,5 միլիոն շիշ է լցվում:

Արդնին սրտի և ստամփաի հիվանդությունների բուժման տեսակետից վաղուց ի վեր համամիութենական նշանակու-



Նկ. 8. Հայկական ՍՍՌ գլխավոր հանքային աղբյուրների և նրանց անալոգների քիմիական կազմը. պարունակությունները՝ 1—քլոր, 2—սուլֆատ իոն, 3—հիդրօկարբոնատ, 4—մաղնեղիում, 5—կալցիում, 6—նատրիում:

թյուն է ձեռք բերել: ԱՍԽՄ-ում նման ջրեր դեռևս չեն հայտնաբերվել: Հայաստանի սահմաններում նույնատիպ մի քանի աղբյուրներ են հայտնաբերվել նաև Հրազդան գետի միջին հոսանքում (Առքելի և Արգնու մյուս «արբանյակներ») և Եղեղնաձորի շրջանի Եղեգիս գյուղի մոտ:

Դիլիջան կլիմայական առողջարանի մոտակայքում, Բլղան գետի հովտում հայտնաբերվել են ոչ մեծ քանակությամբ հանքային ջուր ցայտող աղբյուրներ: Այստեղ գործում է մի փոքրիկ շիշ լցնող գործարան, որը տարեկան մոտ 5 միլիոն շիշ է լցնում: Այդ ջրերն իրենց քիմիական բաղադրությամբ նույնանման են Բորժոմիի ու Վիշիի (Ֆրանսիա) հայտնի ջրերին (նկ. 8) և կարող են հաջողությամբ օգտագործվել աղեստամոքսային, երիկամային և լյարդի հիվանդությունների բուժման համար: Դիլիջանի (Բլղանի) ջրերի շերմաստճանը հասնում է 11—11,5-ի:

Դիլիջանից ոչ հեռու, Ֆիոլետովով գյուղի մոտ, հորատման միջոցով՝ հայտնաբերվել են մի քանի շատրվանող աղբյուրներ, որոնց ջերմաստիճանը  $12^{\circ}$  է: Դրանք ևս կարող են օգտագործվել Դիլիջան առողջարանում:

Հանքավանում, Մարմարիկ գետի կիրճում, բացվել են հանքային ջրերի հզոր աղբյուրներ, որոնք նման են Եսենտուկիի ջրերին (նկ. 8): Դրանց ընդհանուր դեբիտը օրական 3 միլիոն լիտրից ավելի է (տարեկան ավելի քան 1 միլիարդ լիտր): Այստեղ կառուցվել է ոչ մեծ շիշ լցնող գործարան, որը տալիս է տարեկան մոտ 2,5 միլիոն շիշ: Հանքավանի ջուրը որպես բուժիչ միջոց օգտագործած հիվանդների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ այն հաջողությամբ կարող է կիրառվել աղեստամոքսային տրակտի, սննդափոխանակության խախտման և այլ հիվանդությունների բուժման նպատակով:

Նույն Մարմարիկ գետի կիրճում, Ուշաշիկ, Կարմիր հովիտ և Զառ գյուղերի մոտ, հայտնաբերվել են իրենց բաղադրությամբ Հանքավանին նույնանման ջրեր, որոնք իրենց քանակով նույնքան մեծ դեբիտ ունեն: Դրանք Հանքավանի «արբանյակներն» են: Նմանօրինակ ջուր ունի նաև Սևանա լճի մոտ, Կամո քաղաքում գտնվող հանքային աղբյուրը: Այդ

շրից տարեկան մոտ մեկ միլիոն շիշ արտահանվում է «Սևան» պիտակի տակ:

Արարատյան գաղտավայրում, Արարատ գյուղի մոտ հանքային ջուր շատրվանող հորատանցքերը հսկայական գերիտոննեն, որը օրական 14 միլիոն լիտրի է հասնում (տարեկան ավելի քան 5 միլիարդ լիտրի): Զրերի ջերմաստիճանը՝ 24—26 է: Դրանք Սղալտուրոյի ջրերի հեռավոր երկվորյակներն են: Այստեղ կուրորտային շինարարության համար լայն հեռանկարներ կան:

Հանգեղուրում արժանի համբավ են վաշելում Տաթևի հանքային աղբյուրները: Դրանք կիսլովողակյան նարզանի կրկնօրինակներն են (նկ. 8), որոնց ընդհանուր դերիտը օրական 500—600 հազար լիտրի է հասնում, իսկ ջերմաստիճանը՝ 25:

Որուտան գետի ավագանում, Տաթևի ջրերից բացի, Ռւուտ և Շամբ գյուղերի մոտ հանքային ջրերի խոշոր աղբյուրներ կան: Ռւուտի հանքային աղբյուրների և հորատանցքերի ջրերի ընդհանուր դերիտը օրական մոտ 500 հազար լիտր է, ջերմաստիճանը՝ 26:

Հայոցձորում հանքային ջրերի ջերմուկի խմբից բացի, հեռանկար ունեն նաև Բուշաղյար և Մալիշկա գյուղերի մոտ գտնվող աղբյուրները: Բուշաղյարի աղբյուրը  $19^{\circ}$  ջերմություն ունի, իսկ նրա դերիտը օրական 100 հազար լիտրի է հասնում: Մալիշկայի հանքային աղբուրի դերիտը մեծ չէ, իսկ ջերմաստիճանը՝ 17:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Լոռու սարավանդում, Ստեփանավանի շրջանի Կույրիշև գյուղի (Սև և Դեղանդում, գետակների) աղբյուրները, ինչպես նաև Կիրովական քաղաքի մոտ գտնվող Մայմեխի հանքային աղբյուրները:

Կույրիշևի ջրերի ջերմաստիճանը տատանվում է 8-ից մինչև 12-ը: Դրանց դերիտը մեծ չէ, բայց կարող է ավելացվել ոչ այնքան խոր հորատման միջոցով:

Մայմեխի հանքային աղբյուրը  $27^{\circ}$  ջերմություն ունի: Մեկ աղբյուրի ջուրը օրական 120 հազար լիտրից ավելի է:

Երևանին մոտիկ շրջանում հայտնաբերվել են ածխաթթվային աղի ջրեր, որոնք բարձր հանքայնություն և լող ու

բրոմ են պարունակում։ Դրանք գտնվում են Դիլին, Զըմեժ, Շոռադյուր գյուղերի մոտ։

Ախուրյան գետի ավազանում, 1956—57 թթ. կատարված հորատման միջոցով հայտնաբերված ածխաթթվա-ծծմբացրածնային հանքային ջրերը հսկայական պաշարներ ունեն, այնքան շատ, որ այդ ջրերն օգտագործվում են դաշտերի ոռոգման համար։ Հայաստանում այդ տիպի ջրեր առաջին անգամ են հանդիպում։

Սևանա լճի հարավային ափում, Լիճք և Մարտունի գյուղերի միջև հայտնաբերվել են Եսենտուկիի տիպի ջրեր, Կրգիճի գետի ավազանում կա հեռանկար ունեցող հանքային ջրերի երկու խոսմք։

Հայկական ՍՍՌ հետազոտված և քիչ հայտնի, հեռանկար ունեցող և սակավ հետաքրքրություն ներկայացնող, տաք և սառը հանքային ջրերի ցուցակը կարելի է շարունակել։ Հանքային ջրերի շատ աղբյուրների մոտ բուժիչ ցեխեր են գոյանում։

Ստեփանավանի, Կալինինոյի, Բասարգեշարի և Կիրովականի շրջաններում տորֆի գործնականորեն անսպառ պաշարներ կան, որոնք կարող են օգտագործվել բուժիչ նպատակներով։

Հայկական ՍՍՌ-ն ներկայացված է կլիմաների մի հարբստագույն կոմպլեքսով, որոնք արժեքավոր բուժիչ հատկություններ ունեն։

Հայաստանի շատ շրջաններ հոշակված են իրենց բուժիչ կլիմայով։ Այդ Աղստև գետի անտառապատ ու կանաչ կիրճն է, որի կլիման բուժում է տուբերկուլյոզային հիվանդություններ, Սևանա լճի արեավառ ափը, որն առողջացնում է թուզ և հոգնածություն ունեցող մարդկանց, Լոռու հարթավայրը և Մարմարիկ գետի կիրճը, որոնց կլիման շատ օգտակար է մանուկների համար, Զանգեզուրի և Հայոցձորի լեռները իրենց զով ու կենարար օդով, անգամ տապոտ Արարատյան դաշտավայրը, որի շոր օդը նպաստում է երիկամային հիվանդությունների բուժմանը։

Ամենից ավելի հետաքրքիր հանքային աղբյուրների, բու-

ժիշտ ցեխերի, առքի և կլիմայական կայանների նկարագրությունը տրվում է համապատասխան գլուխներում:

## ԿՈՒՐՈՐՏԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԶԱՐԴԱՑՈՒՄԸ

### ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(Ակնարկ)

Հայաստանի հանքային աղբյուրների և բուժիչ ցեխերի համբավը խոր հնություն ունի: Ժողովուրդը դարեր անընդհատ դիմում էր հանքային աղբյուրներին, նրանցում որոնելով իր հիվանդությունների ապաքինումը: Լողանալով նրանց մեջ և խմելով այդ ջրերը, մարդիկ հաճախ աղատվում էին զանազան հիվանդություններից, մի բան, որը ժողովրդի մեջ էլ ավելի էր ամրապնդում հանքային ջրի բուժիչ ուժի նկատմամբ ունեցած հավատը:

Հավանաբար ամենից շատ բուժվում էին մաշկային հիվանդությունները: Այդ են վկայում հանքային աղբյուրների հաճախ հանդիպող անունները՝ Քոս-ջուր, Քոս-աղբյուր, Գոհջուր և այլն:

Խնքնաբուժման: Փորձը սերնդից սերունդ էր փոխանցվում: Հաճախ հանքային աղբյուրները պրիմիտիվ ձևով վերակառուցվում էին: Ամենից ավելի ժողովրդականություն վայելող աղբյուրների շուրջը լողանքների համար փոքրիկ ավազաններ էին ստեղծվում: Հաճախ այդ նպատակով նույնիսկ հատուկ շենքեր էին կառուցվում:

Այդ կառույցները ժամանակի ընթացքում կործանվել են, բայց մի շարք տեղերում դեռևս կարելի է տեսնել նրանց պատերի մնացորդները (Զերմուկ, Արզնի, Գառնի, Զրվեժ, Բզովդալ և այլն): Առանձին շրջաններում քանդված ավազանները հայտնաբերվել են հողացին աշխատանքների ժամանակ:

Լ. Ա. Հովհաննիսյանի գրքում<sup>1</sup> բերված տվյաներով «Տաթևի հանքային» աղբյուրները օգտագործվել են դեռևս Սյունիքի տիրակալների ժամանակ (մոտավորապես հազար տարի առաջ), ըստ որում, աղբյուրներն արտաքին աղբեցություններից պաշտպանելու համար այստեղ շատ հնուց նրանցից

<sup>1</sup> Л. А. Огanesian, Минеральные источники Армении, Ереван, 196.

մեկի վրա կառուցվել է սրբատաշ քաղաք Չափաված կամարածե մի սենյակ:

Դարալագյազով, ս. Հոգի եկեղեցուն կից մի հանքային աղբյուր կար, որի համբավը, XIV-րդ դարի պատմիչ Ստեփանոս Օքքելյանի վկայությամբ, սփամել էր աշխարհով մեկ:

Օքքելյանը (Ստեփանոս Օքքելյան, Պատմություն երկրի Սիսական, Թիֆլիս, 1910) պատմում է, որ այժմյան Դարալագյազի բարձրաբերձ ժայռերում հնուց կառուցված էր սուրբ Հոգի եկեղեցին, որի սեղանի տակից հոսպ ջուրը բուժիչ յուղի խառնուրդ ուներ: Այդ ջուրը հիանալի բուժարար հատկություններ ուներ և նրանում լուզանալուց ու յուղով օժվելուց հետո, բուժում էր ամեն ցավ, նույնիսկ այն ժամանակներում ամենից գժվար բուժելի հիվանդությունները՝ քորոտությունը, քոսը, գանգրենային և աղտոտված վերքերը: Օքքելյանի խոսքերով, այս հանքային աղբյուրների համբավը տարածվել էր աշխարհով մեկ:

Սուրբ Հոգի յուրօրինակ եկեղեցու վկատակները, որը միաժամանակ ինչ-որ մի յուրատեսակ ջրաբուժական հիմնարկ էր, տեսել ու հիշատակել է Ե. Լալայանը (Ե. Լալայան, Даралагёзский полицейский участок. Памятная книга Эриванской губернии за 1910 г.) Դարալագյազում կառավարած իր ճանապարհորդության նկարագրության մեջ: Նույնպիսի պատմական համբավ էին վայելում Դանիի աղբյուրները... Զանիուած կան լավ պահպանված արհեստական ջրավազաններ, որոնք մոտ 1000 տարի առաջ կառուցվել են հիվանդների լողանալու համար, և որոնց կառուցման մասին ճշգրիտ տվյալներ են պահպանվել:

Դարալագյազի Խստի-սու թերմերը (հնագույն ջերմուկը, որը նշանակում է տաք ջուր) Հայաստանի ազգաբնակչության կողմից վաղուց ի վեր օպտագրեվամ էր բուժիչ նպատակներով: Ավելի քան հարյուր տարի առաջ, Վուկոբոյնիկովը Զերմուկի աջափնյա աղբյուրի վրա նկատել է քարե մի շինության ավերակներ, որոնց մնացորդները մասսամբ պահպանվել են նաև մինչև այժմ: Շինությունն օղակելով ավագանը, նրանում լողացողների համար որպես ժածկ էր ծառայում»:

Առաջնային համարականը ուստի պահպանվել ունեն նաև Արգնու հանքային շքնչը, որինց թերապևտիկ բազմակողմանիությունը միշտ Արգնու առողջացնում աշխատող բժիշկների զարմանքն են շարժում: 1925 թ., Արգնիում, № 1 աղբյուրի վրա բյուլետ դնելիս, ավագանը, որում հիվանդները լողանում էին, մաքրվեց բազմաթիվ դարերի ընթացքում կուտակված կեղտից, հենց այդ ժամանակ էլ այստեղ մի շատ հետաքրքիր երևույթ նկատվեց: Հինավուրց սովորության համաձայն, հիվանդները հանքային ջրում լողանալով և բուժվելով, որպես երախտագիտություն, ջրավազանի մեջ էին նետում աղջնձյա դրամներ: Եվ ահա ջրավազանը մարքելիս, հերթականորեն դուրս էին գալիս սովորական դրամները, հետո ցարական՝ նիկովանչան շրջանից սկսած մինչև Ալեքսանդր առաջինի դրամները, այնուհետեւ ելքան էին գալիս արդեն ալիլի հին պարսկական, թուրքական և այլ դրամներ, այն էլ բավականին մեծ քանակությամբ: Արգնու հանքային ջրերի բազմադարյան պատմությունը ասես վայերացվել էր այդ դրամների վրա, որոնք իրենց արատների բուժումը որոնող ժողովրդական մասսաների ձգտումների հուշարձաններն են:

«Բուժման համար որպես երախտագիտության նշան աղբյուրի մեջ պատմ կամ այլ իր գցելու սովորության արտակարգ հնությունը վկայում է այն մասին, որ հանքային ջուրը որպես բուժիչ միջոց օգտագործելը, Հայաստանի բնակչությանը հայտնի էր՝ խոր հնուց: Եվբոպայում այդ սովորությունը հասնում է մինչև բրոնզի դարը, մի քան, որի մասին են վկայում ո. Մորից վայրում գտնված փայտե խողովակները՝ Դրանք գրեթե 3000 տարի անընդհատ, մինչև վերջին ժամանակներս, աղբյուրի երկաթ պարունակող ջուրը տեղ են հասցըլ, բայ որում, այդ խողովակների տակ գտնվել են բրոնզի դարի իրեր, որոնք ի նշան ազաքինման, նվիրատրվել են աղբյուրի աստվածությանը: Բազմադարյան հնություն ունեն նաև Իջևանի տաք աղբյուրները, որոնց ավազանացին և խողովակալային կտառացներից այժմ սոսկ ավերակներ են մնացել»:

Ծալիսկուոս Մեսրոս Մերտոյանը, որը 1860 թ. առաջին կեսին այցելել է Արգնի, իր «Նկարադրությունք Գեղարքու-

նիքի (այժմ Նոր-Թայազետի) գավառի» պրոտօն Արզնու հանքային ջրերի մասին հետևյալ տեղեկություններն է տալիս աֆողովրդի մեջ այն հայտնի է «Քոս-աղբյուզ» (քոսը բուժող աղբյուր) անոմով և կրոնական պաշտամոնքի առարկա է, նրա մոտ կանգնեցված էր վրան խաչ ունեցող մի քար, որը սակայն, ոչ մի մակագրություն չուներ. նրան երկրպագում էին և ընծաներ տալիս», Այդ քարը մինչեւ այժմ էլ պահպանվում է:

Ա. Պ. Դեմյոխինի տվյալներով «Արզնու հանքային ջրերի համբավը այնքան մեծ էր, որ դեռևս 1828 թ. դեներալ Պասկեպիչի զորքերի կողմից Երևանի շրջանի (այն ժամանակ կոշվում էր Հայկական մարզ) գրավումից վեց ամիս հետո Արզնու հանքային աղբյուրների ջուրը ուղարկվեց Թիֆլիս քիմիական անալիզի ենթարկելու, իսկ շատքսրժիշկ Տենյովկովին, դեղագործ Գերշտենբերգի հետ միասին, Հանձնարարիվեց տեղում որոշել ջրի ջերմաստիճանը, տեսակարար կշիռը և ածխաթթու գաղի քանակը: Կովկասի հնագիտական հանձնաժողովի արձանագրություններում (1878 թ., հատոր VII) բերվում են այդ անալիզի արդյունքները:

Անկասկած Արզնու աղբյուրը գոյություն է ունեցել մինչև վկայաբերող պատմական այդ տարեթվերը: Տրավերտիններում, նստվածքների մեջ քարե զենքի մնացորդների, նետերի ծայրերի հայտնաբերումը այն բանի լուր վկայությունն է, որ Արզնու հանքային աղբյուրները հայտնի էին դեռևս քարե զենք կրող մարդուն:

Հայտնի չէ, թե ո՞ւմ ձեռքերով են կառուցվել այն պրիմիտիվ ջրավագանները, որոնք ընկած են ստորին տրավերտինային վահանների վրա ու պատրաստված են բազալտե քարերից և ներկայումս գրեթե ծածկված են հանքային ջրերի բերած նստվածքներով: Հայտնի չէ, թե ո՞ւմ են պատկանում քարե պրիմիտիվ այդ շինությունները, որոնք գտնվում են կիրճի արևելյան զառիվեր լանջի ստորին մասում:

№ 1 աղբյուրը մաքրելիս ջրավագանի հատակում գտնված օտարերկրյա հնադարյան դրամները խոսում են այն մասին, որ այստեղ էին դալիս ոչ միայն շրջակայքի բնակչությունը,

այլև այլ երկրների բնակիչներ, որոնց հասել էր Արգմու հանքային աղբյուրների համբավը և որոնք ջրի մեջ դրամ նետելով վարձահատուց էին լինում իրենց վիճակի թեթևացման համար<sup>1</sup>»:

Պատմաբան Ալիշանի մոտ գտնում ենք Զերմուկի հանքային աղբյուրների նկարագրությունը: Նա գրում է. «Անհրաժեշտ է այդ բարձր սարավանդը զբոսավայր և սառը աղբյուրների վայր անվանել այն պատճառով, որ այնտեղ կան ազմովով հոսող բազմաթիվ առվակներ, որոնք սկիզբ են առնում աղբյուրներից և նեղ շիթերով հոսում դեպի Արփա գետը: Երջակա և հեռավոր շրջաններից շատերն այստեղ են գալիս կամ բուժման, կամ էլ զբոսնելու նպատակով, քանի որ եղեգնաձորի այժմյան կառավարիչներն իրենց ամառային հանգըստի համար ընտրել են բլուրների մեջ ընկած, ծաղիկներով, աղմուկով ու ծիծաղուն առվակներով ծածկված մի վայր:

Այդ կառավարողներից մեկը, որը ծագումով Լոռեցի է, Գևորգ Խանագովը, 1863 թ. հին ջրավագանի վրա քարից ու կրից մի շենք է կառուցում, նրանից առաջ, մի ուրիշ պատվարժան հայ՝ դիրեկտոր, զինվորական ու բանաստեղծ Պետրոս Մուգադյանը, իր շատ բարերարությունների հետ միասին, հոգում է հանքային աղբյուրների կարիքները, սակայն, նա իրեն հետևորդներ շունեցավ»:

Այդ ջրավաղանի մնացորդները մինչև այժմ էլ պահպանվել են Արփա գետը թափվող գետակի ձախ ափին: Այդ ավագանից օգտվում էին Խանագովի ընտանիքն ու այնտեղ ժամանող մեծամեծները: Այդ ավագանի միջից բխող աղբյուրը տեղացիները մինչև այժմ էլ «Պրիստավի գլու» են կոչում:

Այդ բուժիչ վայրերի մասսայականությունը ժողովրդի մեջ մինչև վերջերս էլ ապրում է: Տարվա տաք եղանակներին ամենից ավելի համբավավոր հանքային ջրերի և ցեխերի շրջաններն էին հոսում մերձավոր, հաճախ էլ հեռավոր գյուղերի բնակիչները: Հանքային աղբյուրների շուրջը խրճիթներ ու վրաններ էին կառուցում, ուր հիվանդներն էին ապրում: Բայց

1 А. П. Демёхин, Арзни. Гидрологический очерк, Ереван, 1940.

մինչև հեղափոխոթյունը, այդ շրջաններում, իհարկե, բժշկական ոչ մի սպասարկում չէր կատարվում:

Այդ տարիներին առանձին մասնագետներ ձգտում էին տեղական իշխանության ուշադրությունը հրավիրել մի քանի հանքային ջրերի ուսումնասիրության և դրանք բուժիչ նպատակով ճիշտ օգտագործելու վրա:

Հայաստանի կուրորտային գործի պիոներների անունները՝ հատուկ գրականության միջոցով հասել են մինչև մեր օրերը:

Հայտնի են՝ Գ. Վուկոբոյնիկովի աշխատությունները՝ Զերմուկի աղբյուրների մասին (1830 թ.), Մեսրոպ Սմբատյանինը (1860 թ.), որը առաջինն է նկարագրել Արզնու ջրերը, Գ. Վ. Աբիսինը (1873 թ.)՝ Զերմուկի հանքային աղբյուրների մասին, Գերասիմենկոյինն ու Խողզկոյինը (1878 թ.) Համզաշիմանի բնասահմանում և նրա հանքային աղբյուրների մասին, Լ. Բերտենսոնի և Ն. Վորոնիսինի դիրքը (1884—1910 թթ.), ուր նկարագրվում են Ռուսաստանի և արտասահմանի հանքային ջրերը, ցեխերը և ծովային լողարանները։ Նրանում նշվում են նաև Հայաստանի մի քանի հանքային աղբյուրները։

Պահպանվել են նաև Լ. Գ. Գյուղենշտեյնի գիրքը (1887 թ.) Երևանի նահանգի հանքային աղբյուրների մասին, Գ. Վ. Ստրուկեի աշխատությունները (1872—1894 թթ.), որոնցում՝ տրվում է Համզաշիմանի և Բզովդալի աղբյուրների ուսումնասիրությունը, Բ. Մելլերի ու Դ. Մ. Դենիսովի «Կովկասի Երկրամասի օգտակար հանածոներն ու հանքային ջրերը» գիրքը (1889—1900 թթ.), Գ. Մ. Սմիռնովի «Կովկասի երկրամասի հանքային ջրերը, որոնք հայտնաբերվել և հրոշակվել են 1904-ից 1909 թթ.» (1910—1915 թթ.), Ստեփանոս Օբքելյանի (1910 թ.), Լ. Կ. Կոնյուշեակու (1915 թ.), Արամյանցի (1916 թ.), Կուպրիսի (1916 թ.), Մելիք-Նուբարովի (1916 թ.) և ուրիշների աշխատությունները։

Սակայն այս հետազոտողների աշխատությունները ոչ մի արձագանք չգտան Հայաստանի բախտը տնօրինողների մոտ։ Ցարական կառավարությունը չէր ցանկանում Հայաստանը կուտուգապես գարգացնել և ժողովրդի մասին հոգ չէր տանում։

Հանքային աղբյուրներն ու բոլոր կուրորտային վայրերը բարձիթողի էին արված: Կար միայն երկու «ամառանոցային վայր» — Սաղկաձորը (նախկին Դարաշիշագը) և Դիլիջանը, որտեղ քաղաքների բնակիչները փրկություն էին գտնում ամռան շոգից: Սաղկաձորը որպես ամառանոցային վայր էր ծառայում հիմնականում Երևանի համար, քանի որ այն մոտ էր և հաղորդակցության հարմարավետ ճանապարհներ ուներ: Դիլիջանը հոշակված էր ողջ Անդրկովկասում: Այսպես, օրինակ, Ա. Պ. Դեմյոխինի խոսքերով ասած, «Դիլիջանը վաղուց ի վեր կլիմայական գեղեցիկ վայրի համբավ է վայելում: Տուբերկուլյոզային հիվանդների վրա նրա կլիմայի բարերար աղղեցության մասին հայտնի էր ոչ միայն բժիշկներին, այլև Անդրկովկասի բնակչության լայն խավերին: Դիլիջանը ամռանոցային վայր էր, ուր ամռանը գալիս էին Երևանից, Թբիլիսիից և Բաքվից: Ինը տարվա ընթացքում, ընդհուպ մինչև 1915 թ., Դիլիջան էին ուղարկվում Թբիլիսիի քաղաքային դպրոցների և Բաքվի նավթարդյունաբերողների Միության խորհրդի դրագուցների աշակերտները: Տուբերկուլյոզի դեմ տարվող պայքարի ընկերությունը մինչև առաջին իմակերիալիստական պատերազմի սկիզբը, երեք տարի այստեղ մանկական դադութներ ուներ:

Ահա և բոլորը: Սովետական Հայաստանը կուրորտային հարստությունների յուրացման տեսակետից այլ ժառանգություն չի ստացել:

Հայաստանում Սովետական իշխանության հաստատման առաջին իսկ տարիներից նրա կուրորտային ռեսուրսների հետազոտման վրա մեծ ուշադրություն դարձվեց: Սակայն միանգամբ շատ դժվար էր կուրորտային գործը ոտքի կանգնեցնել մի այնպիսի հետամնաց երկրում, ինչպիսին Հայաստանն էր:

Առաջին տարիներին երիտասարդ ռեսպոբլիկան հեռավոր լեռնային շրջաններում առողջարաններ ստեղծելու հնարավորություն չուներ: Այսպես, օրինակ, Զերմուկի հիանալի, գրեթե հազվագյուտ ջրերը, որոնք թաքնված էին դժվարացանելի լեռներում, ճանապարհ վիճելու պատճառով երկար ժամանակ չէին օգտագործվում:

Պրոֆ. Ա. Ա. Մելիք-Աղամյանը, որը 1932 թ. եղել էր (Առողջապահության նախկին մինիստր Գ. Ա. Ղևոնդյանի հետ միասին) Զերմովում, հետեւալ ձևով է նկարագրում առողջարանի լիճակը։ «Մենք այնտեղ տիտր մի պատկեր տնօտք, զայքենդ գյուղից վեր, դեպի սարավանդի աղբյուրների շրջանը տանող ոչ միայն խճուղային կամ հասարակ, այլև անիվների շարժման համար ոչ մի ճանապարհ չկար։ Կարելի էր գնալ միայն ձիով կամ ջորիով այն էլ փշածածկ և քարքարոտ կածաններով։ Աղբյուրների մոտ ոչ մի տուն, վանսա ընդունելու համար ոչ մի բարեկարգ ջրավազան չկար։ Վանսան ընդունում էին բաց երկնքի տակ, անմիջապես աղբյուրի ելքի մոտ, այդ նպատակով փորված փոսերում, ուր միաժամանակ մի քանի հիվանդ էին մտնում և երեմն ժամերով շրի մեջ մնում, կամ էլ նրանցից մի քանիսը օրական 3—4 անգամ վանսա էր ընդունում, քանի որ տեղում քիչ պիտի մնային և ցանկություն ունեին կարճ ժամանակամիջոցում հնարավորին շափ շատ վանսա ընդունել։ Այստեղ հիվանդները ապրում և քնում էին աղբյուրի կողքին, խճիթներում, քոշասալերում և հապճեպորեն խփված վրաններում։ Բժշկական որևէ ընտրության, հսկողության կամ ուսումնասիրության մասին խոսք անդամ լինել չէր կարող»։

Նման դրություն էր բոլոր հեռավոր շրջաններում։ Առաջվանման դեռևս շատ երկար ժամանակ բուժիչ աղբյուրների մոտ վրաններ էին խփվում։ Այդ ինքնագործ «առողջարանների» գործին հետզհետե ավելի ու ավելի շատ էր միջամտում սովետական բժշկությունը։ Կոնսուլտացիաները և հիվանդների ուսումնասիրության համար այդ շրջաններում ավելի ու ավելի հաճախ էին լինում բժիշկները (այժմ այդ վայրերում ստեղծվում են ջրաբուժական կայաններ)։ Իսկ իսկական առողջարաններն առաջին շրջանում, այնուամենայնիվ, կրկին կառուցվում էին ճանապարհների մոտ։

Առաջին սանատորիան բացվեց Դիլիջանում, 1922 թ.։ Դրանով սկիզբ դրվեց տուբերկուլյոզային հիվանդների համար հիանալիորեն սարքավորված, համամիութենական խոշոր առողջարանի, ինչպիսին այժմ հանդիսանում է Դիլի-

**Հանը:** Այդ ժամանակ սանատորիան ընդամենը 24 մահճակալ ուներ, սակայն թանկ էր այդ «առաջին ծիծնոնակլ»:

Հանքային ջրերի առաջին ջրաբուժական առողջարանը բացվեց Արգնիում, 1925 թ., իսկ 1926 թ. այստեղ արդեն գործում էր 40 մահճակալանոց սանատորիան: Այդ ժամանակ էլ սկսվեց հայկական հանքային ջրերի պլանաշափ ուսումնակրությունը:

1925 թ. սկզբին, Առժողկոմատի հանձնաժողովը երկրաբան Հ. Տ. Կարապետյանի նախագահությամբ, հետազոտեց «Երևանից մինչև Նիկիտինո գյուղը» տանող խճուղու վրա ընկած հանքային աղբյուրները և առաջարկեց Արգնու և Դիլիջանի ջրերի բազայի վրա առողջարաններ կառուցել:

Հայկական ՍՍՌ Առժողկոմատի հրավերով, 1925 թ. 1932 թ., Հայաստանի հանքային աղբյուրները ուսումնասիրեցին Միության մի շարք խոշոր մասնագետներ՝ բժիշկներ, երկրաբաններ, հիդրոերկուաբաններ և այլն, այդ թվում պրոֆ. Ա. Ի. Օգիլվին, Ա. Մ. Օվշիննիկովը, Վ. Ա. Ալեքսանդրովը, Է. Է. Կարստենսը և ուրիշներ: Նրանք հատուկ ուշադրություն դարձրին Արգնու աղբյուրների վրա:


Արգնիում առողջարանի ստեղծումը սերտորեն կապված է նշանավոր հիդրո-երկրաբան Ա. Պ. Դեմյոխինի անվան հետ, որն իր կյանքի 20 տարին նվիրել է Հայկական ՍՍՌ հանքային աղբյուրների շրջանում կատարած նրա առաջին աշխատանքները օգնեցին բացահայտելու հանքային ջրերի հսկայական ուսոււրսներ: Ա. Պ. Դեմյոխինի կատարած մանրազնին ուսումնասիրությունները Արգնու շրջանի առջև զարգացման լայն հեռանկարներ բաց արեցին: Ինչպես դիտենք, այժմ Արգնին համամիութենական նշանակություն ունեցող առաջնակարգ առողջարան է:

Ա. Պ. Դեմյոխինի աշխատանքները Զերմովի աղբյուրների խմբի զարգացման հիմքը դարձան, որոնց հիման վրա, 1936 թ. հիմնադրվեց Զերմովի առողջարանը: Զերմովի շինարարությունը լայն ծավալ ստացավ արդեն ետպատերազմյան տարիներին: Այժմ Զերմովի առողջարանը հայտնի

Հայաստանի սահմաններից շատ հեռու Այնտեղ կառուցվել են շքեղ սանատորիաներ և վաննաների շենքեր:

Այնտեղ, ուր պրոֆ. Ա. Ա. Մելիք-Ադամյանն ու Գ. Ա. Ղեցինդյանը 1932 թ. ձիուլ դժվարությամբ էին անցել, այժմ հիանալի ասֆալտապատ խճուղի է գնում (նկ. 9), իսկ Զերմովում օդանավակայան կառուցվելուց հետո, նրա կապը Երևանի հետ բնակամենը մեկ թոխքային ժամ է:

Ա. Պ. Դեմյոխինի անվան հետ է կապված Հայկական ՍՍՌ գրեթե բոլոր հանքային ջրերի ուսումնասիրությունը և շինարարության համար ամենից ավելի հեռանկար ունեցող



Նկ. 9. Զերմուկի ճանապարհը

Լուսանկար՝ Ա. Մ. Խարախաշյանի

նոր առողջարանների մատնանշումը։ Այդ Հանքավանն է, Արարատը, Տաթևը, Ֆիոլետովոն, Դիլիջանը (Բլղան) և շատ ուրիշներ։

Նա հրատարակել է երեք գիրք, «Արդնի», «Զերմուկ» և «Արփա գետի ավաղանի հանքային ջրերը», որոնք մեծ ավանդ

են մեր ուսագուքլիկայի կուրորտային դուծի զարգացման մեջ:

Բացի Ա. Պ. Դեմյոխինից, Հայաստանի առանձին հանքային աղբյուրները ուսումնասիրել են Գ. Ա. Մեղնիկյանը, Է. է. Կարստենսը, Ֆեխտները, Բ. Պ. Եֆիմովը, Գ. Մ. Սադինյանը, Ա. Մ. Նալբանդյանը, Մ. Պ. Կաղակովը, Վ. Յ. Զախարովը, Լ. Կ. Կոնյուշեսկին և շատ ուրիշներ:

Հայաստանի կուրորտային հարստությունների յուրացման բնագավառում մեծ դեր է կատարել պրոֆ. Լ. Ա. Հովհաննիսյանի «Հայաստանի հանքային աղբյուրները» դիբջը (1936 թ.), ուր հեղինակը տալիս է Հայաստանի հանքային ջրերի գոեթե լրիվ ցանկը: Հայաստանի հանքային ջրերի հետագա ուսումնասիրողներից պետք է նշել պրոֆ. Ա. Ֆլորենսկովին, Ռ. Ն. Գյանջեցյանին, պրոֆ. Ա. Ա. Հակոբյանին, Վ. Մ. Լեշենկոյին, Ա. Ա. Ալեքսանդրյանցին, Ի. Վ. Տավենային, Ա. Ա. Ճշմարիտյանին, Ռ. Ա. Զանջութովային, Բ. Լ. Աֆրիկյանին, Ն. Ի. Դոլովստանովային, Ա. Ա. Տեր-Մարտիրոսյանին, Հ. Ա. Բողոյանին, Ա. Հ. Մելիքսեթյանին, Է. Ա. Կյուրեղյանին, Վ. Վ. Զերդինցեսկին, Ա. Ռ. Գալստյանին, Ա. Լ. Անանյանին և ուրիշներին:

Ա. Տեր-Մարտիրոսյանի անվան հետ են կապված ամենից ավելի հեռանկար ունեցող շրջաններում Հայկական ՍՍՌ երկրաբանական վարչության կատարած հորատման և հետազոտական աշխատանքները: Առ այսօր, Հայկական ՍՍՌ երկրաբանական վարչության կողմից հորատման միջոցով հետազոտվել են Արդնու, Զեբամուկի, Դիլիջանի (Բլղանի), Հանքավանի, Սևանի (Կամո), Ֆիոլետովյի, Զառի, Կեշուտի, Արարատի, Ուռուտի, Բաղարչայի, Շամբի, Սոֆուլոյի, Սիսիանի և շատ վայրերի հանքային ջրերը:

Կուրորտուղիական աշխատանքները տարեցտարի ընդլայնվում են:

Եթե երկրաբանական գրականության մեջ, 1830 թ. մինչև 1920 թ. ընկած շրջանում, գրեթե 90 տարվա մեջ, մենք կարող ենք հայկական հանքային ջրերին կամ էլ այս կամ այն կերպ նրանց մասին հիշատակվող ընդամենը 39 աշխատանք նշել, ապա միայն 20-ական թվականներին, այն էլ ոչ լրիվ հաշվով, դրանց թիվը 28 էր, 30-ական թվականներին արդեն 98, 40-



Նկ. 10. Շատրվանող հոբատանցքի մոտ  
Լուսանկար՝ Ի. Կ. Կրասուցկու

ական թվականներին 57 և 50-ական թվականներին 133 տպագրված և ձեռագիր աշխատություններ։ Այդ հարցի մասին, եթե ոչ ավելի, ապա նույնքան աշխատություններ ունեն բժիշկներն ու կուրորտագետները։

Այդ ժամանակամիջոցում հայտնաբերվել են ստորենիկը բայց հանքային ջրերի մեծ պաշարներ։ Այնտեղ, ուր առաջ կարելի էր տեսնել հանքային ջրերի միայն փոքրիկ աղբյուրներ, այժմ հսկայական շատրվաններ են խփում, որոնք օրական հանքային բուժիչ ջրի միլիոնավոր լիուրեր են ցայտում (նկ. 10)։

Մեծ խորություններում հանքային ջրերի նոր ռեսուրսներ հայտնաբերելու ուղղությամբ վերջին տարիներս հետաքրքիր հետազոտություններ է կատարել Հայաստանի երկրաբանական վարչության երկրաբանական արշավախումբը։ Նա Եխուրյան գետի ավազանում հայտնաբերել է ածխաթթվածքազրածնային և Սևանա լճի ավազանում (Լիճք ու Մարտունի գյուղերի մոտ) եսենտուկիի տիպի, հզոր ուժով շատրվանող, հանքային ջրեր։

Որպես եղրակացություն, պետք է ասել, որ Սովետական իշխանության տարիներին, Հայաստանի կուրորտային հարբստությունների յուրացման գործում իսկապես հսկայական աշխատանք է կատարվել։ Եթե 1922 թ. ռեսպուբլիկայում գործում էր ընդամենը սանատորիական 24 մահճակալ, ապա 1940 թ. միայն Արգնի, Զերմուկ, Դիլիջան առողջարաններում արդեն 485 մահճակալ կար, իսկ ներկայումս ռեսպուբլիկայի սանատորիաներում և հանգստյան տներում գործում է 3300 մահճակալից ավելի։

1928 թ. Միխայիլ Կոլցովը գրել է. «Մեզանում Դիլիջանի մասին ո՞վ գիտի։ Կրթված մարդիկ առանց հիշողությունը լարելու, հեշտությամբ կարող են թվարկել բազմաթիվ մեծ ու փոքր առողջարաններ Ֆրանսիայում, Բուլղարիայում, Հարավային Ալբանիայում և Իշխանաց կղզիներում, բայց նրանք չեն կարող բացատրել, թե ինչ է Թեքերդան, որտեղ է այն դանում, և մեծահավան անվատահությամբ կծիծաղեն, երբ

լսն, որ հայկական Արդնի հանքային ջուրը փառաբանված նարդանից ավելի լավն է, համեղ ու թոմո<sup>1</sup>:

Այժմ հայկական առողջարանների մասին գիտեն Սովետական Միության մեջ և արտասահմանում: Ռեսպուբլիկայում գործում են համամիութենական նշանակության Արդնի, ✓ Զերմուկի ջրաբուժական և Դիլիջանի կլիմայական առողջարանները: Ջրաբուժական և կլիմայական առողջարան է կառուցվում Հանքավանում: Ռեսպուբլիկական և համամիութենական նշանակության կլիմայաբուժական հանգստյան տներ են գործում Մաղկաձորում, Ախթալայում, Կիրովականում, Լուսում (Շահալի), Կարմրաքարում, Սևանում, ինչպես նաև մանկական սանատորիաներ և ճամբարներ Մարմարիկ գետի հովտում, Լենինականում և Գյուղագարակում (Լոռու սարավանդ):

Հետազոտության միջոցով յուրացման են նախապատրաստվել Կամոյի, Ֆիոլետովոյի, Զառի, Կեշուտի, Արարատի, Ռուստի, Բաղարչայի, Շամբի և այլ վայրերի հանքային ջրերը:

Այդ աղբյուրների բազայի վրա առայժմ հիվանդների կլինիկական ուսումնասիրություններ են կատարվում:

Խիստ աճել է հանքային ջրերի շահագույնը: Եթե 1950 թ. ռեսպուբլիկայում ընդամենը 7,7 միլիոն շիշ էր լցվել, ապա 1959 թվականին նրա քանակը արդեն հասավ 47,8 միլիոնի, իսկ 1960 թ. 56 միլիոն շիշ:

Այժմ, երբ ետևում են մնացել մեր երկրի հետամնացանցյալի հետ կապված դժվարությունները, երբ մենք ռեսպուբլիկայի կուրորտային հարստությունների յուրացման համար բոլոր հնարավորություններն ունենք, այն համենայն դեպք հետ է մնում իր հնարավորություններից: Վերցնենք հանքային ջրերի շահագույնը, այսինքն ոչ կուրորտային պայմաններում՝ նրանց օգտագործումը:

Ներկայումս շիշ լցնող գործարաններ կան Արդնիում, ✓ Զերմուկում, Դիլիջանում, Հանքավանում և Սևանում: Ինչպես տեսանք, ընդհանուր առմամբ, տարեկան լցվում է 56 միլիոն շիշ, կամ էլ<sup>2</sup> 28 միլիոն լիտր հանքային ջուր:

<sup>1</sup> М. Колъцов, 19 городов, Москва, 1932.

Մենք տեսանք նաև, որ մեր երկրի ընդերքը օրական  
ավելի քան երկու անգամ շատ հանքային ջուր է տալիս (60  
միլիոն լիտր), քան այն տարվա ընթացքում լցվում է 22երի  
մեջ: Այլ կերպ ասած, մենք տարվա ընթացքում կարողանում  
ենք 22երի մեջ լցնել միայն հանքային ջրերի այն քանակը, որ  
երկրի ընդերքը տալիս է 11 ժամկա ընթացքում:

Եշերի մեջ օրական լցվում է 76—77 հազար լիտր: Այսպի-  
սով, ինչպես արդեն ասացինք, Հայաստանի ընդերքից օրվա  
ընթացքում ենող ջուրը արտահանելու համար պետք է յուրա-  
քանչյուր 30 ցիստերնից բաղկացած 40 էշելոն, մինչդեռ այդ  
ժամանակամիջոցում 22երի մեջ լցվող ջուրը ընդամենը 1,5  
ցիստերն է կազմում:

Նկատի ունենալով, որ ոչ շատ առաջ այդ 1,5 ցիստերն  
էլ չկար, պետք է հուսալ, որ ամենամոտ ժամանակներս  
մենք ցիստերնից կանցնենք էշելոնների: Մեր ռեսպուբլիկան  
հանքային ջրերի թողարկման և արտահանման բնագավառում  
ոնդ առաջին տեղերից մեկը գրավելու բոլոր հնարավորու-  
թյունները:

## ՀԱՆՔԱՅԻՆ ԶՈՒՐԾ

Ի՞նչ է հանքային ջուրը: Ո՞րոնք են նրա հատկանիշները:  
Ի՞նչով է այն տարբերվում սովորական ջրից, առանց որի ան-  
հնար է պատկերացնել կյանքը երկրի վրա: Ի՞նչպես է այն  
առաջանում: Ի՞նչպես է երկրի մակերևույթ դուրս գալիս: Ո՞ր-  
տեղ է այն կիրառվում: Ի՞նչպես է մարդկանց ծառայում:  
Ի՞նչպես է նրանց կողմից պահպանվում: Այս գլխում մենք  
կփորձենք համառոտակի պատմել այս բոլորի մասին:

Երկրի մակերևույթի վրա, մթնոլորտում անընդհատ ջրի  
շրջապառությունը է տեղի ունենում: Սովերից և օվկիանոսներից,  
ինչպես և երկրի մակերևույթից գոլորշիացած ջուրը հավաք-  
վում է մթնոլորտում և որպես անձրև, ձյուն, ցող ու եղամ  
կրին վերադառնում երկիր: Երկրի մակերևույթի վրա այն  
առաջացնում է առվակներ և գետեր ու նորից հոսում դեպի ծո-  
վերն ու օվկիանոսները: Դրա հետ միաժամանակ տեղի է ու-  
նենում նաև մի ուրիշ շրջապառույթ՝ ջրի ներծծումը հողի մեջ,

որի շնորհիվ լեռնային ապառների ճեղքերում և ծակոտիներում ստորերկրյա ջրեր են հավաքվում:

Նպաստավոր պայմանների առկայության դեպքում սրանք աղբյուրների ձևով երկրի մակերևույթ են ելնում: Ստորերկրյա ջրերի նաև այնպիսի հորիզոններ կան, որոնք երկրի մակերևույթ դուրս գալու ելք չունեն: Այդ տեղի է ունենում կամ լեռնային ապառների նպաստավոր տարածման պատճառով: որոնց մեջ նրանք հավաքվում են, կամ էլ դրանք հնագույն ծովային ավազանների մնացորդներն են, որոնք փակվել են երկրաբանական խոր անցյալում:

Ջրաթափանց ապառների մեջ, ստորերկրյա ջրերը բաժանվում են երկու խմբի՝ ծակոտկեն և ճեղքվածքային: Առաջինները շարժվում են լեռնային ապառների ծակոտիներով, այսինքն լեռնային ապառների մասնիկների փոքրիկ տարածությունների միջով: Երկրորդ տեսակը շարժվում է նրանց միջև բացված փոքր և մեծ ճեղքերով: Ծակոտիների միջով անցած ջրերը, դրանք այն ջրերն են, որոնք տարածվում են, այսպես կոչված, նստվածքային ապառների շերտերում, վերջիններս դարերի ընթացքում առաջանում են ջրամբարների հատակում: Այդ ապառների մեջ, ջրի համար թափանցելի ծակոտիներ ունեցողների հետ մեկտեղ (ավազներ, ավազաքարեր, կրաքարեր և այլն), կան նաև վատ թափանցելի կամ էլ ջրամերժ տեսակներ (կավեր, սուզինկաներ և այլն): Վերջիններս ջրերի հետագա շարժման համար արգելք են ստեղծում և նրապաստում շերտերի միջև ջրաթափանց ապառների, այսպես կոչված, ջրատար հորիզոնների կազմավորմանը: Ապառների շերտերը երկրի կեղևի մեջ ամեն տեսակ ծալքերի բարձրացում և իջեցվածք են առաջացնում, և այդ ապառների մեջ հավաքված ջուրն անցնում է նրանց միջով:

Ճեղքվածքային ջրերը հավաքվում են գրանիտի, պորֆիրիտի, սիենիտի և այլ ժայթքած ճեղքվածքային լեռնային ապառների մեջ: Ջրերն այդ ապառներում կարող են տեղափոխվել միայն հաղորդակից ճեղքերի միջով. այդ պատճառով էլ նման ապառների ջրատարությունը ամբողջովին կախված է նրանց ճեղքվածքայնությունից: Ճեղքվածքների առաջացումը շատ բազմազան է լինում: Լեռնային ապառների մակերևույ-

թալին գոտում առաջացած ճեղքվածքների մի մասը հետևանք է հողմահարության պրոցեսների ներգործության։ Ճեղքվածքների մի մասն էլ առաջացել է անցյալ լեռնակազմական պրոցեսների շնորհիվ տեղի ունեցած ճնշման աղղեցության տակ։ Նրանց մեջ աշքի են ընկնում շատ խոշոր ճեղքեր և կոտրվածքների ամբողջ գոտիներ, որոնց հետ են սովորաբար կապված ստորերկրյա մեծաքանակ ջրերի ելքերը։

Ստորերկրյա ջրերի մեջ իրենց տեղակայման պայմաններով տարրերվում են վերնաջրերը, գրունտային և արտեղյան ջրերը։

Առաջինները երկրի մակերևույթին մոտ հավաքվող ստորերկրյա ջրերն են։ Դրանք առաջանում են ինչպես փիրուն ծակոտկեն նստվածքներում, այնպես էլ ամուր լեռնային ապառների հողմահարված մասներում։ Այդ ջրերի ռեժիմը ենթակա է կտրուկ տատանումների և կապված է անձրևների հետ։ Չոր ամառները դրանք կարող են անհայտանալ։

Գրունտային ջրերը մակերևույթից հետո եկող առաջին շրատար հորիզոնի ջրերն են։ Դրանք արտամղից ուժ չունեն, սնվում են մթնոլորտային տեղումներով, գետերի կամ մեծ խորություններից ելնող ջրերով։ Գրունտային ջրերի տեղակայման խորությունը կախված է կլիմայից և հողի մակերեսային շերտերի կառուցվածքից։ Չորային շրջաններում, անապատներում գրունտային ջրերը սովորաբար մեծ խորություններում են լինում։

Արտեղյան ջրերը ավելի մեծ խորություններում են դունվում և ծածկված են լինում ջրամերժ շերտերով։ Եթե գրունտային ջրերը կապված են բնության մեջ ջրի ժամանակակից շրջապույտի հետ, ապա արտեղյան ջրերը կարող են և երկրի մակերեսի հետ կապ շունենալ և հնադարյան վաղութաղված ջրեր լինել։ Այդ ջրերը ճնշում ունեն և փորելիս շտորվանում են։ Արտեղյան ջրերը առանձին արտեղյան ավազաններ են առաջացնում։ Հայկական ՍՍՌ տերիտորիայում արտեղյան մեծ ավազան է հանդիսանում Արարատյան դաշտավայրն իր շրատար շերտերի ափսեածե դասավորությամբ, որոնք միմյանցից բաժանված են կամի շերտերով։

Քանի որ շրատար հորիզոնները սնվում են լեռների շըռ-

շանակի մեջ, որոնք շրջափակում են հովիտը, նրանց ջուրը հովտում ճնշման տակ է գտնվում և հորատող մեքենաներով փորելու դեպքում շատրվանում են (հաղորդակից անոթների օրենքի հիման վրա):

Ճնշում ունեցող ջրերը կարող են և ճեղքվածքային լինել, որոնք հարմարվում են լեռնային ապահների բարդ սիստեմի ճեղքվածքներին և կոտրվածքներին:


Ստորերկրյա ջրերի բնական ելքը դեպի երկրի մակերեսից կոչվում է աղբյուր կամ ակ, որոնք լինում են վար իջնող կամ վեր ցայտող: Առաջինները գրումտային ջրերի ազատ հոսքի հետևանք են: Մյուսները դեպի վեր են շատրվանում հիդրոստատիկ ճնշման տակ (ջրերի սննման և ելման վայրերի բարձրությունների տարրերության): Կամ էլ ջրի գոլորշիների և նրանում տարրալուծված գազերի ճնշման տակ: Ստորերկրյա ջրերի արհեստական բացահայտումը տեղի է ունենում հորերի և հորատանցքերի միջոցով: Կան գրումտային և արտեզյան ջրհորներ:

Աղբյուրներն առաջանում են այն դեպքում, երբ ջրաբեր շերտը կամ ճեղքվածքը, որոնցով շրջապտույտ են կատարում ստորերկրյա ջրերը, էրոզիայի պատճառով հատվում է երկրի մակերեսի հետ: Այդ պատճառով էլ երիտասարդ լեռնային երկրներում աղբյուրների առատություն ևնք տեսնում: Եթե հարթավայրային շրջաններում ստորերկրյա ջրով ստանալու համար ջրհորեր և հորատանցքեր են բացում, ապա լեռնային շրջաններում այդ դերը կատարում են գետերը, կիրճերը (նկ. 11): Երբ գետերը երկրի մակերեսությը ողողելով, հասնում են ջրաբեր հորիզոնին, կիրճի լանջերին աղբյուրներ են առաջանում: Այսպես, օրինակ, Հայաստանի լավային հեղեղները կտրող խոր կիրճերի կողերին, մեծ տարածության վրա, աղբյուրների բազմահարկ մի շղթա է ստեղծվել: Դրանց առաջացման պատճառն այն է, որ գետերը, լավային ծածկությունները սղոցելով, ճանապարհ են բացել լավային տակ թաքնված չրի հոսանքների համար: Ինքը սարահարթը, ջրազուրկ է և ջուր հայթայթելու համար պետք է հորատանցքեր բանալ:

Հանքային ջրերը ստորերկրյա ջրերի մի տարատեսակն են: Այն բոլորը, ինչ ասվել է քաղցրահամ ջրերի կուտակ-

ման և երկրի մակերես ելնելու մասին, վերաբերում է նաև հանգային ջրերին, Հանքային ջրերի տարբերիչ նշանները նրանց ֆիզիկո-քիմիական հատկություններն են:

Մենք գիտենք, որ մաքուր ջրի քիմիական ֆորմովան  $H_2O$  է, Այդ նշանակում է, որ ջուրը բաղկացած է ջրածնից և թթվածնից: Սակայն, բնության մեջ մաքուր ջուրը գոյություն չունի: Որքան էլ անձրևաջուրը իդեա ական մաքրություն ունենա, այնուամենայնիվ, այն անցնելով օդի շերտերով, իր մեջ տարրալուծում է փոշու մասնիկներ ու մթնոլորտային գազեր և գետին է թափվում արդեն անմաքուր վիճակում:



Նկ. 11. Ջրի բնական և արհեստական ելքի սխեման: I—Ջրի արհեստական ելքը (ջրհոր, հորատանցք), II—Ջրի բնական ելքը ձորում, կիրճում: 1—վերին հորիզոնը (ջրադուրկ), 2—ջրատար հորիզոնը, 3—ջրամերժ հորիզոնը, 4—աղբյուրի ելքը:

Հայտնի է, որ սննդընաջուրը մեծ քաղաքի շրջագծում թափելով հողի վրա, այլ բաղադրություն է ոմենում, քանի բնակավայրից հեռու թափիվող անձրևաջուրը: Այդ դեպքում ինչ ասել երկրի կեղևի մեջ եղած ջրի մասին, որը լեռնային տպառների հետ միշտ փոխադրեցության մեջ է գտնվում: Բնական ջուրը մի լուծույթ է, որը ամենատարբեր բաղադրություն և տարրալուծված նյութերի բազմատեսակ կոնցենտրացիա ունի:

Մեր երկիրը նման է մի հոկա քիմիական լաբորատորիայի: Նրանում անընդհատ ֆիզիկական և քիմիական պրոցեսներ են տեղի ունենում, ընդ որում ջուրը բացառիկ գեր է կատարում: Զրում գործնականորեն լուծելի են առանց բա-

ցառության բոլոր էլեմենտները։ Զուգը նրանց տաճում՝ և, նա ապառները և հանքանյութերը քայքայում է և նորերը ստեղծում։ Ոչնչացնելով էլեմենտների մի միացություն, այն կյանքի է կոշում մի ուրիշը։

Հանքանյութերն ու լեռնային ապառները, որոնք սովորաբար անտարրալուծելի են համարվում, երկրի կեղեխ ջրերի մեջ ձևափոխվում և տարրալուծվում են բարձր ջերմաստիճանների, ջրում տարրալուծված գազերի, ջրի հսկայական դանդվածների ճնշման տակ և երկարատևության շնորհիվ։

Իզուր շեն ասում, որ բնությունը ավելի համառորեն և հաջողությամբ է աշխատում, քան բնախույզն իր լաքորատորիայում։

Բնական ջրերի բաղադրության ձևավորման մեջ մասնակցում են լեռնային ապառների հողմահարումը, օքսիդացումը, իոնային փոխանակությունը, բնական գազերի գերահագեցումն ու անջատումը, օրդանական կյանքի գործունեությունը և ջրի փոխազդեցությունները լեռնային ապառների, գազերի և միջանց հետ։

Ջրում տարրալուծված աղերի քանակը մի քանի տասնյակ միլիգրամից (մաքուր ենթալավային աղբյուրներ, որոնք երկանը սնում են ջրով) տատանվում է մինչև հարյուրավոր գրամների (աղաջրեր, որոնք հողմնահարում են աղերի նըստվածքները): Ջրում տարրալուծված աղերի կազմում հայտնաբերվել է քիմիական տարրերի մեծ մասը։

Մենք գիտենք, որ երկրի կեղեկի մեջ կա մեծ քանակությամբ թթվածին, սիլիցիում, ալյումինիում, երկաթ, կալցիում, նատրիում, կալիում, մագնիում և ջրածին։ Այս ինք էլեմենտները կազմում են երկրի կեղեկի 98 տոկոսը։ Քիմիական մյուս էլեմենտներին մնում է, հետազոտության համար մատշելի, երկրի կեղեկի 2 տոկոսը։ Այս էլեմենտները կոչվում են միկրոէլեմենտներ։

Բնական ջրերի բաղադրության մեջ մակրո և միկրոէլեմենտների փոխհարաբերությունը փոփոխության է ենթարկվում։ Այսպես, օրինակ, ջրում տարրալուծված նյութերի հիմնական մասսան, կալիումի, նատրիումի, կալցիումի, մագնիումի, թթվածնի հետ միաժամանակ կազմում են քլորը,

ծծումբը, ջրածինը և ածխածինը, իսկ այնուհետև ազոտը, երկաթը և ալյումինիումը, որն արդեն շատ ավելի փոքր քանակությամբ է հանդիպում։ Այս տարրերի խումբը բնական մակրոկոմպոնենտներն են։

Քիմիական տարրերի հետեւյալ խումբը, որը ջրերում քիչ է հանդիպում, այն էլ շատ փոքր քանակությամբ, կազմում են լիթիումը, ոռուբիդիումը, ստրոնցիումը, բարիումը, կապարը, նիկելը, ցինկը, մանգանը, պղինձը, բրոմը, յոդը, ֆլորը, բորը, ֆոսֆորը և մկնդեղը։ Տարրերի մի երրորդ խումբ էլ կա, որ բնական ջրերի մեջ շատ հազվադեպ է հանդիպում։ Համենայն դեպս, պետք է այն հիշատակել։ Այդ քրոմն է, կորալտը, տալիումը, ուրանը, ինդիումը, գալլիումը, գերմանիումը, ցերիումը, ցիրկոնիումը, տիտանը, վաննադիումը, սնդիկը, բիսմուտը, կադմիումը, վոլֆրամը, սելենը, թելլուրը, մոլիբդենը, արծաթը, ոսկին, պլատինը, անագը և անտմոնը։ Հատուկ խումբ են կազմում ջրին ուղղիուակտիվություն հաղորդող տարրերը՝ ուղիումը, թորիումը, ուղոնը և այլն։

Երկրի կեղեկի մեջ չկա մի ջուր, որի լուծույթում որևէ գագ չինի։ Բնական ջրերն առանց գազի աներևակայելի են։ Այդ, թերևս, թթվածինն է կամ ածխաթթու գազը, ազոտը, մեթանը, ծծմբաջրածինը և ջրածինը։ Մրանք ջրային լուծույթների մեջ մեկ լիտրում հազիվ նկատելի քանակությունից մինչև մի քանի գրամ են լինում։

Վերջապես, բնական ջրերը, երկրի կեղեկի մեջ (ինչպես նկատեցինք, այդ հսկա և ամենաբարդ լաբորատորիայում) շրջապտույտ կատարելով, թափանցում են տարրեր խորություններ և ընկնելով տարրեր պայմանների մեջ, տարրեր շերմաստիճաններ են ձեռք բերում։

Մենք գիտենք, որ երկիրը դրսից տաքանում է արևի միջոցով և նրա մակերեսային շերտի շերմաստիճանը, ինչպես օրերի, այնպես էլ տարվա ընթացքում, տատանումներ է ունենում։ Որքան խորն ենք թափանցում երկրի խորքը, այդ տատանումներն այնքան ավելի քիչ են զգացվում և վերջապես հասնում ենք կայուն շերմությունների շերտին։ Այս-տեղ, ինչոր խորության վրա, որը տարրեր տեղերի համար տարրեր է լինում, երկրի շերմաստիճանը կայուն է և արդեն

կախված չէ երկրի մթնոլորտում տեղի ունեցող երևոյթներից: Այդ շերտից ցած երկրի կեղեի ջերմաստիճանը ենթակա է միայն երկրի ընդերքի ջերմության ազդեցությանը: Այստեղ ջերմությունը խորության հետ միասին սկսում է որոշակի կարգով աճել: Հետազոտովներն այդ երևոյթին հանդիպել են հանքահորերի և հորատանցքերի մեջ: Մետրերի այն քանակը, որի առկայության դեպքում ջերմաստիճանն աճում է մեկ աստիճանով, կոչվում է գեոթերմիկ աստիճան: Նորմալ գեոթերմիկ աստիճանը հավասար է 33 մետրի: Այդ նշանակում է, որ յուրաքանչյուր 33 մետր խորանալով, հորատանցքում ջերմությունը մեկ աստիճանով բարձրանում է:

Երիտասարդ հրաբխային շրջաններում, ուր դեռևս նկատելի է հրաբխային օջախների ջերմությունը, այդ թիվը շատ նվազում է: Հասկանալի է, որ տարբեր շրջաններում և տարբեր խորություններից երկրի մակերևույթ ելնող ջրերը նաև տարբեր ջերմաստիճան ունեն:

Հանքային ջրերը վերը թվարկված հատկություններում իրենց առանձնահատկություններն ունեն: Նրանք սովորական ջրից տարբերվում են ամենից առաջ և գլխավորապես օրգանիզմի վրա թողած իրենց բուժիչ ազդեցությամբ և բնորոշվում են իրենց յուրահատուկ հատկանիշներով ու նրանց համակցություններով:

Հանքային ջրերի առաջին հատկանիշը նրանցում տարրաւուծված աղերի մեծ քանակությունն է: Այն պետք է մեկ լիտրում մեկ գրամից ավելի լինի:

Սովորական ջրից հանքային ջրերի նման տարբերակումը բավական պայմանական է, քանի որ օրգանիզմի վրա բուժար ներգործություն ունեցող ջրերը հաճախ շատ ավելի քիչ հանքայնացում են ունենում, իսկ շատ բարձր հանքայնացում ունեցողները նման հատկություններ չունեն: Վերջիններս աղերի արդյունաբերության հանույթի համար երբեմն որպես հումույթ են ծառայում և հանքայնացված ջրեր անուան են կրում:

Հանքային ջրերի երկրորդ հատկանիշը այդ այն էր, որ նրանք բարձր քանակի միկրոէլեմենտներ են պարունակում, ինչպես բրոմը, յոդը, ֆոտորը, մկնդեղը, երկաթը, լիթիումը և

այլն։ Նման ջրերը սպեցիֆիկ բուժիչ հատկություններ ունեն և բրոմային, յոդային, յոդա-բրոմային, ֆտորային, մկնդեղային, երկաթային, լիթիումային և այլ հատուկ անուններ են կրում։

Այսպես, օրինակ, հայտնի են Հարավային Դաղստանի, Աղբքեջանի, Թուրքմենստանի, Ռուբեկստանի, Ավստրիայի Գալ առողջարանի, Ռումինիայի և այլ վայրերի յոդաբրոմային աղբյուրները։ Ֆտորը հայտնաբերվել է Կառլովի Վարիի, Վիշիի և Աախենի ջրերում։

Լիթիումային ջրեր կան Հյուսիսային Ղազախստանի և Աւղբեկստանի թերմալ ջրերի մեջ, արտասահմանում՝ Նառչեյմում, Զալցմազիորում, Ֆրանցիսբադում և այլուր։ Մկնդեղային ջրերը հանդիպում են Նախիջևանի ավտոնում մարզում (Դարիդաղ), Երկաթ-մկնդեղային ջրերը Հարավային Տիրոլում և այլն։

Հայկական ՍՍՌ-ում հատուկ բաղադրություն ունեցող ջրեր չկան։ Սակայն, Հայաստանի հանքային ջրերում նկատվել են զգալի քանակությամբ առանձին միկրոէլեմենտներ, հատկապես, սիլիցիում։ Մի շարք աղբյուրներ (Դիլիջան, Հանքավան և այլն) մեծ քանակությամբ երկաթ են պարունակում, շատերն էլ (Զերմուկ և այլն) յոդ, բրոմ, ֆտոր։

Հանքային ջրերի երրորդ հատկանիշը նրանցում տարրալուծված գազերի՝ ածխաթթվի, ծծմբաջրածնի, թթվածնի, մեթանի, ազոտի, զգալի քանակությունն է, որի հետ կապված տարրերակվում են ածխաթթվային, ծծմբաջրածնային, թթվածնային, մեթանային և այլ ջրերը։ Սովորական ջրերում այդ գազերը հազիվ նկատելի քանակով են տարրալուծվում, չնայած որ միշտ էլ գոյություն ունեն։

Հանքային ջրերում տարրալուծված և ազատ կերպով նրանցից անջատվող գազերը մեծ նշանակություն ունեն հանքային ջրերի բուժիչ հատկությունները գնահատելիս։ Հանքային ջրերից ամենաբնորոշներն ու արժեքավորները ածխաթթվային և ծծմբաջրածնային տիպերն են։ Հայկական ՍՍՌ ողջ տերիտորիայում հիմնականում տարածված են ածխաթթվային ջրերը և միայն կենինականի գոգավորությունում են հանդիպում ածխաթթվա-ծծմբաջրածնային ջրեր։

Հանքային ջրերի շորրորդ (ցանկալի) հատկանիշը ուղիուակտիվ էլեմենտների առկայությունն է:

Հանքային ջրերի հինգերորդ հատկանիշը նրանց ֆիզիկական հատկությունների և քիմիական բաղադրության գործական կայունությունն է:

Վեցերորդ հատկանիշը բարձր ջերմաստիճանն է (ոչ միշտ), որը հասնում է 20 և ավելի:

Այդ, այսպես կոչված, թերմալ ջրերի ջերմաստիճանի բարձրացման պատճառը կամ նրանց մեծ խորություններից կամ էլ համեմատաբար ոչ խոր, բայց երիտասարդ հրաբխայնության ազդեցությունը կրող գոտիներից ենելն է, երբ հրաբխությունը տաքացրած է լինում նրանց շրջապատող լեռնային տպառները:

Սուազներում թերմալ ջրերի գոյությունը անպատճառ կապվում էր ոչ վաղ հրաբխային գործունեության շրջանների և նրանց օջախների ազդեցության հետ: Վերջին տարիներս արտեզյան ջրավազաններում հորատման միջոցով ստացված մեծ խորություններից արտեզյան թերմալ ջրեր հայտնաբերվեցին:

Հանքային աղբյուրներն իրենց ջերմաստիճանով բաժանվում են չորս խմբի. 1. սառը 20-ից ցածր ջերմաստիճանով. 2. սուքթերմալ (գոլ) 20-ից մինչև 37 ջերմաստիճանով, 3. թերմալ (տաք) 37-ից մինչև 42 ջերմաստիճանով և, վերջացպես, 4. հիպերթերմալ (շատ տաք) 42-ից բարձ ջերմաստիճանով:

Սովորական քաղցրահամ ջրերը մեծ խորություններ չեն թափանցում և նրանց ջերմաստիճանը երբեք 20-ից շի անցնում: Բացի դրանից, 20-ից բարձր ջերմաստիճան ունեցող ջրերը միշտ տարրալուծված նյութերի մեծ քանակություններ պարունակում, քանի որ բարձր ջերմաստիճանը մեծացնում է նրանց հողմնահարիչ հատկությունը:

Այսպիսով, հանքային ջուր է կոչվում բնական այն ջուրը, որը օրգանիզմի վրա ֆիզիոլոգիական և թերապևտիկ ազդեցություն է թողնում, բուժելով զանազան հիվանդություններ (աղեստամոքսային, երիկամային, փոխանակության, կանացի, ումատիկ, մասամբ թոքային և այլն) և բարձրացնե-

լով օրդանիզմի ընդհանուր տոնուած, դրանով իսկ նպաստում է նրա հանգստանալուն և առողջացմանը։ Օրդանիզմի վրա նրա թողած ազդեցությունը հետևանք է զրում տարրալուծված նյութերի, գաղերի, առանձին սպեցիֆիկ միկրոտարրերի զգացի պարունակության, հաճախ բարձր շերմաստիճանի կամ ռադիոակտիվության զգալի համակենտրոնացման։ Հանքային զրերը ամենից հաճախ ելնում են մեծ խորություններից և երկար ու բարդ ուղիներ անցնում։

Հայաստանում, ինչպես և ողջ Փոքր Կովկասում տարածված ածխաթթվային զրերը միշտ հավաքվում են երկրի կեղևի խոշոր կոտրվածքներում և համեմատաբար ոչ վաղ հրաբխային օջախներում։ Այս շրջաններում ածխաթթու գազը հանգչող հրաբխային գործունեության վերջին շումն է։ Իր գերտաքացման հետևանքով այն անջատվում է նաև կրային հզոր շերտերից։

Ստորերկրյա չուրը, հանդիպելով խորություններից եկող ածխաթթվային գաղերին, ճնշում է ձեռք բերում և մեծացնում իր տարրալուծող հատկությունը։ Այն փոխազդեցության մեջ է մտնում իր ճանապարհին հանդիպող բոլոր ապառների հետ։

Որքան տարբեր են երկրի մակերեսային թաղանթը կազմող լեռնային ապառները, նրանց պարունակած աղերը, այնքան էլ տարբեր է երկրի վրա սփռված անհամար հանքային աղբյուրների քիմիական բաղադրությունը։

Դեռևս մեր թվարկության 2-րդ դարում, Պլինիուս Կըրտսերը հետևյալ միտքն է հայտնել. «Զրերն այնպիսին են, ինչպիսին ապառներն են, որոնցով նրանք հոսում են»։ Բայց քանի որ այստեղ դեր է կատարում նաև այս պրոցեսի պատմությունը, երկրաբանները գտնում են, որ հանքային զրերի քիմիական բաղադրատությունը արտացոլում է տվյալ շրջանի երկրաբանական պատմությունը։ Կոպիտ ասած, եթե տվյալ վայրում տարածված են կրաքարերը, զրերը կրային բաղադրություն են ձեռք բերում, եթե աղի հանքեր են, հայտնվում են աղային աղբյուրները։ Իսկ այստեղ, որտեղ տարածված են դոլոմիտները, առաջանում են մագնիումային աղբյուրները։ Այն շրջանները, որոնք կազմված են երկաթի ենթօքսիդներով

Հարուստ աղեր պարունակող ապառներով, հնարավոր են երկաթ պարունակող աղբյուրները։ Դիպսով հարուստ վայրերում հանդիպում են ծծմբային աղբյուրներ և այլն։ Այսպես, Հայկական ՍՍՌ Տաթևի կրային հանքային ջրերը կապված են կրաքարային հզոր զանգվածների տարրալուծման հետ, Արդնու աղա-հիմքային հանքային աղբյուրները և Դվինի աղային ջրերը աղի մեծ կուտակումների, Կարդգանի մագնիումային ջրերը դոլոմիտների հողմնահարման հետ և այլն։ Հանքային ջրերում առանձին միկրոէլեմնտների մեծ քանակությունը հաճախ կապված է լինում տվյալ շրջանում մետադահանքների առկայության հետ։

Հանքային աղբյուրներն իրենց ելքի մոտ նստվածքներ են տալիս. այդ պատճառով էլ նրանցից շատերը նույնիսկ հեռվից տեսանելի են լինում։ Դրանք երկաթի նարնջա-կարմրավուն հիդրօքարտներն են և սպիտակ ածխաթթվային կիրը, այսպես կոչված տրավերտինը։

Առաջիններն առաջանում են օդի թթվածնի ներգործությամբ, հանքային ջրում տարրալուծված երկարժեք երկաթի օքսիդացման հետևանքով և վերածվելով ջրում շուծվող եռարժեք երկաթի, ժանդի ձևով նստվածք են տալիս։ Նման ժանդի փոքր քանակով երեսան գալը կարելի է տեսնել կեղեկից մաքրված խնձորի, կարտոֆիլի, բաղրջանի և այլ մրգերի ու բանջարեղենի վրա։ Շատ բանջարեղեններ և մրգեր կեղեկից մաքրելուց հետո, երկարժեք երկաթը օքսիդանում է, փոխանցվելով եռարժեքի, որի հետևանքով մաքրված մրգերի ու բանջարեղենի մակերեսը բաց-դարշնագույն երանդ է ստանում։

Տրավերտինի առաջացումն ընթանում է այլ ճանապարհով։ Շատ շրջանների բնակիչներին լավ հայտնի է այն նըստվածքը, որը թեյնիկի պատերին է առաջանում ջուրը եռացնելիս։ Այս երեսուցի բնույթը հետեւյալն է։ Յուրաքանչյուր ջուր ածխաթթվային կիր է պարունակում։ Ջուրը եռացնելիս, ածխաթթուն նրանից անջատվում է, կիրն ազատվելով լուծույթից նստում է թեյնիկի պատերին։ Վերջինս սովորաբար նկատվում է, այսպես կոչված, «կոշտ ջրերում», որոնք մեծ քանակությամբ ածխաթթվային կիր են պարունակում։ Բարեբախտաբար, երեանի ջրում այդ բացակայում է, քանի որ

Երեանի «փափուկ» զուրն իր մեջ շատ քիչ տարրալուծված նյութեր է պարունակում:

Եռմանը նմանվող պրոցես է տեղի ունենում նաև այն հանքային աղբյուրների երկրի մակերևույթ ելնելու ժամանակ, որոնք հարուտ են ածխաթթվային կրով: Ճնշման անկման շնորհիվ ջրից անջատվում է ավելորդ ածխաթթուն, համասարակշությունը խախտվում է և կիրը աղբյուրի ակունքի շուրջը տրավերտինի նստվածքներ է առաջացնում:



Նկ. 12. Տրավերտինի նստվածքները հանքային ջրի ելքի մոտ  
Լուսանկար՝ Ն. Ի. Դոլուխանովայի

Հայկական ՍՍՌ-ում տրավերտինը ուղեկցում է գրեթե բոլոր հանքային ջրերին (Նկ. 12): Արդի առողջարանի ձախ ափը կազմված է տրավերտինի մեծ վահանից: Արարատի հանքային աղբյուրներից ելած տրավերտինը ամբողջ մի սար է առաջացրել, որի բազայի վրա արդեն երկար տարիներ է, ինչ աշխատում է Արարատի ցեմենտի գործարանը:

Տաթեի, հանքային աղբյուրների շրջանում հայտնի է Սատանի կամուրջը, որը առաջացել է տրավերտինից:

Ահա, թե ինչպես է այդ կամուրջը նկարագրում Լ. Ա. Հովհաննիսյանը. «Սատանի կամուրջը բնության կողմից գետի վրայով գցված մի կամուրջ է, որի ձևավորման մեջ մասնակցել և մասնակցում են կրային միացությունները, որոնք առատությամբ նստում են աղբյուրների շրջանում և նյութեր տալիս ստալակտիդային գեղեցիկ գոյացումների համար»<sup>1</sup>:

Կիրը (կալցիումի կարբոնատը) սովորաբար տաք ջրերից անջատվում է բյուրեղացած վիճակում, կալցիտի և արագոնիտի բյուրեղների ձևով։ Արագոնիտի կուտակումները օնիֆսածի մարմարի անունն են ստացել։ Այդ մարմարը շատ գեղեցիկ է և օգտագործվում է որպես դեկորատիվ նյութ։ Այսպես, օրինակ, Աղամզալուի կանաչավուն մարմարով է Երեսպատված Մոսկվայի մետրոյի Կիևյան կայարանը։ Նման մարմար կանակ Հանքավանի և Զերմուկի աղբյուրների ելքի մոտ, մի քան, որը նրանց երեմնի բարձր ջերմաստիճանի համը վկան է։

Մենք արդեն ասացինք, որ հանքային աղբյուրներն իրենց քիմիական բաղադրությամբ շատ բազմազան են լինում։ Ի՞նչպես կողմնորոշվել այսքան բարդ մի տնտեսության մեջ։ Ի՞նչպես դասակարգել հանքային ջրերը։

Գոյություն ունեն հանքային ջրերի բազմաթիվ քիմիական դասակարգումներ։ Ներկա ակնարկում այս կամ այն հանքային ջրի տիպը նշելիս մենք կհենվենք նրա 6 հիմնական բաղադրիչ աղերի վրա. անիոնների՝ քլոր (Cl<sup>-</sup>), հիդրոկարբոնատ (HCO<sub>3</sub><sup>-</sup>), սուլֆատ (SO<sub>4</sub><sup>2-</sup>) և կատիոնների՝ նատրիում (Na<sup>+</sup>). Կալցիում (Ca<sup>2+</sup>) և մանգան (Mg<sup>2+</sup>): Զրում այս կամ այն կատիոնների և անիոնների գերակշռությունն էլ հենց որոշում է այս կամ այն տիպը։

Զրերի քիմիական տիպերի սահմանման մեջ մյուս կոմպոնենտները վճռական նշանակություն չունեն։ Բիոլոգիապես ակտիվ միկրոէլեմենտները նշվում են ամեն մի առանձին դեպքում։

<sup>1</sup> Л. А. Оганесов, Минеральные источники Армении, Ереван, 1936.

Հիդրոկարբոնատային-քլորիդային, նատրիումային ջուր  
ասելով նկատի ունենք, որ այդ ջրում անիոնների մեջ նախ  
գերակշռում է հիդրոկարբոնատը ( $\text{HCO}_3^-$ ), այնուհետև քլորը  
( $\text{Cl}^-$ ): Կատիոնների մեջ՝ նատրիումը ( $\text{Na}^+$ ): Աղային կազմի  
կոմբինացիայի մեջ այդ ջրի հիմնական բաղադրիչները երկած-  
իսթթվային սողան է ( $\text{NaHCO}_3$ ) և կերակրի աղը ( $\text{NaCl}$ ):  
Հանքային ջրերի քիմիական հին դասակարգմամբ նման ջուրը  
կոչվում էր աղա-հիմքային:

Հիդրոկարբոնատային, նատրիում-կալցիումային ջուր՝  
ասելով նկատի ունենք, որ այդ ջուրը անիոններից գերա-  
կշռում է հիդրոկարբոնատը ( $\text{HCO}_3^-$ ), իսկ կատիոններից՝  
նատրիումը ( $\text{Na}^+$ ) և կալցիումը ( $\text{Ca}^{++}$ ): Աղային կազմի միա-  
ցությունների մեջ այդ ջրում պետք է լինի երկածխաթթվային  
սոդան ( $\text{NaHCO}_3$ ) և ածխաթթվային կիրը ( $\text{CaHCO}_3$ ): Հին-  
գասակարգմամբ այդ ջուրը կոչվում էր կրա-հիմքային:

Համակենտրոնացումից և այլս:

Այդ ջրերի բուժիչ հատկություններն ամեն անգամ՝ բժիշկ-ների կողմից վերջնականապես բացահայտվում են միայն հիվանդների վրա կատարված երկարատև կլինիկական ուսումնասիրություններից հետո։ Կլինիկապես լավ հետազոտված ջրերի համար սահմանվում է խմելու դոզա և վաննաներ ընդունելու ռեժիմ։ Յուրաքանչյուր հիվանդի համար այդ դոզաները վերանայվում են։ Հանքային ջրերը օրգանիզմի վրա շատ ուժեղ ազդեցություն են թողնում, և առանց բժշկի խորհրդի նրանց ընդունումը հղի է ծանր հետևանքներով։

Հանքային ջրերն իրենց բուժիչ նշանակությունից բացի, ժողովրդական տնտեսությանն ի՞նչ օգուտ կարող են բերել:

Օրինակ, նրանք կարող են օգտագործվել սննդարդյուսաբերության մեջ հեղուկ ածխաթթու ստանալու համար։ Նրանց բազայի վրա կարող է կազմակերպվել արդյունաբերական

Հումուլի առանձին տեսակների ստացումը։ Ինչպես արդեն տեսանք, նրանք կարող են զանազան օգտակար հանածոների որոնման համար հիանալի հատկանիշ լինել։

Այսպես, օրինակ, Արդնու հանքային ջրերի քիմիական բաղադրությունը առիթ տվեց Ա. Պ. Դեմյոխինի այն տաղանդավոր կանխագուշակմանը, որ Երևանի շրջակայքում քարաղի խոշոր հանքեր կան։ Հանքային ջրերն անգնահատելի օգնություն կարող են ցուց տալ նաև շրջանի երկրաբանական կառուցվածքը որոշելիս։ Նրանց ելքերով հետազոտվում են խոշոր ճեղքվածքային խախտումները (Զերմուկի, Հանքավանի կոտրվածքները և այլն)։

100 և ավելի բարձր ջերմաստիճանի հասցված թերմալ ջրերը կարող են կիրառվել էներգետիկ նպատակներով ուժացին մեքենաներին գոլորշի մատակարարելու համար, ինչպես այդ արվում է իտալիայում, Իսլանդիայում, Նոր-Ջելանդիայում, Կամչատկայում և այլուր։ Ավելի ցածր ջերմաստիճան ունեցող ( $50^{\circ}$ — $80^{\circ}\text{C}$ ) ջրերը կարող են օգտագործվել ջերմոցային տնտեսության մեջ, շենքերի ջեռուցման համար և այլն։ Ճուր շէ, որ Իսլանդիայի մայրաքաղաք Թեյկյավիկը «անծովի մայրաքաղաք» անունն է ստացել, որովհետև նրա քաղաքային և արդյունաբերական ողջ տնտեսությունը սնվում է տաք ջրերով։

Ամեն ոք, ով գիտե, թե ինչպիսի ծխով է պարուղված լինում Երևանը ձմռանը ջեռուցման շրջանում, և այդ որքան վնասակար ազդեցություն է թողնում բնակիչների առողջության վրա, նա կարող է պատկերացնել, թե ինչ կնշանակեր Երևանի քաղաքային տնտեսության մեջ այդ «անծովի» վառելիքի օգտագործումը։ Հայաստանն ընդհանրապես աղքատ է վառելանյութից։ Տաք ջրերի խոշոր պաշարների հայտնաբերումը (իսկ Հայաստանի ընդերքում անշուշտ այդ կա), շատ կենսական հարցեր կլուծեր։ Այսպես, օրինակ, այժմ իսկ Զերմուկի ջրերը կարող են օգտագործվել կուրորտային շենքերի ջեռուցման համար, որը նրան հնարավորություն կտար ողջ տարին գործելու և այնտեղ ջերմոցային տնտեսություն ստեղծելու։

Այժմ մեզ մնում է ևս մեկ հարցի պատասխանել, ի՞նչպես

է պահպանվում հանքային ջուրը: Ի՞նչպես է պաշտպանվում նրա մաքրությունը կողմնակի խառնուրդներից և այլ ջրերից, մի բան, որը կարող է նրան զրկել իր բուժիչ հատկություններից: Այս տեսակետից ամենամեծ վտանգը նրան սպառնում է ելքի մոտ: Աղբյուրի պահպանման համար կիրառվում է, այսպես կոչված, ջրի կապտաժը: Ինչ է նշանակում այդ:

Բատ Ա. Ն. Օգիլվիի «աղբյուրը կապտաժի ենթարկել նշանակում է նրա վրա մի շարք աշխատանքներ տանել, որոնց արդյունքները մեզ հնարավորություն կտային նպատակահարմար կերպով օգտագործել նրա, մեզ համար օգտակար, բոլոր հատկությունները<sup>1</sup>:»:

Կապտաժն ամենից առաջ, հիդրոտեխնիկական կառուցվածք է, հաճախ էլ շատ բարդ: Հիմնականում այն աղբյուրի բնական ելքի շրջանում փորված ջրհոր է, հորատանցք կամ սրահ, Հաճախ կապտաժները սրահի և ջրհորի, ջրհորի և հորատանցքի զուգորդումներ են լինում:

Կապտաժը ջրի բնական ելքը փոխարինում է արհեստականով: Բնական ելքը սովորաբար լինում է հողի մեջ, նըստվածքներում, ուր հանքային ջուրը բաժանվում է մի քանի ելքերի և խառնվելով այլ ջրերի հետ, հեղտությամբ կեղտուվում: Կապտաժային կառուցվածքը հասցվում է արմատական ապառներին և զլիավոր ջրաբեր ճեղքվածքին: Երբ հանքային ջուրը սկսում է կապտաժի միջով հոսել, նրա մնացած մասը բետոնապատվում է:

Կառուցվածքի գլխամասում ամորտիզատորներ են դըրվում, ջրի հոսքը կարգավորելու և այն հսկողության ենթարկելու նպատակով հատուկ մղիչներ և սարքեր, իսկ մեծ քանակությամբ գազ պարունակող աղբյուրների համար սիֆոնիկներ, գազանջատիչներ, մանումետրային խողովակներ և այլն: Ջրատար խողովակները պատրաստելիս հաշվի են առնըգուստ հանքային ջրի յուրահատկությունները: Խողովակները պետք է ձուլվեն թուղից, անագից, բրոնզից կամ մելքիորից:

Կապտաժը աղբյուրի ջուրը հասցնում է այն օգտագործելու համար ընտրված ամենից հարմար վայրը: Կառուց-

1 А. Н. Огильви, Каптаж нарзана и его история, Труды Геол. Ком. Нов. сер., вып. 58, СПБ, 1911.

վածքի գլխավոր մասը գետնի վրա է լինում, տեղանքի լանդ-  
շաֆտի համաձայն, այն գեղեցիկ ձևավորվում է, իհարկե,  
հաշվի առնելով ազգային ճարտարապետության առանձնա-  
հատկությունները:

Հայաստանում հանքային ջրերը գլխավորապես կապ-  
տաժի են ենթարկվում հորատանցքերի միջոցով, որոնց խո-  
րությունը սովորաբար մոտ 50 մետր է լինում: Այն խողովակ-  
ները, որոնցով հանքային ջուրը վեր է բարձրանում, մի որոշ  
ժամանակից հետո նստվածքներից մաքրում են:

Հայաստանի մի շարք շրջաններում հանքային ջրերի  
բնական ելքերը տեղական բնակիչներն իրենք են պրիմիտիվ  
ձևով կապտաժ անում:

Հանքային աղբյուրների շրջանները սանիտարական  
տեսակետից լավ պահպանվում են: Դրա համար առողջարանի  
շուրջը սանիտարական պահպանովթյան շրջակայք է սահման-  
վում, իսկ նրա ներսում՝ երեք գոտի: Որքան առողջարանից հե-  
ռուանում ես, այնքան այդ սահմանափակումները հետզհետե  
պակասում են: Դրանք են 1. «փիստ ոեժիմի» դուտի, որի սահ-  
մաններում որևէ բնակություն չի թույլատրվում, հետեւապես  
նաև որևէ շինուաթյուն, 2. «սահմանափակումների» գոտի, ուր  
նույնպես արգելվում է օգտվել այն տերիտորիայից, որը կա-  
րող է առողջարանի բուժիչ միջոցների որակական և քանակա-  
կան վատթարացում առաջ բերել, և 3. «դիտարկումների» դո-  
տի, որն ընդգրկում է առողջարանին հարող վայրերը:


## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍԾ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՆՔԱՅԻՆ ԱՂԲՅՈՒԹՆԵՐԸ

Նախորդ գլխից մեղ հասկանալի դարձավ, թե ինչու է  
Հայկական ՍՍԾ տերիտորիան հանքային աղբյուրներով աշդ-  
քան հարուստ: Նախ և առաջ, Հայաստանը, որպես երիտա-  
սարդ հրաբխային գործունեության շրջան, ընդերքը գեռնս  
ստորերկրյա ջրերը հագեցնող ածխաթթու է արտաշնչում:  
Վերջապես, նրա խիստ կտրտված լեռնային ոելյաֆը հանքային  
ջրերի համար ճանապարհ է բացում դեպի երկրի մակերեսություն  
Հովիտներում և կիրճերում էրողիան բացում է ջրատար ճեղ-  
քերը, որոնցով և հանքային ջրերը ելք են դանում:

Հայկական ՍՍՌ բոլոր հանքային աղբյուրների նկարագրությունը հնարավոր չէ և դրա կարիքն էլ չկա: Խոսենք նրանցից կարեռների մասին:

Զերմուկ: Զերմուկ բալնեո-ըմոլելիքային և կլիմայական առողջարանը ստեղծվել է հանքային տաք ջրերի այն խմբի բազայի վրա, որը գտնվում է Հայկական ՍՍՌ Ազիզքեկովի շրջանում, Արփա գետի ափին: Այստեղ էր տեղադրված իստիսու աղբբեջանական գյուղը, որը նշանակում է «տաք ջուր»: Մինչև առողջարանի ստեղծումը այդպես էին կոչվում նաև հանքային աղբյուրները:

Այժմ իստիսու գյուղը դարձել է քաղաքատիպ ավան, որը Զերմուկ ընդհանուր անունն է կրում (նկ. 13):



Նկ. 13. Զերմուկ կուրորտը

Լուսանկար՝ Ա. Մ. Մաքարիսչյան:

Զերմուկ առողջարանը երևանի հետ կապված է մշտական օդային կապով և ավտոմոբիլային բարեկարգ ճանապարհով, որի ընդհանուր երկարությունը 215 կմ է: Այդ ուղին ձգվում է Արտաշատի, Արտաստի, Նորաշենի, Եղեղնաձորի,

Մալիշկայի, Գնդեվազի և Կեշուտի միջով։ Ճանապարհի վերջին մասն անցնում է Արփա գետի գեղատեսիլ կիրճով։ Հենց այդտեղ էլ՝ առողջարանն է։

Զերմուկի կառուցումն սկսվել է 30-ական թվականների երկրորդ կեսին։ Հորատման աշխատանքները կատարվել են 1938—39 թթ.։ Առաջին տարիներին առողջարանը սպասարկում էր սոցապի ուղեգործով ուղարկված կոլտնտեսականներին և ամբողջապարհ հիվանդներին, ըստ որում, նրանք ապրում էին փայտե ժամանակավոր բարաքներում։ 1939 թ. շահագործման հանձնվեց Սոցիալական ապահովության ֆողկոմատի 120 մահճակալանոց սանատորիան և Առողջապահության ֆողկոմատը 12 խցիկ ունեցող վաննաների բաժանմունք։ Հայրենական պատերազմը ընդհատեց Զերմուկի դարդացումը, բայց նրա ավարտից անմիջապես հետո այն կրկին շարունակվեց։

1948 թ. առողջարանում բացվեց Հայկական ՍՍՌ Առողջապահության մինիստրության Կուբորտային վարչության սանատորիան 40 մահճակալի համար։ Այդ ժամանակից ըսկեսած Զերմուկի զարգացումն արագ տեմպեր ընդունեց։ Այժմ այն մեր ուսապուրլիկայի ծաղկուն վայրերից մեկն է և, որպես առողջարան, համամիութենական նշանակություն է ձեռք բերել։

Զերմուկը շրջապատող տեղանքը լեռնային հրաբխային ռելիքտ ունի սարավանդաձև բարձունքներով և նրանց մեջ խոր մտած կոնաձև հովիտներով։ Սարավանդն առաջացել է լավաներից և նրանց սառած հոսքերից։ Սարավանդի մակերեսույթը հիմնականում ծածկված է հարթ բլուրներով, տեղ-տեղ առանձին գագաթներով, որոնք հանդած հրաբուխների լավ պահպանված կոներն են։


Առողջարանը կառուցված է լավային սարավանդի վրա, որը կտրվում է Արփա գետով։ այդ առաջ է բերել խոր զառիթափ ունեցող մի հոմ, որի խորությունը 60—70 մետր է։ Հունի հատակը կազմված է նստվածքներից, բայց մի քանի տեղերում գետը հոսում է ժայռերի միջով։

Արփա գետից բացի, Զերմուկի սարավանդը կտրաված է Արփա գետը թափվող երկու ոչ մեծ գետակների խոր կիրճե-

բով Դրանցից մեկը մի մեծ ու զեղատեսիլ ջրվեժ է առաջաց-  
նում (նկ. 14), որն աշխատեցնում է տեղական էլեկտրակա-  
յանը:

Առաջարանի ողջ տերիտորիան ծովի մակերեսութից  
2100 մ բարձրություն ունի: Ջերմուկի ամենացածր կետը, որը  
գտնվում է Արփա գետի հունում, 2050 մետր է, իսկ մոտակա-  
րարձունքները 3400 մետրից էլ ավելի:

Հարթավայրային սարավանդի ընդարձակ տարածության  
զուգորդումը Արփա գետի ժայռապատ ու մոայլ կիրճի հետ,



Նկ. 14. Ջերմուկի ջրվեժը


Լուսանկար՝ Ա. Մ. Խաչախաչյանի

Ջերմուկի շրջանին հատուկ գեղեցկություն է տալիս: Սարա-  
վանդը գարնանը վառ ծաղիկների շքեղ դորգով է ծածկվում:

Այն շրջապատված է կանաչի մի հսկա զանգվածով, լեռ-  
նային ալպիական մարդագետիններով և ցածրահասակ ան-  
տառով: Օդն ու արևը առատ են, բայց երկինքը ընդարձակ: Ել-

Հանկարծ Արփա գետի հունի վրա անսպասելիորեն բացվում է մի զառիթափ: Ժայռերը, քարակույտերը և խոր անդունդները գետի կիրճին չնաշխարհիկ գեղեցկություն են տալիս: Հունը նեղ է, նրա միջով շողշողում է և փրփրում աղմկոտ Արփան (նկ. 15):

Հատկապես գեղեցիկ է ջրվեժը: Ահա թե ինչպես է այն նկարագրում Վ. Գ. Դիկը, որը 1937 թ. տուրիստական ճանապարհորդություն է կատարել Հայաստանում. «Մենք կախված



Նկ. 15. Արփա գետի ձորը

Լուսանկար՝ Ա. Մ. Խարախաշյանի  
ժայռերից և քարարեկորներից կաղմված ձորակի հատակում  
ենք, այստեղ գրեթե արևի շողը շի թափանցում: Զորակի մի-  
ջով, փրփրին տալով, դղրդոցով հոսում է Արփա-շայը: Իսկ  
վերևում, աշքի համար անտեսանելի բարձրությունից գահա-  
վիժում է զարմանահրաշ գեղեցկություն ունեցող ջրվեժն իր  
նուրբ մետաքսաթելի փնջերով, մարզանի նրբահյուս թելերով,  
ասես հարսանեկան աղամանդաշար սպիտակաձյուն մի պսակ  
լինի<sup>1</sup>):

<sup>1</sup> В. Г. Дик, Туристические и курортные богатства Советской Армении, Ереван, 1937.

Մինչև հորատման աշխատանքները, Զերմուկի հանքային աղբյուկները բխում էին Արփա գետի հունի երկու ափերին։ Մեծ և փոքր այդ աղբյուկների թիվը հիսունի էր հասնում։ Սարավանդում և գետի հունի մեջ հորատանցքեր բանալուց հետո, երբ ողջ հանքային ջուրը հորատանցքերից դուրս հորդեց և հսկայական շատրվաններով դեպի երկինք ցայտեց, աղբյուկները չորացան։ Այժմ դրանցից միայն մի երկուսն են պահպանվել։

Հավանաբար հանքային աղբյուկների նախկինում գոյություն ունեցող բազմաթիվ ելքերը, ընդհանուր ջրի հոսանքի ցրիվ եկած շիթերն էին, որ ըստ Ա. Պ. Դեմյոխինի, հավաքվել էին երկրի կեղեկի մեծ ճեղքվածքում։ Այդ մասում ճեղքվածքը համընկնում է Արփա գետի կիրճին։

Ա. Պ. Դեմյոխինի կարծիքով, Զերմուկի ջուրն իր ծագումով պարտական է մետեորային (մթնոլորտային տեղումներ) ջրին, որն զգալի խորությամբ թափանցել է երկրի կեղեկի մեջ, ուր և այն հանդիպում է ածխաթթու գազի հոսանքին։ Զուրն հագենալով ածխաթթվով և միաժամանակ տաքանալով ընդերքի ջերմությամբ, իր ճանապարհին լեռնային ապառներից դանաղան նյութեր է ներլուծում, հանքայնանում և Արփա գետի ձորի կոտրվածքի միջով երկրի մակերեսուցի ելնում։ Նրա պաշարները հսկայական են։ Շատրվանող հորատանցքերի ջի քանակն այժմ օրական երկու միլիոն լիտրի է հասնում, ջերմաստիճանը՝ 57—64°C։

Այդ ջուրն իր քիմիական բաղադրությամբ ածխաթթվասուս-դլառութերային է, իսկ իոններով հիդրոկարոնատային, առաջատոնատրիումային։ Նրա մեջ տարրալուծված նյութերի ընդհանուր քանակը մեկ լիտրում տատանվում է 3,5—5,0 գրամի միջև։ Այդ ջրերի քիմիական կազմը տրված է Ն<sup>o</sup> 1 աղյուսակում։

Զերմուկի ջրերում միկրոէլեմենտներից հայտնաբերվել են լիթիումը, սիլիցիումը, յոդը, բրոմը, ֆոտորը, բորը, մանգանը և պղինձը, մի բան, որ այդ ջրերին բուժիչ ավելի մեծ արժեք է տալիս։

Զերմուկի ջրերը Կառլովի վարի աշխարհահռչակ ջրերի նմանակներն են։

Դեռևս 1945 թ. Զերմուկի ջրերի մասին ահա թե ինչպես են արտահայտվել մասնագետ-կուրորտագետները։ Պրոֆ. Ն. Ի. Ալավյանովը դրում է՝ «Զերմուկի աղբյուրները իրենց ֆիզիկո-քիմիական բաղադրությամբ և ջերմությամբ երկրագնդի բոլոր աղբյուրներից ամենից ավելի են մոտենում Կարլսբադի Շպրուդելին... Աղբյուրը հսկայական քանակությամբ ջուր է տալիս, ջերմաստիճանը  $55^{\circ}$  է։ Այդպիսով, այդ աղբյուրը ոչ միայն համամիութենական, այլև համաշխարհային նշանակություն պետք է ստանա, ինչպես Կարլսբադի Շպրուդելը<sup>1</sup>»։

Պրոֆ. Վ. Ա. Ալեքսանդրովը գտնում է, որ «Զերմուկին մեծապահա է խոստանում, նույնիսկ ավելի մեծ, քան Հայաստանի մյուս բոլոր աղբյուրներին։ Այդ աղբյուրը հազվագյուտ է, որովհետև  $45^{\circ}$  ջերմություն ունի, այսինքն հիպերթերմալ է, և մյուս կողմից, իր քիմիական բաղադրությամբ մոտենում է Եվրոպայում այդ տիպի միակ առողջարանին՝ Կարլսբադին»<sup>1</sup>։

Կլինիկական բազմամյա ուսումնասիրությունները ցուց են տվել, որ Զերմուկի ջրերը բուժում են ամենաբազմազան հիվանդություններ։

Զերմուկի առողջարանում կարող են բուժվել Ասրդի, լեղապարկի, լեղու ուղիների և ենթաստամոքսային գեղձի, աղեստամոքսային տրակտի (բարձր և ցածր թթվայնությամբ խրոնիկ գաստրիտները, ստամոքսի և տասներկումատնյար աղիքի խոցեր, խրոնիկ էնտերոկոլիտներ և այլն), նյութափոխանակության խախտման հիվանդություններով տառապողները (շաքարախտ, ճարպակալում և այլն)։

Զերմուկ առողջարանում կարելի է բուժել նաև նյարդային համակարգի հիվանդությունները պերիֆերիկ (նեվրալգիաները, նեվրիտներ, ուղիկուլիտներ, վիրավորվածքների հետևվանքներ և այլն) և կենտրոնական (ողնուղեղի տրավմատիկ և վարակիչ հիվանդությունները, պոլիմիելիտի հետևանքները, տրոֆիկ խոցերը և այլն) և զանազան նեվրոզներ, սակայն առանց հոգեկան խանգարումների։ Բացի դրանից, Զերմուկի չուրը սեղանի հիանալի խմիչք է, դուրեկան համ ունի, թարմացնող է և ծարավը հագեցնող։

Զերմուկի շիշալցման գործարանը տարեկան մոտ 28 մի-

<sup>1</sup> А. А. Акопян, Курорты Армении. Эривань, 1934.

իոն շիշ հանքային ջուրը է թողարկում, որն արտահանվում է ինչպես միութենական բոլոր ռեսպուբլիկաները, այնպես էլ արտասահմանյան շատ երկրներու Այդ ջուրը մեծ ճանաչում է ստացել, նրա պահանջը շատ մեծ է:

Չերմուկ առողջարանի զարգացման հեռանկարները հսկայական են: Առաջմ նրա բոլոր հնարավորությունները չեն օդադրություն:

#### Աղյուսակ 1

Հայկական ՍՍՌ ՀՀ երի մեջ լցվող հանքային ջրերի քիմիական  
բաղադրությունը

	Զերմուկ № 9	Արզնի № 15	Դիլիջան № 2	Հանքա- վան № 4	Ահան (Կամո) № 1
<b>Միլիգրամմերով մեկ լիտր ջրում</b>					
Լիթիում ( $\text{Li}^+$ )	3,7	1,39	2,5	1,3	3,0
Նատրիում ( $\text{Na}^+$ )	1211,0	2596,7	966,0	1739,7	390,0
Կալիում ( $\text{K}^+$ )	89,0	31,2	10,0	13,7	5,0
Մագնիում ( $\text{Mg}^{++}$ )	74,4	198,2	28,1	106,4	194,6
Կալցիում ( $\text{Ca}^{++}$ )	148,0	300,0	111,2	637,4	160,0
Երկաթ ( $\text{Fe}^{++} + \text{Fe}^{+++}$ )	0,8	1,7	14,0	23,2	հետքեր
Քլոր ( $\text{Cl}^-$ ) . . .	475,7	3420,0	276,9	1963,2	674,5
Բրոմ ( $\text{Br}^-$ ) . . .	0,05	1,0	0,20	0,10	0,25
Յոդ ( $\text{J}^-$ ) . . .	0,10	0,1	0,10	0,08	0,10
Սուլֆատ ( $\text{SO}_4^{--}$ )	900,0	512,2	175,0	220,3	հետքեր
Հիդրոկարբոնատ $(\text{HCO}_3^-)$ . . .	2243,0	2322,9	2410,0	3525,8	1642,0
Չոր մնացորդը 105°	3792,0	8315,7	2772,0	6665,0	2308,1
Սիլիկաթթու $(\text{H}_2\text{SiO}_3)$ . . .	140,0	90,0	60,0	113,0	40,0
Ազատ ածխա- թթու ( $\text{CO}_2$ ) . .	300,0	1800,0	2400,0	2000,0	2100,0
Ջրի ջերմաստիճանը (°C) . . . . .	64,5	21,0	11,5	27,0	16,0

Չերմուկի շուրջը հանքային շատ աղբաւորներ են բխում:

Դաշի և Արփա գետերի միախառնման շրջանում, մինչեւ 1953 թ. միայն մեկ փոքրիկ աղբյուր կար: 1953—54 թթ. Հայկական երկրաբանական վարչությունը այստեղ 8 հորատանցք փոքրեց, որոնցից այժմ միայն մեկն է շատրվանում, տալով օրական 35 հազար լիտր ջուր, որի ջերմաստիճանը 16,5 է:

Չերմուկ առողջարանի մոտ գտնվող Կեշուտ գյուղում

Հանքային ջրերի ելքեր կան: Այստեղ փորված հորատանցքեցից հանքային սառը ջրերի շատրվաններ խփեցին:

Դալիի և Կեչուտի աղբյուրներն ըստ էության Զերմուկի խմբի մեջ են մտնում: Դալիի և Կեչուտի հորատանցքերի ջրերը Զերմուկի տաք ջրերի ալանեցված և սառած կրկնօրինակներն են:

Մեզ մնուած է մի քանի խոսք ասել նրա կլիմայի մասին:

Զերմուկը ընկած է բաց սարավանդում, ալպիական գոտու սահմանում: Նրա կլիման խիստ է, բայց առողջարար: Զմեռը ցուրտ է, ձյունաշատ, գերիշխում է շափավոր սառնամանիքային եղանակը, սակայն ուժեղ սառնամանիքներն էլ հազվադեպ չեն: Զյան ծածկույթը հաստ է, կայուն, որը հոկտեմբերի երկրորդ կեսից մնում է մինչև մայիսի սկիզբը: Այն 130—150 սանտիմետրի է հասնում:

Գարունը տեսական է, խոնավ, անձրևներն հատկապես ապրիլին առատ են լինում: Ամառը զով է, բայց արեւոտ, անձրես քիչ է գալիս: Աշունը վաղ է վրա հասնում, սառնաշունչ է, ոչ շատ անձրևոտ: Տարվա ընթացքում 650—670 մմ տեղումներ են լինում, որոնց կեսից ավելին՝ գարնանը:

Զերմուկում տարեկան միջին ջերմաստիճանը  $4,3^{\circ}$  է: Միայն երեք ամիսների՝ հունիսի, հուլիսի և օգոստոսի ընթացքում օրվա մեջ ջերմաստիճանը  $0$ -ից ցածր չի լինում: Օդի ամենաբարձր ջերմաստիճանը օգոստոսին է լինում, որը հասնում է  $29-30^{\circ}$ -ի: Ամռանն ընդհանրապես զով է, արեւոտ օրերի թիվը շատ, առանց ուժեղ անձրևների և միանգամայն առանց մառախուղի:

Քամիները փշում են Արփա գետի հովտի միջով, գերիշխողը հյուսիս-արևելյան ուղղության քամիներն են, որոնք հատկապես ուժեղ են լինում տարվա ցուրտ կեսին: Զմռանը բքեր են լինում, տարեկան մոտ 20 անգամ: Կուրորտային վայրը ուժեղ քամիներից պաշտպանված է մի բարձր լեռնաշղթայով, որն անցնում է Արփա գետի հովտի ձախ ափով:

Զերմուկում օդը մաքուր է, բայց բավական խոնավ: Արեգակնային ճառագայթումը տեսական է և ձմռանը, և ամռանը: Ուլտրամանիշակագույն ճառագայթումը մոտ է տվյալ ջարձրությանը բնորոշ մթնոլորտային իդեալական մեծու-

թյանը: Այստեղ սանատոր բուժման կոմպլեքսում պետք է ողջ տարվա ընթացքում կիրառել կլիմայական բուժումը, ձմռան ամիսներին հատուկ վերանդաներում և աերոսոլարիում-ներում:

Զյան ծածկութիւն կայունության շնորհիվ ջերմուկում հեշտ է դահուկային սպորտը կիրառել:

**Արգնի:** Արգնի ջրաբուժական առողջարանը ստեղծվել է Հանքային աղբյուրների այն մեծ խմբի բազայի վրա, որը բը-խում է Հրազդան գետի հունում: Այդ աղբյուրները գտնվում են նախկին Արգնի գյուղից մեկ կիլոմետր հյուսիս, որից և նրանք իրենց անունն են ստացել: Առողջարանը երևանի հետ կապված է 25 կիլոմետր երկարությամբ բարեկարգ ասֆալտավատ ճանապարհով, որը հիմնականում Երևան-Թբիլիսի մագիստրալ խճուղին է և միայն նրա փոքրիկ (7 կիլոմետր) հատվածն է, որ կազմում է նրա ճյուղավորությունը:

Արգնին գտնվում է Եղվարդի սարավանդը հատող Հրազդան գետի նեղ կիրճում, և ճանապարհի վերջին 3 կիլոմետրը դառիթափ վայրէջք է դեպի գետի հունը: Այդ զառիթափից Արգնին շատ գեղեցիկ տեսարան է ներկայացնում: Խոր հունի մեջ աղմկում է Հրազդան գետը: Ասես նրա մեջ են գահավիժում կիրճի կախ ընկած, թեք ափերը, որոնք կազմված են սյունածե բազալտներից: Կիրճն իր խիստ ու յուրօրինակ գեղեցկությամբ դիտողին զարմանք է պատճառում: Առողջարանի շրջանում կիրճը որոշ շափով լայնանում է, որը և հնարավորություն է տվել սանատորիաներ, վաննաների շենքեր, շիշ լցնող և ածխաթթվով գործարաններ կառուցելու: Ներկայումս առողջարանի զբաղեցրած տեղամասում ծառեր ու ծաղիկներ են ածեցվել:

Առողջարանը ընկած է ծովի մակերեսութիւց 1270 մետր բարձրության վրա:

Աղքատ բուսականությունը, շրջանի ռելյեֆը, տեղադրությունն ու ծովի մակերեսութիւց նրա ունեցած բարձրությունը կիրճի կլիման օժտում են յուրահատուկ գծերով: Արգնիում ամռանը շոգ է, ձմռանը շափավոր ցուրտ, աշունը տեղական ու չոր: Ինչպես ողջ Անդրկովկասում, աշնանը նղանակներն ավելի բարենպաստ են, քան գարնանը:

Օդի տարեկան միջին ջերմաստիճանը մոտ 9 է, որը մոտենում է Բորժոմիի, Օդեսայի, Պյատիգորսկի, Վիսբադենի և այլ առողջարանների օդի ջերմաստիճանին։ Տարվա երեք քառորդ մասը տաք օրեր են անում, մի բան, որն առողջարանի համար շատ կարևոր է։ Արզնու կլիման չափավոր չոր է, մերցինս խիստ աճում է ամռան ամիսներին։ Մթնոլորտային տեղումները տարվա ընթացքում անհամաշատ են լինում, անձրևները ամենից շատ ավրիլին և մայիսին են գալիս։ Զյունը սկսվում է դեկտեմբերին և մնում մինչև մարտ ամիսը։ Ամռան ամիսներին կիրճի ուղղությամբ ուժեղ քամիներ են փլում։ Պետք է նշել, որ Արզնին իր կլիմայի բնույթով չի կարող կլիմայական առողջարան համարվել։

Արզնու հանքային աղբյուրները բխում են կիրճում, տրավերտինի մեծ վահանի տակից, որի բարձրությունը մոտ 200, իսկ լայնությունը 150 մետր է, և որը հենված է Հրազդան գետի ձախ ափին ու շեշտակիորեն կախվում է գետի վրա։ Այդ աղբյուրները դեռևս խոր անցյալում մեծ հոշակ էին վայելում, և տեղական բնակիչները միշտ այցելում էին նրանց։

Արզնի առողջարանի բացումը պաշտոնապես տեղի է ունեցել 1925 թվականին։ Ա. Պ. Դեմյոնինը, որն այստեղ քրերաբանական-հետազոտական աշխատանքներ էր տանում, այդ մասին գրում էր. «Արզնի առողջարանը Սովետական իշխանության իսկական զավակն է։ Նորակառուցների առաջին քարերը, որոնման աշխատանքները, առողջարանի հանքային հարստությունների յուրացումը անքակտելիորեն կապված են սոցիալիստական շինարարության տարիների հետ»<sup>1</sup>։

Առողջարանի երկրաբանական-հետախուզական աշխատանքներն սկսվել են 1931 թվականին։ Հորատանցքերը ածխաթթվային հանքային ջրի շատրվաններ տվեցին, որոնց պաշարները գործնականորեն անսպառ են։ Ներկայում արզնիում հորատման միջոցով ստացված ջրերի քանակը օրական մոտ 2 միլիոն լիտրի է հասնում, իսկ ջերմաստիճանը՝ 24-ի։ Այժմ առողջարանում պահպանվել է հանքային ջրի միայն մեկ բնական ելք։

<sup>1</sup> А. П. Демёхин, Арзни. Ереван, 1940.

Ա. Պ. Դեմյոխինի տվյալներով, հորատանցքերը բազմւթի ծածկույթի տակ բացեցին գետի հնագույն հունը, որով և շարժվում են հանքային ջրերը։ Այդ ջրերը գտնվում են ճնշման տակ և հագեցված են ածխաթթու գազով։ Շրջանի ընդերքում, ուր այդ ջրերը շրջապտույտ են կատարում, զարգացած են աղաքեր կավերը, մերգելներն ու ավազաքարերը։ Արզնու ջրերը, քայքայելով դրանք, քլորիդա-հիդրոկարբոնատային, նատրիումային բաղադրություն են ստանում։ Արզնու հանքային ջրերի քիմիական բաղադրությունը տրված է 1 աղյուսակում։ Արզնու հանքային ջրերում միկրոէլեմենտներից հայտնաբերվել են յողը, բրոմը, լիթիումը, մկնղեղը, մանգանը, ֆոսֆորը, սիլիցիումը, բորը և ստրոնցիումը։

Այդ ջրերում տարրալուծված նյութերի ընդհանուր քանակը մեծ է (8,3 գր.), մի բան, որը բացատրվում է աղաքեր կավերի հեղտ քայքայմամբ։

Արզնու տիպի ջրերը բնության մեջ շատ հազվադեպ են, համենայն դեպս, Սովետական Միության ընդարձակ տերիտորիայում մինչև այժմ նման ջրեր չեն հանդիպել։ Մի շարք հետազոտողներ (պրոֆ. Ա. Հ. Հակոբյանը և ուսիշներ) դրանք համարում են նառհելմյան և Վիսբագենյան (Գերմանիա) աղբյուրների բաղադրության մոտ ջրեր։

Մինչև Արզնի առողջարանի բացումը, այդ ջրերի մասին, ահա թե ինչպես են արտահայտվել մասնագետ-կուրորտագետները։ Հայտնի կուրորտագետ պրոֆ. Վ. Ա. Ալեքսանդրովը գրում է. «Արզնին փայլուն առողջարան կդառնա, որովհետեւ նրա ունեցած կուրորտային հնարավորություններն անտահման են։ Աղբյուրների տված ջուրը հսկայական քանակություն է կազմում։ Մյուս կողմից ածխաթթվով այնքան հաջողակ է հագեցված, որը մեր Միության ոչ մի առողջարանում չես հանդիպի։ Նրա հանքային բաղադրությունը հետաքրքիր է փոփոխությունների այն գամմայով, որը աղբյուրից աղբյուր նկատելի է դառնում։ Կարելի է քիմիական թունդ, միջակ և թույլ բաղադրություն, ունեցող վաննաներ դնել, ընդ որում ածխաթթվի քանակը միանգամայն նույնը կլինի»<sup>1</sup>։

<sup>1</sup> Ա. Ա. Ակոպյան, Կурорты Армении. Էրևան, 1934.

Պրոֆ. Ս. Ս. Նալբանդովը գրում է. «Արդնի առողջարանի ջրերի այդ խումբը, որում ի հայտ են գալիս տարբեր հանքայ-նացում և ջերմություն ( $12,8^{\circ}$ -ից մինչև  $21,5^{\circ}$ ) ունեցող աղ-բյուրներ, իրենից ներկայացնում է քլորիդա-կարբոնատա-նա-տրիումային ջրի բուժիչ մի ներդաշնակություն, որը միաժա-նակ  $1,5$  մինչև  $2,07$  գրամ ածխաթթու է պարունակում և օրա-կան մինչև  $3$  միլիոն լիտր չուր է տակիս (Կիսլովոդսկը՝  $1$  մի-լիոն  $400$  հազար); Այս տվյալները հիմք են տալիս, որպեսզի Արդնին ածխաթթվի իր պարունակությամբ (Կիսլովոդսկը  $1,9$ ) Միության մեջ առաջին տեղը դասենք և այն համարենք ամե-նից առաջ, որպես սրտերակային համակարգության հիվանդ-ների բուժման առողջարան»<sup>1</sup>:

Իսկ Ս. Ս. Սոկոլովը գրում է. «Հաշվի առնելով հիվանդու-թյունների զանազան խմբերի բուժման համար կոմբինացված ջրաբուժական առողջարանի բացառիկ արժեքը, Միության մեջ նման ջրերի բացակայությունը, աղբյուրների հսկայական դեբիտը, շինարարության համար անհրաժեշտ հրապարակի առկայությունը, չոր գաղի վաննաներով բուժելու հնարավորու-թյունը, հաղորդակցության հարմարվետությունը և այլն, — Ար-դնին պետք է համամիութենական նշանակություն ունեցող առողջարան համարել<sup>2</sup>»:


Այժմ, երբ Արդնի առողջարանում սանատորիական նոր շենքերի շինարարությունն իրադորժված է, այն Սովետական Միության ջրաբուժական առողջարանների մեջ առաջին տեղերից մեկն է գրավում: Առողջարանում գործում են պրոֆիլությունների երեք սանատորիաներ,  $500$  մահճակալ-ներով, Առողջապահության մինիստրության բուժվարչության մանկական սանատորիան, վաննաների շենքերը և այլ բուժ-հիմնարկներ: Շիշալցնող գործարանը տարեկան  $19,5$  միլիոն շիշ բուժական խոշոր արժեք ներկայացնող հանքային ջուր է թողարկում: Քանի որ այդ ջրերի մեջ ածխաթթվի պարունա-կությունը շատ մեծ է (մեկ լիտրում մինչև  $4$  գրամ), Արդնիում գրված է մի սարքավորում, որը հանքային ջրից որսում և կոն-դենսացնում է բնական աղատ ածխաթթու դաղը:

<sup>1</sup> A. A. Ակոպյան, Կурорты Армении, Էրևան, 1934.

<sup>2</sup> Տես Դույն տեղում:

Առողջարանը գործում է ողջ տարին։ Այն բուժում է սրտերակային համակարգի (սրտամկանի օրգանական և ֆունկցիոնալ վնասվածքի, երակների սկզբունքի սկզբնական ձևեր և այլն), ստամոքսի և աղիքների (ստամոքսի կատառ ցածր թթվայնությամբ, խրոնիկ կատառներ և աղիքների ատոնիա և այլն), լեղա-քարային հիվանդությունների, լեղապարկի բորբոքման, երիկամի խոռոչների խրոնիկ բորբոքումներ, միզաթթվային դիատեզ, դիաբետ, ներվային համակարգի (նեվրոպներ, նեվրալգիա, նեվրիտներ և այլն) և շարժողական օրդանների (ոսկրերի խրոնիկ հիվանդություններ, հոդերի և մկանների ռեմատիկ, վարակիչ և ինտոկսիկ բնույթի) հիվանդություններ։ Արգնու աղբյուրներից մեկի ջուրը սեղանի հիանալի ըմպելիք է։

Հրադանի ջրերի միջին հոսանքում (նկ. 16), բացի



Նկ. 16. Հրադան ջհտի ձորը

Լուսահեղան՝ Ա. Մ. Խարախոչյանի

Արգնու աղբյուրներից, Ավաղան, Արգել և Քեթրան գյուղերի մոտ հանքային ջրերի նշանակալից ելքեր կան։

Ավաղանի, Արգելին և Քեթրանի աղբյուրները, Արգնու

Հայտնի աղբյուրների հետ միասին, իրենց տեղադրությամբ, ծագումով և քիմիականությամբ հանքային ջրերի մի միասնական խումբ են կազմում, ընդ որում, Արգնու աղբյուրները կենտրոնական տեղն են գրավում:

Ավագանի աղբյուրներն այդ տիպի ջրերի մեջ ամենահյուսային ելքերն են: Նրանք շատ հնուց իրենց վրա էին գրավել տեղացիների ուշադրությունը և կոչվում էին «Սալամաթ» (առողջություն): Հետագայում դրանք վերանվանվեցին «Կենսալի»:

Աղբյուրները շահագործվում էին դեռևս ցարական իշխանության ժամանակ: Այդ հողերի տերն այնտեղ ոչ մեծ մի ցեմենտապատ ավագան էր կառուցել: Զուրը շահերի մեջ էր լըթվում և Երևանում վաճառվում:

1934 թ. այնտեղ հետախուզական-հորատման աշխատանքներ կատարվեցին, որոնք հանքային ջրի հոսք ավեցին: Պրոֆ. Ա. Հ. Հակոբյանը գտնում էր, որ «Կենսալի հանքային ջուրը ածխաթթվա-հիմքա-աղային է, գերմանական Զելտերսի և ֆրանսիական Ռոյի տիպի. լավ հագեցված է ածխաթթվով»:

Օգտագործվում է՝ 1. աղե-ստամոքսային տրակտի, 2. փորկապությունների և նյութափոխանակության հիվանդությունների դեմ, 3. որպես ինգալացիոն հեղուկ վերին շրջառական օրգանների հիվանդությունների բուժման համար և 4. սեղանի հիանալի ըմպելիք է»<sup>1</sup>:

Արգելի աղբյուրները գտնվում են Հրազդան գետի խոր կիրճում, Հիմնականում, նրա ձախ ափին, մոտ 1380 մ բաշարձակ բարձրության վրա: Մինչև հիդրոտեխնիկական շինարարությունն սկսելը, այդ տեղամասում դրանցվել էին մոտ 20 աղբյուր:

1948—49 թթ. հիդրոտեխնիկական շինարարության կապակցությամբ, Հայհիդրոէներգոնախագծի կողմից տարվող հետախուզական աշխատանքների ընթացքում, զետի երկու ափերին և նրա մեջտեղը՝ կղզում, մի շարք հորատանցքեր փորվեցին, որոնցից հանքային ջրի շատրվաններ խփեցին: Այդ ջուրն իր քիմիական բաղադրությամբ շատ նման է Ավագանի, և հետևապես Արգնու ջրի խմբին:

<sup>1</sup> А. А. Акопян, Курорты Армении, Эриван, 1934.

Այդ ջրերի ամենից ավելի բնորոշ առանձնահատկությունն այն է, որ նրանք հսկայական քանակությամբ աղատ ածխաթթու էին արտամղում:

Ն. Ի. Կիրիչենկոյի տվյալներով<sup>1</sup>, այդ տեղամասի միայն մեկ հորատանցքը օրական մոտ 2500—2800 կգ ածխաթթու է տալիս, որից 1500—1700 կգ սպոնտանային է, իսկ 1000—1100 կգ տարրալուծված:

Քեթրան գյուղի շրջանում նույն բաղադրություն ունեցող աղբյուրներ են բխում, բայց նրանց ջրի քանակն աննշան է:

Հրազդան գետի միջին հոսանքում բխող բոլոր աղբյուրները Արգնու ջրերի կրկնօրինակներն են և այդ առողջարանի ռեզերվը:

Դիլիջան: Դիլիջան առողջարանն ընկած է Հայկական ՍՍՌ հյուսիս-արևելքում, իշխանի շրջանի տերիտորիայում, Աղստև գետի կիրճում, որը Քուռ գետի աջ վտակն է:

Դիլիջանի կարևոր բուժիչ նախապայմանը նրա կլիման է, և նա շատ վաղուց ճանաչված է որպես առաջնակարգ լեռնակլիմայական առողջարան:

Դիլիջանի մանրամասն նկարագրությունը տրվում է Հայաստանի կլիմայական վայրերին վերաբերող գլխում:

Այս գլխում մի քանի խոսք ասենք ոչ մեծ այն հանքային աղբյուրների մասին, որոնք բխում են Դիլիջան առողջարանից 6 կմ և Կիրովական—Դիլիջան խճուղուց 2 կմ հեռու գտնվող Բլղան գետակի կիրճում: Դրանք նույնպես Բլղանի աղբյուրներ են կոչվում: Վաճառվում են «Դիլիջան» պիտակով: Ա. Պ. Դեմյոխինի նկարագրությամբ, այդ աղբյուրները բխում են «մի խոր ու գեղատեսիլ կիրճում, որի լանջերը ծածկված են հիանալի սաղարթավոր անտառով և որը վեր է բարձրանում դեպի սուբալպիական և ալպիական գոտին: Բուն կիրճը բավականին նեղ է, բայց ինչպես նրա ձախ, այնպես էլ աջ ափին, անտառի միջով անցնում են գետի

<sup>1</sup> Н. И. Кирichenko, О давлении углекислоты в горных породах (на примере углекислых вод долины р. Раздан). Сб. Вопросы геологии и гидрографии АрмССР, Ереван, 1956.

Հանքարյան տերրասները, որոնք շինարարության համար բավական լավ հրապարակներ կարող են լինել»<sup>1</sup>

Աղբյուրների ողջ շրջանը շրջապատված է խիտ անտառով (Հաճարենի, կաղնի, թեղի, սոճի, լորենի, հացենի և այլն):

Հանքային աղբյուրները բխում էին գետի հունում և կիրճի ձախ լանջին, լեռնային ապառների՝ պորֆիրիտների ծածկույթի մասը ճեղքերից: Այդ ջրերի ելքերը մի քանիսն էին, բայց դրանք բոլորն էլ, բացի մեկից, աննշան էին: Հաճախ դրանց մասին կարելի էր դատել միայն ճեղքերի վրա եղած երկաթի նստվածքներով:



1932 թ. այնտեղ երկու հորատանցք փորվեց, որոնք հանքային ջրի հոսք ավեցին: Ներկայումս այդ հորատանցքերի դեբիտը օրական մոտ 160 հազար լիտր է կազմում, իսկ ջրի ջերմաստիճանը  $11,5^{\circ}$ : Այնտեղ ոչ մեծ մի լցնող գործարան է աշխատում, որը տարեկան 5 միլիոն շիշ հանքային ջուր է թողարկում:

Այդ ջրի առաջացումը Ա. Պ. Դիմյոխինը հետևյալ կերպ է բացատրում: Ինչպես առաջադրվող սխեմայից երևում է (նկ. 17) պորֆիրիտների զանգվածի մեջ մագման ներդրվելուց հետո, որը սառել է ապառների հիմքային սիենիտների շտոկի ձևով, առաջացել են խոր քայլքայումներ, ճեղքեր: Այդ ճեղքերով էլ խորքից ածխաթթու գազի հոսանքներ են հորդել: Պորֆիրիտների և կրաքարերի միջով նրանց ընդառաջել են մետեռային ջրերը (մթնոլորտային տեղումներ): Քանի որ այդ ապառները խիստ ճեղքվածքներ ունեին, ջրերն զգալի խորոթյուններ են իջել և հանդիպել ածխաթթվին, որից հետո, նրանով հարստացած, ակտիվ փոխազդեցության մեջ են մտել այդ ապառների հետ: Ահա այսպես է ձևավորվել նրանց քիմիական բաղադրությունը: Ածխաթթու գազի հոսանքն իրենց մեջ ներառնելով, այդ ջրերը սկսեցին նույն պորֆիրիտների ճեղքերով հետ, դեպի երկրի մակերես բարձրանալ:

Դիլիջանի (Բլդանի) հանքային ջրերն իրենց քիմիական բաղադրությամբ ածխաթթվա-հիմքային կամ հիդրոկարբոնատ-նատրիումային են: Նրանց հիմնական բաղադրիչը սո-

<sup>1</sup> А. П. Демехин. «Минеральные воды ущелья р. Блдан (Дилижан)» Сб. Вопросы геологии и гидрогоеологии АрмССР, Ереван, 1956.

ՀԱՆՔԱՅԻ ԶՐԵՐԻ ԱԼՈՎԱՑՄԱՆ ՍԽԵՄԱՆ. ԲԼԴԱՆ ԳԵՏԻ ԵՎ ՖԻՌԵՏՈՎՈ ԳՅՈՒՂԻ ՄՈՏ ՀԱՏ Ա. Պ. ԴԵՄՅՈՒԻՆԻ



Նկ. 17. 1—կրաքարեր, 2—պորֆիրիտներ, 3—տուֆոբրեկչիաներ, 4—զիմքային սիենիտներ, 5—տեկտոնիկ խախտումների գծերը, 6—խորքային գաղի շիթերը, 7—ինֆիլտրացիոն շիթերը, 8—գաղ պարունակող հանքային ջրի հոսանքը

վորական խմելու սողան է: Նրանց մեջ տարրալուծված նյութերի կոնցենտրացիան փոքր է, մեկ լիտրում ընդամենը 2,7—2,8 գրամ, իսկ ազատ ածխաթթուն շ գրամ: Միկրոէլեմենտներից այդ ջրերը պարունակում են երկաթ, սիլիցիում, լիթում, բոր, յոդ, մանգան:

Դիլիջանի (Բլղանի) ջրերը Բորժոմի հայտնի առողջարանի և ֆրանսիական Վիշիի կրկնօրինակներն են: Քիմիական բաղադրությունը տրված է 1 աղյուսակում:

Դիլիջանի ջրերը կարող են օգտագործվել բարձր թթվայնությամբ աղեստամոքսային հիվանդությունների, ստամոքսի և աղիքների, տասներկումատնյա աղիքի և ստամոքսի խոցերի, լեղաքարային հիվանդության, լեղապարկի բորբոքման, միզապարկի կատառի, նյութափոխանակության հիվանդությունների, ճարպակալման, շաքարախտի, երիկամների ցավերի բուժման համար:

Բացի դրանից, Դիլիջանի հանքային ջուրը սեղանի հիանալի ըմպելիք է, որն օժանդակում է մարսողությանը: Հանքային աղբյուրների մոտիկությունն այնպիսի համամիւթենական լեռնա-կլիմայական առողջարանին, ինչպիսին վերջին տարիներս Դիլիջանն է դարձել, հնարավորություն է տալիս այդ ջրերը լիովին իրացնել: Առողջարանում կլիմայական բուժումը կարող է ավելի արդյունավետ դառնալ ջրի բալնեո-ըմպելիքային կիրառման միջոցով: Դիլիջանում կարող են օգտագործվել նաև հարևան Ֆիոլետովոյի ջրերը:

Ֆիոլետովո: Դիլիջանից Կիրովական տանող գեղատեսիկ ձանապարհի վրա գտնվող Ֆիոլետովո գյուղի մոտ կարելի է մի քանի հորատանցքեր տեսնել, որոնք հանքային ջուր են շատրվանում: Հորատանցքերը փուլել են Աղստե գետի երկու ափերին բխող հանքային աղբյուրների շրջանում:

1950 թ. Հայկական երկրաբանական վարչության կողմից ընդամենը 8 հորատանցք է փորվել: Այդ բոլոր հորատանցքերը անցան շատ խիստ քայլայված, գրեթե կավի վերածված կրաքարերը, ինչպես նաև երևան բերեցին քայլայված գոտիների այլ նշաններ:

Ներկայումս մի քանի հորատանցքեր շատրվանում են, իսկ աղբյուրները ցամաքել են:

Ֆիոլետովոյի աղբյուրներն իրենց քիմիական բաղադրությամբ հիպրոկարբոնատային-կալցիում-նատրիում-մագնիումային են, ընդհանուր հանքայնացմամբ, որը մեկ լիտր ջրում հասնում է մինչև 6 գրամ տարրալուծված նյութերի: Այս աղբյուրների ջրերը պարունակում են երկաթ, սիլիցիում, լիթիում, ստրոնցիում, ալյումինիում, պղինձ: Հանքային ջրում լուծված գազերի 98,8 տոկոսը կազմում է ածխաթթուն, 0,2 տոկոսը թթվածինը, 1,0 տոկոսը ազոտը, իսկ 0,0005 տոկոսը ազնիվ գազերը:

Հնում Ֆիոլետովոյի աղբյուրներն օգտագործվում են բուժիչ նպատակներով: 1913 թ. տեղական բնակիչներից մեկը այդ աղբյուրների մոտ վաննաներ է կառուցում: Սակայն հետագայում Աղստե գետի հորդացած ջրերը քանդում են դրանք:

Այժմ այդ աղբյուրները կարող են հաջողությամբ օգտագործել Դիլիջանի կուրորտում: Հանքային ջուրը կարելի է շահերի մեջ լցնել և վաճառել:

Հանքավաճ: Հանքավաճի հանքային աղբյուրները ընկած են Հրազդան գետի ձախ վտակ Մարմարիկ գետի գեղատեսիկ կիրճում: Դրանք Հայկական ՍՍՌ Հրազդանի շրջանի Հանքավաճ (Միսխանա) գյուղից մեկ կիլոմետր երկարությամբ ձգվում են գետի հոսանքն ի վար:

Հանքավաճ գյուղը գտնվում է Երևանից 85 կմ, իսկ Հրազդան քաղաքից 35 կմ հեռավորության վրա: Այն Հրազդանի հետ կապված է ավտոմոբիլային բարեկարգ ճանապարհով:

Հանքավաճը մոտ է նաև Կիրովական երկաթուղային կայարանին, ընդամենը 17 կիլոմետր հեռավորությամբ, բայց այդ ճանապարհը մի նեղ կածան է, որն անցնում է Փամբակի լեռնաշղթայի Մայմեխի դժվարանցանելի լեռնանցքով:

Հանքավաճն ունի ծովի մակերեսություն 2000 մետր բարձրություն:


Մարմարիկ գետի կիրճը իրարից բաժանում է Փամբակի լեռնաշղթայի հարավային և Սաղկունյաց լեռների (Միսխանայի) հյուսիսային լանջերը: Այդ կիրճն իր բնական գեղեցկություններով և կլիմայական տվյալներով ռեսպուբլիկայի լավագույն բնավայրերի թվին է պատկանում: Այստեղ շկան

ուղղահայաց ժայռեր, զառիթափներ, ինչպես  
ջերմուկում և Արգնիում։ Բնովթյունը խաղաղ է և թույլ։ Եր-  
շանի ոելյեֆը մեղմ է, լեռների գծանկարը կոր։ Այն առատ է  
ոչ խոր և գեղեցիկ կիրճերով ու ձորերով, լեռնային սառնորակ  
գետակներով։ Խոնավության, լույսի և ջերմության առատու-  
թյունը լեռնային բարձունքները զարդարել է փարթամ ու  
շքեղ ծաղիկներով ծածկված ալպիական մարգագետիններով։  
Ինչ ծաղիկ ասես, որ այնտեղ չկա։ Երիցուկներ, վայրի մե-  
խակներ, զանգակածաղիկներ, անմտուսկներ, կակաչներ... Եվ  
դրանք բոլորը վառ են, խոշոր, բուրավետ... Նրանց հետ միա-  
սին աճում են մասուրի և ազնիվ մորու թփերը։ Լեռների ստո-  
րոտները ծածկված են մատղաշ սաղարթավոր անտառներով։  
Այստեղ տարածված են ցածրահասակ ուռենիները, կեչիները.  
կարճահասակ կաղնին, թզուկ գիճիները և այլն։

Հանքավանում բառացիորեն մի թզաշափ լերկ հող չկա,  
ողջ ծածկված է կանաչով։ Կանաչի շափազանց հարուստ  
նրբերանգների ներդաշնակումը կապույտ երկնքի և լեռնային  
մաքուր օդի հետ, ամուանը Հանքավանը դարձնում է մի  
դրախտավայր, որ բնությունն ինքն է ստեղծել հանդստի հա-  
մար։

Հանքային աղբյուրները բխում էին մի ամբողջ գոտով,  
մեծ տարածության վրա, բուն Մարմարիկ գետում և նրա եր-  
կու ափերին։ Դրանցից ամենախոշորների թիվը համարվում էր  
20-ի։ Շատ աղբյուրների ելքը ուղեկցվել է բուժիլ ցեխով,  
շատերինն էլ գեղեցիկ օնիքսաձև մարմարով, մի բան, որը  
վկայում է այդ աղբյուրների երթեմնի հզորության և բարձր  
չերմաստիճանի մասին։

Գետի հոմը լի էր նաև չոր ածխաթթու գազի ելքերով։  
Այդ լավ տեսանելի էր դառնում հատկապես անձրևից հետո,  
երբ ջրափոսերում գազի պղպջակներ էին երևան գալիս։ Հե-  
տախուզական աշխատանքների ժամանակ գետի ափին փոր-  
վել են 1,5—2 մ խորությամբ շուրջեր։ Դրանցում բանվորներն  
ստիպված էին հակագերով աշխատել, այլամես նրանք  
կարող էին թումավորվել ճեղքերից ելնող ածխաթթվով։ Մենք  
հաճախ հանքային աղբյուրների մոտ գտնում էինք գազից  
խեղդված մանր դաշտային կենդանիներ։



Նկ. 18. Հանքավան: Հանքային ջրի շատրվանը (հորատանողքից)  
լուսանկար՝ Ա. կ. Կադրամանովի

Մարմարիկ գետի կիրճում, 1952 թ. փորվեց մի քանի հո-  
րատանցք, որոնցից հանքային ջրի հսկայական շատրվաններ  
էր խփում (նկ. 18): Այժմ գործում են երեքը: Նրանց արտամղած  
ջրի ընդհանուր քանակը կազմում է օրական մոտ 3,0 միլիոն  
լիտր: Դրանցից մեկի ջրով աշխատում է ոչ մեծ մի շիշալցնող  
գործարան, որը տարեկան մոտ 2,5 միլիոն շիշ հանքային ջուր  
է թողարկում:

Հորատանցքերը փորելուց անմիջապես հետո հանքային  
ջրի բոլոր բնական ելքերը դադարեցին գործելուց: Բայց երե-  
վույթին ածխաթթվով հարուստ հանքային ջրի հզոր հեղեղը  
մակերևույթային շերտում խիստ մասնատվել էր և տարբեր  
տեղերից ցայտում էր որպես աղբյուրներ: Հորատանցքերը  
մեծ խորության վրա այդ ջրերը որսացին և երկրի մակերե-  
վույթ հանեցին:

Առանձին մանր աղբյուրների շերմաստիճանը տատան-  
վում էր 16-ից մինչև 24°-ի միջև, փոփոխություններ էին նը-  
կատվում նաև այդ աղբյուրների քիմիական բաղադրության  
մեջ: Այդ երկու երեսույթներն էլ, հավանաբար, կապված էին  
այդ ջրերը մակերևույթի մոտ գտնվող քաղցրահամ ջրերին  
խառնվելու հետ: Հորատանցքերով հանված հանքային ջուրը  
35° շերմություն ունի և քիմիական կայուն բաղադրություն:

Հանքային աղբյուրների շրջանում լեռնային ապառնե-  
րում երևան բերվեց Հանքավանի (Միսխանայի) կոտրվածքը: Հավանաբար դրա միջով բարձրանում են ածխաթթու գազի  
շիթեր, որոնք հագեցնում են հողի շերտերում և ապառների  
հեղքերում գտնվող ստորերկրյա ջրերը: Ածխաթթու գազի  
ճնշման շնորհիվ ջրերը վեր են բարձրանում և ելք գտնում այն  
մասում, ուր Հանքավանի կոտրվածքը հատվում է Մարմարիկ  
գետի հունի հետ:

Հանքավանի հանքային ջրերը իրենց քիմիական բաղա-  
դրությամբ հիդրոկարբոնատային-քլորիդային նատրիումային  
են, համեմատաբար մեծ տոկոս կազմող կալցիումի կամ էլ  
աղա-հիմքային և փոքր-ինչ կրային խառնուրդով: Մեկ լիտր  
ջրում լուծված նյութերի ընդհանուր քանակը հասնում է 5—7  
գրամի: Հանքավանի ջրերում միկրոէլեմենտներից հայտնա-  
բերվել են յոդը, բրոմը, պղինձը, մանգանը, ֆոսֆորը, սիլի-

ցիումը և բորը: Զովքը հագեցված է ածխաթթու գազով: Հանքավանի ջրերն իրենց ֆիզիկա-քիմիական հատկություններով շատ մոտ են Եսենտովի համար՝ № 4 և № 17 հանքային ջրերին:

Երկարամյա կլինիկական հետազոտությունների շնորհիվ պարզվել է Հանքավանի հանքային ջրերի թերապևտիկ արժեքը: Դրանք օգտակար են աղեստամոքսային, լյարդի, երիկամների և միզատար ուղիների հիվանդությունները, ինչպես նաև սննդափոխանակության խախտումները բուժելու համար:

Այդ ջրերը վաղուց ի վեր հայտնի են իրենց բուժիչ հատկություններով: Ամեն ամառ այստեղ ջրերով ու ցեխերով բուժվելու են գալիս շրջակա գյուղերի բնակիչները:

Այժմ մի քանի խոսք նրա կլիմայի մասին:

Հանքավանի կլիման նրա հանքային ջրերից պակաս հարստություն չէ: Ընկած լինելով բարձրադիր լեռներում, 2000 մետրից փոքր ինչ ավելի բարձրության վրա և աշխարհից կտրված լինելով անտառային շերտով, այն բացառիկ թափանցիկ և մաքուր օդ ունի, առատ արև, որը հատկապես հարուստ է ուղարամանուշակագույն ճառագայթներով: Բոլոր լեռնային բարձրադիր շրջանների նման այն ունի զով ամառ, մթնոլորտային ցածր ճնշում և օդի նուրացում: Հանքավանում ձմեռը համեմատաբար մեղմ է, բայց տևական: Զյան ծածկույթը նստում է նոյեմբերին—դեկտեմբերին և մնում մինչև ապրիլ: Ռելյեֆի ավելի բարձր մասերը մինչև մայիս ձյան տակ են մնում:

Չնայած տեղումների մեծ քանակին, այնտեղ խոնավություն չի զգացվում: Անձրևներ ամենից շատ գալիս են աշնանը, ուշ գարնանը (մայիս) և ամռան սկզբին (հունիս): Տեղատարափ անձրևները և խիստ մառախուղները շատ հազվադեպ են: Ամառը մեղմ է, քամիներ չեն լինում, շատ են պարզ օրերը:

Հովհանն և օգոստոսին շատ հաճախակի կարճատես անձրև է գալիս, որն ուղեկցվում է ամպրոպներով: Այդ սովորաբար օրվա երկրորդ կեսին է լինում, շատ կարճատես և դրանից հետո նորից իր իրավունքների մեջ է մտնում արևոտ օրը:

Ապարանի օդերևութաբանական կայանի տվյալներով տարեկան միջին ջերմաստիճանը Հանքավանում կազմում է

4,5°: Այն գրեթե հավասար է ջերմուկին, ավելի ցածր է, քան Աբասթումանիում և շատ ավելի բարձր, քան Դավոսում: Բացարձակ բարձր ջերմաստիճանը հասնում է 29—30-ի, նվազադույնը՝ 20—21-ի:

Զմռան միջին ջերմաստիճանը (նկ. 23) Հանքավանում շատ ցածր է՝ —7,9, նույնիսկ ավելի ցածր, քան Դավոսում, որտեղ —6,1 է և ջերմուկում՝ —6,3: Ջերմաստիճանը լինում է, միջինը՝ գարնանը 3,7, ամռանը՝ 15,9, աշնանը՝ 6,3, փոքր ինչ բարձր, քան ջերմուկում և շատ ավելի բարձր, քան Դավոսում: Մի խոսքով, Հանքավանում, ինչպես և ջերմուկում, կլիմայական այնպիսի պայմաններ կան, որոնք լեռնակլիմայական բուժման կարիք զգացող հիվանդների համար հաղվագյուտ են լինում: Նման կլիման բարելավում է շնչառությունը և արյան բաղադրությունը, նվազեցնում է սրտի գրգռվածությունը, կոփում և ամրապնդում է օրգանիզմը: Այն օգնում է բոլոր տուբերկուլյուզների բուժմանը, հանգստացնում նյարդային համակարգը: Լեռնա-կլիմայական բուժման համար այսքան բարենպատ պայմանների զուգակցումը Հանքավանի հաղվագյուտ բուժիչ չըների, տեղանքի գեղեցկության հետ, նրա առջև զարգացման լայն հնարավորություններ է բացում:

Այժմ Հանքավանը բոլոր հնարավորություններն ունի համամիւթենական նշանակության կուրորտ դառնալու համար:

Ահավասիկ այդ տվյալները. 1. Հանքային ջրերի հսկայական ելքը, 2. այդ ջրերի նմանությունը Եսենյառուկիի № 17 և № 4 հայտնի Հանքային ջրերին, 3. այդ ջրերի բուժիչ բարձր հատկությունները, 4. նրանցում ազատ ածխաթթվի հսկայական քանակության առկայությունը, 5. հիանալի կլիման և տեղանքի գեղեցիկ բնությունը, 6. հաղորդակցության լավ հանապարհները և այլն:

Հրագդանի շրջանում ծավալվել է խոշոր արդյունաբերական շինարարություն: Այդ իր հերթին կուրորտային շինարարությունը Հանքավանում օրակարգի հարց է դարձրել:

Սակայն, շնայած Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի մի շարք որոշումներին, Հանքավանի կուրորտի շինարարությունը շատ դանդաղ է ընթանում: Բուժիչ բարձր հատ-


կություններ ունեցող այդ ջրի մեծ ելքի համար գոյսվթյուն ունեցող լցնող գործարանը շատ փոքր է:

Անհրաժեշտ ջանք գործադրելու դեպքում Հանքամբ փայլուն ապագա է խոստանում:

Մարմարիկ գետի ավազանում Հանքավանը եղակի չէ:

Այդ նույն կիրճում, Հանքավանի հանքային աղբյուրներից 4 կմ հեռավորության վրա ընկած Կարմիր Հովիտ գյուղի մոտ, երկրաբանական նույն պայմաններում բխում է հանքային ջրերի ոչ մեծ մի խումբ: Դրանք պատկանում են Հանքավանի ջրերի տիպին, միայն ավելի սառնորակ են ( $9,5^{\circ}$ — $12,5$ ), ավելի թույլ են հանքայնացված (մեկ լիտր ջրում լուծված են  $1,2$ — $2,7$  գրամ նյութեր):

Այդ տեղամասում բացված հորատանցքը գետնի մա-



Նկ. 19. Հանքավանի անտառը

Լուսանկար՝ Ե. Ի. Գոլուխովից

սերևույթ է հանում նույն հանքային ջրի ոչ այնքան մեծ մի հոսանք: Ջուրն ունի թարմացնող հիանալի համ և կարող է դորժածվել որպես սեղանի բմպելիք:

Այդ աղբյուրներից փոքր ինչ ներքեւ, Ուշաշիկ գյուղի մոտ գտնվող կիրճում, տրավերտինային մեծ վահանի մոտ, բխում էր կրային բաղադրություն ունեցող Հանքային մի աղբյուր, որը  $10,6^{\circ}$  ջերմություն ուներ:

Այդ աղբյուրը, ինչպես և Կարմիր Հովիտ գյուղի մոտ բը-խող աղբյուրները, ըստ երևութին, կապված էին դարձյալ Հանքավանի (Միսխանայի) կոտրվածքի հետ:

1952 թվականին այստեղ բացվեց մի հորատանցք, որը Հանքային ջրի և գազի հսկայական հոսք տվեց: Հորատանցքից ժայթքող շատրվանի բարձրությունը հասնում էր 10 մետրի, ջրի ջերմաստիճանը՝  $9^{\circ}$ -ի: Որոշ ժամանակ անց հորատանցքից ժայթքող ջուրը սկսեց տատանումներով բխել և նրա հոսքը խիստ նվազեց: Այժմ այն խցանվել է:

Նրանից 15 կմ հեռու, Սաղկունյաց լեռնաշղթայի կիրճերից մեկում, Զառ (Կաբախու) գյուղի ավերակների մոտ, անտառում, Մարմարիկ գետը թափվող փոքրիկ գետակի ափին, գետի հունով, 0,5 կմ երկարության վրա Յ խումբ հանքային աղբյուրներ էին բխում: Այդ աղբյուրները ևս իրենց ծագումով պարտական էին նույն կոտրվածքի գոտուն:

Այստեղ, 1952 թ. ոչ խոր մի հորատանցք բացվեց, որի շնորհիվ ստացվեց հանքային ջրի մի շատրվան: Նրա ընդհանուր ելքը կազմում էր օրական մոտ 700 հազար լիտր: Իր բաղադրությամբ այն շատ մոտ էր Հանքավանի հանքային ջրերին:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Մարմարիկ գետի կիրճը լի է հանքային ջրերով: Այդ կիրճը հիանալի կլիմա ունի և շատ գեղեցիկ է: Նրա աջ ափը (Սաղկունյաց լեռնաշղթա) ամբողջ երկայնքով ծածկված է անտառով: Այն հատող ձորակներն ու ձորերը (այդ թվում նաև Զառի կիրճը) բառացի-որեն թաղված են կանաչ մեջ: Կլիմայական կուրորտ Սաղկաձորը (տես ստորև) ընկած է այդ անտառապատ կիրճերից մեկում:

Ինքը Մարմարիկ գետի կիրճը լայն է, ընդարձակ, այստեղ շինհրապարակներ կան: Այժմ այնտեղ կառուցվել են մշտական պիոներական ճամբարներ:

Մարմարիկի կիրճը կոչված է դառնալու համամիութենաման առողջարան:

Կամո: Կամո քաղաքի (նախկին Նոր Բայազետ) շրջանում հայտնի էին մի քանի հանքային աղբյուրներ: Նրանցից մեկը, ամենահետաքրքրականը, բխում էր բուն քաղաքում, Գավառագետի ձախ ափին, քաղաքային հիմանդանոցից ոչ հեռու: Երկրորդ աղբյուրը բխում էր Կամո քաղաքի ծայրամասում, Գավառագետի հովտում, սուր զառիթափի ձախ ափին, երրորդ աղբյուրը Կամո քաղաքից մեկ ու կես կիլոմետր հեռավորության վրա, Ա. Հովհաննեսի մատուտի մոտ: Մրանք սակավաջուր էին, սառը և ոչ այնքան էլ հաճելի համ ունեին, մի բան, որը հավանաբար, կապված էր նրանց ելման պայմանների հետ:

1954 թ. Կամո քաղաքի շրջակայքում, Գավառագետի ձախ ափին փորվեցին երկու հորատանցքեր: Դրանք անցան բազալտի լավայի մի քանի հոսք, որոնք միմյանցից բաժանված էին կավային ապառներով: Հանքային ջուրը պարունակող ջրաբեր ճեղքվածքը հանդիպեց ոչ մեծ խորության վրա: Երկու հորատանցքն էլ շատրվանում են: Ջրի օրական հոսքը կազմում է մոտ մեկ միլիոն լիտր, ջերմությունը՝  $17-18^{\circ}$ :

Ռեժիմային ուսումնասիրությունների և քիմիական անալիզների միջոցով պարզվեց, որ այդ ջրերը պատկանում են Եսենտուկիի և Հանքավանի ջրերի տիպին, միայն թե ավելի քիչ են հանքայնացված և սառնորակ են: Իրենց քիմիական բաղադրությամբ դրանք հիդրոկարբոնատային-քլորիդային նատրիում-կալցիումային են: Նրանց մեջ լուծված նյութերի ընդհանուր քանակը մեկ լիտրում 2,6 գրամ է:

Փոքրիկ լցնող գործարանը, որը կառուցված է Կամո քաղաքում, տարեկան թողարկում է «Սևան» պիտակը կրող մեկ միլիոն շիշ հանքային ջուր:

Այն վայրը, ուր բխում են այդ աղբյուրները, շատ առողջարար կլիմա ունի: Օդն այստեղ թարմ է, զով, մաքուր: Շրջապատը յուրօրինակ գեղեցկություն ունի: Այն բլրապատ մի սարավանդ է, որը կազմված է բազալտից: Կամո քաղաքից ոչ հեռու Սևանա լիճն է: Այս շրջանը կուրորտային շինարարության համար մեծ հեռանկարներ ունի:

Արարատ: Հանքային ջրերի արագատյան խումբը ընկած

է Հայկական ՍՍԻ հարավում, Վեդու շրջանի Արարատ ավանք և երկաթուղացին կայարանի մոտ:

Ավանը գտնվում է Երևանից 50 կմ դեպի հարավ-արևելք, Արաքս գետի ընդարձակ հովտում, որը կրում է Արարատյան անունը: Արարատ ավանը Վեդու շրջանի խոշոր բնակավայրերից մեկն է և նրա արդյունաբերական կենտրոնը: Այստեղ ցեմենտի մեծ գործարան կա, որը որպես հումք օգտագործում է Արարատյան հանքային ջրերի ղարավոր նստվածքը կազմող տրավերտինը: Արարատ կայարանով է անցնում Երևանը Բաքվի հետ կապող երկաթուղագիծը:

Արարատյան դաշտավայրը հարավում, դեպի Արաքս գետը փոքր ինչ թեքություն ունի: Նրա լայնությունն այստեղ հասնում է 10—12 կիլոմետրի, իսկ բարձրությունը ծովի մակերեսուց 800—900 մետր է: Արարատյան դաշտավայրը հարավ-արևմուտքից սահմանագատվում է Արաքս գետով, իսկ հյուսիսից, Արարատ դյուղից մոտ 4 կմ հեռավորության վրա, Ռոցի լեռնաշղթայով, որը հովտի մոտ միանդամից կտրվում է,

Ողջ Արարատյան հարթավայրը, այդ թվում և Արարատ ավանի շրջանը, կոնտինենտալ շոր կլիմա ունեն: Զմռանը Հայկական բարձրավանդակից այստեղ են իշնում սառը օդի զանգվածներ, այդ պատճառով էլ շրջանում ձմռանը ջերմաստիճանը բավականին ցածր է լինում: Գարնանից բարձրավանդակի ազդեցությունը թուլանում է և ամռանը հարթավայրում շատ բարձր ջերմություն է լինում: Շոգը տեսում է շորս ամիս:

Նախկինում Արարատյան դաշտավայրի փոքր մասն էր մշակվում: Հսկայական տարածություններ ծածկված էին աղուտներով, ճահիճներով, որոնք նպաստում էին մալարիայի տարածմանը:

Հայաստանում Սովետական իշխանության հաստատումից հետո, անցած տարիներին, Արարատյան դաշտավայրը խիստ վերափոխվեց: Ճահիճները շորացվեցին: Անջուր հողերը ոռոգվեցին: Նախկինում շօգտագործվող հսկայական տարածություններ այժմ զբաղեցված են խաղողի և մրգատուայգիներով:

Արարատ ավանից 35 կմ հեռու, պետական սահմանից այն կողմ, բարձրանում է երկպլխանի հսկան՝ Արարատը, որի անունով է կոչվում դաշտավայրը։ Ան նրա բնանկարի անբաժանելի մասն է կազմում։ Արարատն իր ալեհերովթյամբ և խստովթյամբ նախկինում ընդգծում էր արևով խանձված հովտի դեղնավուն ամայնությունը։ Այժմ այդիների կանաչի ետելում Արարատը թարմովթյամբ ու զովությամբ է շնչում։

✓ Արարատ կայարանից հյուսիս ընկած շրջանը հարուստ է աղբյուրներով և նրանց նստվածքներով։ Աղբյուրները դասավորված են երեք շարֆով, երկաթգծին և Ուրցի լեռներին զուգահեռ։ Հավանաբար այդ շարֆերը հնագույն կրաքարերը ճեղքող մեծ կոտրվածքների հետքերն են։ Զրերը խորքային են, թույլ թերմալ ( $24-26^{\circ}$ ) և կրաքարերի ճեղքերում շրջապտույտ կատարելով երկրի մակերես են ելնում կոտրվածքների գոտում։

✓ Արարատյան բոլոր աղբյուրները հիդրոկարբոնատային-կալցիումային կամ էլ կրային բաղադրություն ունեն։ Դրանք բայցայում են կրային հզոր պատվարը։ Զրերը հարուստ են միկրոէլեմենտներով, այսինքն մեծ քանակովթյամբ ստրոնցիում, բրոմ, յոդ, ինչպես նաև պղինձ, երկաթ, արծաթ և կապար են պարունակում։

Այդ զրերը համեմատաբար թույլ են հանքայնացված։ Երկրի ընդերքում դրանք ուժեղ կերպով հագեցված են երկածխաթթվային կրով, բայց գետնի մակերես ելնելիս, կորցընում են ածխաթթու գազը, իսկ կիրը նստվածք է տալիս տրավերտինի ձևով։ Տրավերտինի առաջացման պրոցեսը ինտենսիվորեն տեղի էր ունենում հնում, այժմ բառացիորեն մեր աշքի առջև։ Մի շարք աղբյուրներ խցանվել են իրենց իսկ նստվածքներով։

Աղբյուրներից առաջացող կրային գոյացումները փակում էին ոռոգիլ ջրանցքները (այդ աղբյուրների ջուրն օգտագործվում էր ոռոգման համար) և գյուղացիները ստիպված էին լինում նոր ջրանցքներ փորել։

Աղպիսով, աղբյուրների շրջակայքը ծածկվել է տրավերտինի շերտով, ուր պարզորոշ երեսում են նախկին ելքերի և ոռոգիլ առվակների հետքերը։

Գյուղից հյուսիս և հյուսիս-արևելք տրավերտինները մեծ տեղ են գրավում, կազմելով ոչ մեծ մի լեռկ բլուր: Այդ հովանքով է աշխատում Արարատի ցեմենտի գործարանը: Այդ բլուրի տրավերտինային նստվածքները ձգվում են մի քանի կիլոմետր հյուսիսից-հարավ և լեռկ թեքություններով իջնում դեպի երկաթուղային կայարանը: Դրանք ծակոտկեն, սպիտակ տրավերտիններ են, որոնց վրա կան տերևների և բույսերի բազմաթիվ հետքեր: Տրավերտինի դատարկ մասերում երբեմն երևում են կալցիտի բյուրեղիկների փնջեր:

Սակայն վերադառնանք հանքային աղբյուրներին: Նրանց առաջին գիծը անցնում էր երկաթգծի մոտով: Այդ գծի վրա կային մոտ 8 հանքային աղբյուրներ: Նրանցից ամենախոշորներին տեղական բնակիչները միասժամանակ կոչում էին Աղբյու (Սպիտակ լիճ), Կոտկիրի գյուլ (Կրիայի լիճ), Իլիջիք և այլ անուններ:

Այդ շրջանում, նույնիսկ ողջ Հայաստանում ամենամեծ աղբյուրը Աղ-գյուն է: Այն կազմում է բյուրեղի նման մաքուր ջրի ոչ մեծ մի լիճ, որի հատակից գազ է դուրս գալիս, որը բաղկացած է ազոտից և ածխաթթվի ոչ մեծ խառնուրդից:

Այդ աղբյուրի հոսանքը այնքան մեծ էր, որ տեղական բնակիչները նրա միջոցով ջրաղաց էին աշխատեցնում: Այնուհետև այդ աղբյուրի վրա արհեստական ջրավազան կառուցվեց, որը օգտագործվում էր բուժիչ լոգանքների համար:

Կոտկիրի գյուլ աղբյուրի մոտ կառուցվեց ոչ մեծ մի ավազան, որի ջուրն օգտագործում էին ոսողման նպատակով: Իլիջիք աղբյուրի մոտ նույնպես մի ավազան կառուցվեց, որի հատակից ուժգին շիթերով շատ զուլալ ու մաքուր ջուր էր բխում: Զրամբարի եղբերին ջուրը սպիտակ տրավերտինի շերտ էր առաջացնում:

Ավելի փոքր աղբյուրների երկրորդ գիծը ձգվում էր Ուրցի լեռների ստորոտով: Երրորդ գիծը անցնում էր բուն լեռնաշղթայով:

Այդ աղբյուրների արտամղած ջրի ընդհանուր քանակը հսկայական չափերի էր հասնում, ընդ որում, բոլոր աղբյուրներն էլ գոլ էին,  $20-24^{\circ}$  ջերմությամբ:

Արարատի հանքային ջրերի շրջանում Հայկական ՍՍՌ երկրաբանական վարչությունը հորատման մեծ աշխատանքներ է տարել, որի հետևանքով հզոր շատրվաններ խփեցին, որոնց արտամղած ջրի ընդհանուր քանակը օրական մոտ 14 միլիոն լիտրի է հասնում: Ջրի ջերմաստիճանը  $24-26^{\circ}$  է:

Արարատյան հանքային աղբյուրների թույլ հանքայնացված հիդրոկարբոնատային-կալիումային գոլ ջրերը իրենց բաղադրությամբ և բուժիչ հատկություններով շատ մոտ են Վիլդունգենյան կալցիումային աղբյուրներին և Ծղալտուրոյի ջրերին:

Սրանք հայկական հանքային ջրերի մեջ աչքի են ընկնում իրենց պարունակած բնական գազով: Եթե Հայկական ՍՍՌ գրեթե բոլոր հանքային ջրերում ածխաթթու գազը տարրալուծված բնական գազի  $98-99$  տոկոսն է կազմում, ապա այստեղ ածխաթթվի քանակը նվազում է ի հաշիվ աղոտի (որը հանդես է դալիս աղնիվ գազերի հետ), որը հասնում է  $61-62$  տոկոսի, իսկ թթվածնի քանակը մինչև  $7$  տոկոսի:

Արարատյան հանքային ջրերն օգտագործող հիվանդների վրա կատարած նախնական կլինիկական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դրանք հաջողությամբ կարող են օգտագործվել երիկամային հիվանդությունների, պողագրայի, խրոնիկ միզաթթվային դիատեզի, շաքարախտի, կալցիումի կարիք ունեցող մի շարք մանկական հիվանդությունների, կանացի հիվանդությունների, խրոնիկ հողային ռևմատիզմի, նեվրիտների և նեվրալգիաների բուժման համար:

Այսպիսով, Արարատյան ջրերն իրենց բուժիչ հատկություններով էլ Հայկական ՍՍՌ հանքային ջրերի մեջ հատուկ տեղ են գործում:

Այդ ջրի ընդունումը լավ էֆեկտ է տալիս երիկամային հիվանդությունների բուժման ժամանակ: Այդ հիվանդությունների բուժմանը նպաստում է նաև Արարատյան դաշտավայրի չոր կլիման: Խաղողի այգիների առկայությունը շրջանում հնարավորություն է տալիս զուգահեռ կերպով անցկացնել նաև խաղողի միջոցով կատարվող բուժում: Բնական է, որ նման հարստությունների նկատմամբ հնարավոր չէ անտարերմանալ: Արարատում պետք է ստեղծվեն երիկամային հիվան-

դություններով, հոգացավերով և ոախիտով տառապող երեխաների բուժման առողջարաններ:

Արարատի կլիման շատ հեռու է կուրորտայինից: Այն գտնվում է անապատակիսանապատային գոտում, ոնի շորմայրցամաքային կլիմա:

Ողջ Արարատյան հարթավայրի կլիմայի բնորոշ առանձնահատկությունը սուր կոնտինենտալությունն է, օդի ջերմաստիճանի տարեկան և օդական մեծ տատանումներով: Անդրկովկասում օդի տարեկան ամենամեծ տատանումներն այստեղ են լինում: Կլիմայի սուր կոնտինենտալությունը բացատրվում է ամռանը իրանից փշող և ձմռանը սառը քամիների ներխուժմամբ:

Արարատյան դաշտավայրը Անդրկովկասի ամենաչորային շրջաններից մեկն է, որը բացատրվում է, գլխավորապես հովտի ներփակությամբ: Այստեղ տարեկան ընդամենը  $200+300$  մմ տեղումներ են լինում, հիմնականում գարնանը և մասմբ ձմռանը ձյան ձևով:

Արարատյան դաշտավայրում ամռանը շոգ է, տոթակեզերեք ամիս անընդհատ ջերմաստիճանը  $25^{\circ}$ -ից մի իշնում, բացարձակ բարձրագույնը հասնում է մինչև  $41^{\circ}$ -ի: Հողը ուժեղ տաքանում է և տաքացնում նաև օդը, որը շատ շոր է, խոնավության պակասը շատ զգալի: Ահա այս շոգն ու շրությունը, որոնք տանջալից են առողջ մարդու համար, բուժիչ են երիկամային և ուսմատիկ հիվանդների համար: Նկատի ունենալով, որ Արարատյան ջրերը հասու են այս նույն հիվանդությունները բուժելու, Արարատ ավանի շրջանը բոլոր տվյալներն ունի այնտեղ երիկամային և ուսմատիկ հիվանդների համար ամառային առողջարան ստեղծելու:

Տարե: Տաթեկի հանքային աղբյուրները գտնվում են Հայկական ՍՍՌ հարավում, Զանգեզուրում, Գորիսի շրջանի Տաթեկյուղից 2 կմ դեպի արևելք, Որոտան գետի աջ ափին:

Այդ հանքային աղբյուրները հայտնի են նաև «Սատանի կամուրջ» անունով: Դրանք բխում են Որոտան գետի խորհումի հատակից, ծովի մակերեսույթից 1100 մետր բարձրության վրա:

Այն վայրը, որը բխում են այդ աղբյուրները, տիպական

է Զանգեղուրի համար: Որոտանի կիրճը կազմված է բարձրա-  
լիեղ ժայռերից ու քարափներից: Վերելքը կիրճից նվազ մատ-  
չելի է և դժվարին: Կիրճի լանջերը ծածկված են կարճ թփուտ-  
ներով: Դեպի Որոտան գետն են իշնում բազմաթիվ խոր ձորեր  
իրենց լեռնային սրբնթաց առվակներով, որոնք կիրճ են բե-  
րում ապառների մեծ բեկորներ:

Տեղանքը պաշտպանված է քամուց և աշքի է ընկնում իլլ-  
մեղմ կլիմայով: Այն բնակեցված է եղել դեռևս հնագույն ժա-  
մանակներից, այդ է վկայում աղբյուրներից ոչ հեռու գտնվող  
«Անապատ» վանքը, որը պատկանում է VII—IX դարերին:   
Այն հայկական հնագույն ճարտարվեստի լավագույն հուշար-  
ձաններից մեկն է: Վանքը շրջապատված է բերդապարիսպով  
(նկար 20):


Ինքը Սատանի կամուրջը, որից և հանքային աղբյուրներն-  
իրենց անուններն են վերցրել, հանքային աղբյուրների նրատ-  
վածքներից կազմված մի գոյացում է: Աղբյուրների ջրերից  
առաջացած կրակազմությունները, որոնք գոյացել են ծակու-  
կեմ տրավերտինների ձևով, մի ափից մյուսն են անցել և ըբե-  
հոսանքի վրա դեղեցիկ կամուրջ են կազմել:

Մարիետա Շահինյանը, որ այդ աղբյուրները անսել է  
Զանգեղուր կատարած ուղևորության ժամանակ, դրանք այս-  
պես է նկարագրում. «...Այստեղից զարիթափ վայրէջք է բա-  
կըսվում և ներքնում բնական հետաքրքիր մի երկույթ՝ գետակե-  
վրա մի կամուրջ, որը կոչվում է Սատանի: Այստեղ ողջ ան-  
դանքը հարուստ է հանքային աղբյուրներով: Կիրճը, որը զե-  
ֆորմացիայի է ենթարկել կրաջուրը, քարայրներով ու սու-  
լակտիտային այրերով է լցված:

Զուրը նետված ծառի ճյուղը մի օրից հետ վերածվում է  
քարացած գեղեցկության: Ինքը Սատանի կամուրջը ոչ այլ ինչ  
է, եթե ոչ բնական մակաճ, որի տակով գետն իր ճանապար-  
հուվ է վազում, և դուք միայն նրա սլացքի աղմուկն եք լսում,  
բայց բուն գետ չի երևում»<sup>1</sup>:

Հանքային ջուրն ունի մի քանի ելք, որի ընդհանուր քա-  
նակը օրական մոտ 500—600 հազար լիտր է կազմում: Աղ-  
բյուրների ջերմությունը  $25^{\circ}$ -ի է հասնում: Աղբյուրները բխում

<sup>1</sup> Мариятта Шагинян, Занげзурская медь, 1927.



Նկ. 20. Տաթևի վանքը

Լուսանկար Ե. Պ. Մալիսայոնի

են գրեթե հորիզոնական ձգվող կոպիտ-շերտավոր կրաքարերից, որոնց պարտական են իրենց կրային բաղադրությամբ:

Աղբյուրների ակոնքների մոտ պահպանվել են քարեհնագույն ավաղանների մնացորդները, որոնք կառուցվել են տրավերտինների մեջ: Այդ վկայում է նրանց մասսայականության մասին, մի բան, որը տանում է դեպի հեռավոր անցյալ:

Ա. Ռ. Գալստյանի տվյալներով «Տաթևի հանքային աղբյուրների ջրերը պատկանում են հիդրոկարբոնատակալցիումային տիպին, երկաթի ոչ մեծ պարունակությամբ, ածխաթթու գազի զգալի քանակությամբ, հանքային նյութերից շափակոր համակենտրոնացմամբ և կիսլովոդսկի «Նարզանի» մոտիկ կրկնօրինակն են հանդիսանում: Վերջինիս մեջ սովորականների քանակը փոքր-ինչ ավելի է»<sup>1</sup>:

Մասնագետների կարծիքով (պրոֆ. Ա. Հակոբյան և ուրիշներ) Տաթևի հանքային ջուրը հատկապես ուժամատիկ և որոշ մաշկային հիվանդությունների համար որոշակի բուժիչ նշանակություն ունի: Այն բուժում է նաև նեվրալգիան: Խմելու համար ջուրը օգտակար է նյութերի փոխանակության մի շաբաթիվանդությունների դեպքում: Բացի այդ, այն սեղանի շատրւավ խմիչք է:

Տաթևի հանքային աղբյուրների մասին պրոֆ. Ա. Ա. Ֆլորենսկին գրում է. «Սատանի կամուրջ աղբյուրները բնության հրաշագեղ հուշարձաններ են, որոնք հիացմունք են պատճառում իրենց յուրահատկությամբ և գեղեցկությամբ: Նրանց ծակոտեն տրավերտինները, որոնք աջ ափից ձգվել են գեղեց ծախ ափից, ջրի հորդ հոսանքի վրա բնական կամուրջ են կազմել: Բնական այդ կամուրջը Տաթև գնացող հեծյալ և հետեւակուղերների համար որպես անցում է ծառայում:

Խոր անցյալից հայտնի այդ զարմանալի կամարը դարդարված է բազմաթիվ ստալակտիդներով, այրերով, որոնք քողարկում են հանքային գոլ ջրերի ավաղանները: Աղբյուրի շրջակայքի առողջարար կլիման, գեղեցիկ տեղանքի հարաւա-

<sup>1</sup> А. Р. Галстян, «Минеральные воды юго-восточных районов Армянской ССР и перспективы их использования». Известия АН АрмССР, сер. геол. и геогр., том XII, № 2, 1959.

բուսականությունը, ինչպես և շինությունների առկայությունը  
իարող է կուրորտ ստեղծելու համար բազա գտնուալ: ....Կապ-  
տաժի կառուցման ժամանակ պետք է շատ խնամքով հետեւ  
աղբյուրի բնական գեղեցկության պահպանմանը, որը բացա-  
ռիկ է նույնպես գեղեցկություններով հարուստ Անդրկովկասի  
համար»:

Այսպիսով, բոլոր տվյալները՝ տեղանքի գեղեցկությունը,  
Ալիմայական բարենպաստ պայմանները, ջրերի բուժիչ հատ-  
կությունները, նրանց առատությունը և այդ աղբյուրների մո-  
տիկությունը Ղափանի արդյունաբերական շրջանին վկայում  
են այն մասին, որ Տաթեսի հանքային աղբյուրների բազայի  
վրա հնարավոր է թեկուզ և ուսալութիկական նշանակություն  
ունեցող լավ կուրորտ ստեղծել:

Արագած: Զյունամած քառաղաղաթ գեղեցկութի Արա-  
գածը, Հրաբխային ծագում ունեցող հայկական լեռնապարի  
մեջ իր բարձրությամբ երկրորդ (Արարատից հետո) ալդ լեռը  
առողերկրյա ջրերի մի հսկայական շտեմարան է: Արագածի  
զանգվածի կլիման սառնաշունչ է, լեռնային, մեծ քանակու-  
թյամբ մթնոլորտային տեղումներով, որոնք տարեկան հաս-  
նում են 900 միլիմետրի:

Այդ զանգվածը կազմված է երիտասարդ լավաներից,  
որոնք մեծ մասամբ ուժեղ կերպով ճաքճքված են և ծակու-  
կեն: Մթնոլորտային տեղումները լավաների ճեղքերից թա-  
փանցում են երկրի ընդերքը:

Հրաբխային լավաների հոսքերն ավարտվելուց հետո ոիսի  
և վլուգմի դարաշրջաններում, Արագած լեռը սառցակալել է:  
Սառցադաշտերը ձևավորել են ժամանակակից կիրճերն ու  
վմբերդ, Գեղաձոր, Մանթաշ և այլ գետերի հովիտները: Սառ-  
ցապատումն ու ցրտային հողմնահարությունը ուժեղ կերպով  
քայքայել են լեռնային տպաները, որոնք գոյացել են մեծ  
կույտերի ձևով, այսպես կոչված «շինդիլներ»: Այս վերջին-  
ներս ձյան և անձրևների հիանալի կոլեկտորներ են: Զնայած  
որ Արագածը լիովին հագեցված է ստորերկրյա ջրերով, նրա  
լանջերը հիմնականում աղքատ են աղբյուրներից, որովհետեւ  
ակումքները մեծ մասամբ դուրս են գալիս լեռան ստորոտնե-

րում և սնում են Այդր լիճը, Սև ջուղը և Արարատյան դաշտավայրը:

Գեղաձոր, Ամբերդ և Մանթաշ կիրճերի վերին մասերում հանքային աղբյուրներ են բխում: Դրանց ջրերը քիչ են հանքայնացված և մաքուր ջրերից միայն նրանով են տարբերվում, որ հագեցված են ածխաթթվով ու համեմատաբար մեծ քանակությամբ սիլիցիում են պարունակում: Հավանաբար նրանց կազմավորումը հետևյալ ձևով է տեղի ունենում: Մըթնոլորտային տեղումները, որոնք ֆիլտրվում են լեռան խառնարանի շրջանում, մերկացած դացիտային լավաներում, նրանց ճեղքերով վար, դեպի այդ կիրճերն են շարժվում, ուր և դուրս են դաշիս աղբյուրների ձևով: Ճանապարհին նրանք հարստանում են ընդերքից ելնող ածխաթթվով:

Արագած լեռան կիրճերում բխող հանքային աղբյուրները մեր առջև հետաքրքիր տեսարան են բաց անում:

Գեղաձոր գետի կիրճն իր վերին մասերում կազմված է տեղ-տեղ ֆիոնալին սառցադաշտերով ծածկված բարձր և լուսաներից: Կիրճի լանջերը աստիճանների ձևով հասնում են մեծ բարձրության: Գեղաձոր գետակը գահավեժ զառիթափերից բարձր ջրվեժներ է կազմում: Այստեղ ընդամենը երկու հանքային աղբյուր կա, դրանք ընկած են լեռան լանջին կողքիով: Դրանցից մեկը, մեծը, որը օրական մոտ 250—350 հազար լիտր ջուր է արտադրում, երկաթային նստվածք է տալիս և աղբյուրների շրջանը ներկում օխրա-դեղնավուն գույնով: Հանքային ջրերի առվակը թափվում է Գեղաձոր գետակի մեջ, որի հունը որոշ տարածության վրա ներկված է օխրայով: Մեծ աղբյուրի ջերմաստիճանը ընդամենը 6 է:

Արագած լեռան հարավային լանջը կտրատող Ամբերդ գետի կիրճի վերին մասերում, հանքային աղբյուրները երկու միմյանց մոտ տեղում են բխում: Աղբյուրների առաջին խումբը ընկած է այնտեղ, ուր Ամբերդ գետակը, անանցանելի ժայռերի գոտին անցնելով, դուրս է գալիս ալպիական բուսականության գոտի: Զուրը ժայռերի ճեղքվածքներից դուրս է գալիս տարբեր տեղերում և, միանալով, կազմում է վտակ, որը թափվում է Ամբերդ գետը: Այս երկու խմբի ջրերն էլ իրենց հոսանքում կարմիր հետք են թողնում: Դրանք սառնորակ են,

Հագեցված մեծ քանակությամբ ազատ ածխաթթվով, հաճելի համ ունեն, որովհետև մեկ լիտրում ընդամենը կես գրամ լուծված նյութեր են պարունակում: Այդ աղբյուրների արտամղած ջրի քանակը շատ մեծ է: Իրենց բաղադրությամբ դրանք հիդրոկարբոնատային-կալցիումային են, մագնեզիումի և նատրիումի զգալի խառնուրդով:

Արագած լեռան հյուսիսային լանջը կտրող Մանթաշ գետի կիրճում հանքային ջրերի երեք խոշոր աղբյուր կա, որոնց ջերմաստիճանը տատանվում է 7—10-ի միջև: Նրանց արտամղած ջրի ընդհանուր քանակը օրական հասնում է մոտ 6 միլիոն լիտրի: Այդ հանքային ջրի մի ամբողջ առվակ է, որի ջրերը զուզալ են, անդույն, ածխաթթվով խիստ հագեցված: Ջրերն իրենց ելման տեղում երկաթի աղերի նստվածք են տալիս և իրենց քիմիական բաղադրությամբ հիդրոկարբոնատային, կալցիում-մագնեզիում-նատրիումային են: Բնական գազի մեջ ածխաթթուն 83—87 տոկոս է կազմում, իսկ ազոտը՝ 13—17 տոկոս:

Ինքնին հետաքրքրական է այն փաստը, որ հանքային ջրերը բխում են ծովի մակերևույթից 4000 մ բարձրության վրա: Շվեյցարիայում հայտնի են 3136 մ բարձրության վրա գտնվող աղբյուրներ (Zermatt-Cornergrat) և շնայած այն բանին, որ դրանք շահագործման են ենթարկվում, բայց Արագածի աղբյուրների համար օրինակ հանդիսանալ չեն կարող: Արագածի աղբյուրների հսկայական բարձրությունը, ինչպես և տեղանքի ժայռամած բնույթը, դժվարամատշելի կիրճերը նրանց շահագործման հնարավորություն չեն տալիս:

Կարելի էր դրանց շահագործման մասին հոգ տանել, եթե այդ ջրերը որևէ առանձնահատուկ բուժիչ հատկություն ունենային, և եթե Հայաստանում դրանցից զատ հարմար տեղում ընկած ուրիշ հանքային աղբյուրներ չկինեին: Արագածի հանքային ջրերի թերապևտիկ հատկություններն առաջման հայտնի չեն:

Կույրիշ (Աև գետակ): Ստեփանավանի շրջանում, Կույրիշն գյուղից 10—12 կմ հեռու, գետի ընթացքի վերին մասում կա մի վայր, որը տեղացիները կոչում են Առ Կարիշան («Բարեկամ ջրեր»): Այստեղ միմյանց են խառնվում ըն-

դառաջ սլացող երկու լեռնային գետակներ Դեղինը և Սերբ Միախառնվելով, դրանք կազմում են մի գետ, որը լայն հովտով հոսում է դեպի Կույբիշև գյուղը և նրա մոտով անցնում դեսլի, Ստեփանավան քաղաքը, ուր և թափվում է Զորագետի մեջ:

Դեղին և Սև գետակների հովիտները առաջացել են մեծ կոտրվածքի դուռը, որի հետ է կապված այն ոչ մեծ հանքային աղբյուրների առաջացումը, որոնցից մեկը գտնվում է Դեղին և երկուաը՝ Սև գետակների վրա:

Դեղին գետակի վրա ելնող աղբյուրը բխում է նաև աջ ափում, Սու-Կարիշան վայրից մոտ 5 կմ հեռու և գետակից 5 մետր բարձրության վրա: Աղբյուրի ելման վայրի բացարձակ բարձրությունը 1850 մետր է: Զուրբ հստակ է, անգույն, անհոտ, խիստ հագեցված է գաղով, բարախող է և թույլ հանքայնացված: Նրա ջերմաստիճանը 9,5 է, օրական դեբիտը մոտ 40 հազար լիտր: Այդ հիմնական աղբյուրի կողքին կան և ջրի մի քանի թույլ ելքեր: Աղբյուրի շրջապատը ճմակալած է, տեղ-տեղ ճահճակալած: Աղբյուրի ջուրն իր բաղադրությամբ հիդրոկարբոնատային-քլորիդա-սուլֆատային է, նատրիում-մագնեզիումային:

Սև գետակի աղբյուրներից մեկը, փոքրը, բխում է Հանքափոր ձորակի մոտ, ձորաբերանին, գետակի ափին, նրա բերած նստվածքներում: Նրա ջրի քանակը աննշան է, ջերմությունը  $12,5^{\circ}$ : Հանքային աղբյուրի ջուրն իր քիմիական բաղադրությամբ հիդրոկարբոնատային-քլորիդային է, կալցիում-մագնեզիում-նատրիումային:

Սև գետակի երկրորդ հանքային աղբյուրը իրենից մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Աղբյուրը բխում է Սարյալի քոշատեղում, Սու-Կարիշան վայրից 2,5 կմ հեռու, Սև գետակի ծախակողմյան մեծ վտակի ափին, նրանից 500—600 մ հեռավորության վրա:

Հանքային աղբյուրից փոքր ինչ ներքեւ ընկած է բուժար ցեխ ունեցող մի ճահճակալած հրապարակ, ուր նկատելի է գաղի առկայությունը: Հանքային աղբյուրի ակումբից վեր կա ոչ այնքան բարձր մի տրավերտինային գմբեթ (որը գետակից 10—15 մետր բարձր է ընկած): Բատ երեսովին տրավեր-

տինը քոշատեղելում մշակվում էր և օգտագործվում շինարարության համար: Այդ գմբեթի մոտից հանքային ջուրը հոսում է դեպի արհեստական ջրամբարը, որի տրամադիծը 5 մետր է և որի մակերևույթին ուժեղ խլխլթում է տեղի ունենում:

Ջուրը շատ դազ է պարունակում. մաքուր է, հստակ և հաճելի համ ունի, հագեցված է մեծ քանակությամբ ածխաթթվով, սպիտակ նստվածք է տալիս և 22ի մեջ արագ պղտորվում է:

Այդ հանքային աղբյուրը տեղական բնակիչների մոտ որպես բուժիչ չը է մեծ համբավ ունի: Պետք է ասել, որ այս աղբյուրը ուսուլութիւնայի շետազոտված աղբյուրների մեջ կարևորներից մեկն է: Բոլոր տվյալները վկայում են այն մասին, որ նույնիսկ ոչ խոր հորատմամբ և անգամ գործություն ինչ մաքրելու դեպքում ջրի քանակը տասնյակ անգամ կավելանա:

Այժմ նրա արտամղած ջրի քանակը ոչ լրիվ հաշվարկումներով հասնում է օրական 10—15 հազար լիտրի, զերմաստիճանը 8,6 է: Իր բաղադրությամբ այն հիդրոկարբոնատային, կալցիում-նատրիումային է կամ էլ կրա-հիմքային: Միկրո-էլեմենտներից պարունակում է սիլիցիում, երկաթ, մանգան, ալյումինիում և պղինձ:

Աև և Դեղին գետակների աղբյուրները ուշագրավ են և այն պատճառով, որ գտնվում են շատ առողջարար վայրում, որը ինքնին արդեն կլիմայական մի կուրորտ է:

Սու-Կարիշան վայրում կոռու հարթավայրը վերածվում է մեղմոցին գծագրված մի լեռնափնջի, որը ծածկված է սուքալպիական մարգագետիններով, որոնք արոտատեղ են և տեղացիներին խոտի մեծ պաշար են տալիս: Հանքային աղբյուրները բխում են այդ լեռների կիրճերում: Այստեղ հիանալի կենարար օդ կա: Ճիշտ է, անտառային բուսականություն չկա, ծառերը հատ ու կենտ են, բայց դրա փոխարեն մարդու բարձրության են հասնում խոտն ու փարթամ ծաղիկները:

Նման պայմաններում հանքային ջրերի առկայությունը շատ է նպաստում կուրորտային բուժման կազմակերպմանը: Ստեփանավանի շրջանում կլիմայական բուժման առողջարանների կառուցումը այսօր պետք է օրակարգի հարց դառնա:

Մայմեխի աղբյուրը: Այս հանքային աղբյուրը «Տաք աղ»

բյուկ» տեղական անունն է կրում։ Գտնվում է Կիրովականի շրջանում, Փամբակի լեռնաշղթայի Մայմեխ լեռան ստորոտում, Փամբակի լեռնաշղթայի հյուսիսային լանջով անցնող և Փամբակ գետի Գարփի վտակը թափվող լեռնային ձորակի խոր կիրճում։ Ծովի մակերևույթից բարձր է 2000 մ։

Տաք աղբյուր տանող ճանապարհը անցնում է Կիրճով, դեպի վեր, այդ գետակի գետաբերանի մոտ ընկած Խնձորուտ դյուլի մոտով։ Խնձորուտից մինչև Հանքային աղբյուրը ընդամենը 6 կմ է։ Աղբյուր ճանապարհն անցնում է խիտ անտառի միջով, աղբյուրին մոտենալով, անտառաշերտը վերջանում է և սկսվում են տլադիական փարթամ մարդագետինները։

Աղբյուրը բխում է գետակի աջ ափից 250—300 մետր բարձրություն ունեցող մամուկալած, բաց-մոխրագույն ժայռի ճեղքերից։ Ջրի ելքի մոտ, այդ նույն ժայռում առաջացել է բնական մի ավազան, ուր ջուրը հավաքվելով, երկու մետրանոց զառիթափից թափվում է կանաչ մարդագետնի վրա։

Ամպամած օրերին աղբյուրի վրա գոլորշի է երևում. ջերմությունը 27 աստիճան է։ Ջուրը հստակ է, անգույն, տհաճ համ ունի, գերիտը մեծ է, օրական մոտ 120 հազար լիտր։ Իր բաղադրությամբ ջուրը հիդրոկարբոնատային-սուլֆատո-քլորիդային, նատրիում-կալցիումային է։

Հանքային աղբյուրը շրջանում բուժարար ջրի համարում ունի։ Շրջակա գյուղերի բնակիչները բուժվելու համար այնտեղ են դնում։ Շրջանը առողջարար կլիմա ունի։ Նրան մոտ են Կիրովական քաղաքն ու Երկաթուղային կայարանը։

Ախուրյան։ Այսպես ենք կոչում այն հանքային ջրերը, որոնք հայտնաբերվել են Լենինականի գոգավորության հարավում ընկած լճային նստվածքների տարածման շրջանում Ախուրիկ, Գետք, Երազգավորս, Բայանդուր, Գուսանգյուղ, Նորաբեր և Շիրակավան գյուղերի մոտ։

Հայտնի է, որ հանքային ջրերի բնական աղբյուրներ կան Ախուրիկ, Բայանդուր և Ջրառատ գյուղերի մոտ։ 1956—57 թթ. Հայկական Երկրաբանական վարչությունը աշտեղ հորատման աշխատանքներ էր տանում։

Հորատանցքերը բացեցին շատրվանով հանքային ջրեր։ Այդ ջրերը տարբերվում էին մինչ այդ Հայաստանում եղած

Հանքային ջրերից, համը տհաճ էր, հոտած ձվի ուժեղ հոս էր գալիս (ծծմբաջրածին): Ընդամենը շատրվանում էր 18 հորատանցք, արտամղելով օրական 100 հազարից մինչև 1700 հազար լիտր ջուր: Այդ ջրերի քիմիական բաղադրությունը բավականին խայտաբղետ է. հիդրոկարբոնատա-նատրիումային, սուֆատա-նատրիումային և քլորիդա-մագնեզիումային: Ջրերը խիստ հանքայնացված են, բացի ծծմբաջրածնից նրանցում մեծ քանակություն է կազմում ածխաթթու գազը:

Ածխաթթվա-ծծմբաջրածնային ջրերը շայաստանում տուածին անգամ էին հանդիպում: Նրանք մեկով ավելացրին շայաստանում եղած բնական ածխաթթվային ջրերի բազմազանությունը: Ախուրյանի ջրերը կարող են հսկայական թերապևտիկ նշանակություն ունենալ: Տեղանքը առողջարար կլիմանի: Այս իր հերթին ընդայնում է այդ ջրերի օգտագործման հեռանկարը: Ջրի պաշարը շատ մեծ է և մինչև այժմ այն օգտագործվում է Լենինականի գոգավորության հարավային մասի բերրի հողերը ոռոգելու համար:

Արգինի: Արգիճի գետի ավազանը վարչական տեսակետից մտնում է Մարտունու շրջանի մեջ: Այն հիմնականում, բարձր լեռնային հարթավայր է, որն առաջացել է Աղմաղանի (2844 մ) հրաբխային բարձր կոնի լավաներից, որոնք շրջափակել են Արգիճի գետի ավազանի վերին հոսանքը:

Ամռանը Արգիճին ծաղկող կանաչ հովիտ է, իր շրեղ մարգագետիններով:

Այս շրջանը, ինչպես և մյուսները, իր երկրաբանական կազմավորման երկարատև շրջանում, ապրել է լեռնակազմության բարդ պրոցեսներ: Համեմատաբար ոչ հեռու երկրաբանական շրջանում նրա հնագույն ոելյեֆը լցված է եղել Աղմաղանից ժայթքող լավաներով: Հրաբխային այդ գործունեության հետևանքները պետք է համարել Արգիճի գետի հովտում եղած ածխաթթվային հանքային աղբուբները:

Արգիճիի հանքային ջրերը երկու բավական հետաքրքիր խումբ են կազմում:

Առաջին խումբը ընկած է Աթդաշ գյուղից 1,5 կմ դեպի արևմուտք, Արգիճի գետի վտակի ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից հասնում է 2200 մետրի: Աթդաշ գյուղը գտնվ-

վում է գեղատեսիկ հարթավայրում, որը շրջապատված է ոչ  
բարձր լեռների օղակով: Հարթավայրի միջով ժապավենի  
նման գալարվում է Արգիճի գետը:

Աղբյուրները բխում են գետի հունում և առաջացնում  
փոքրիկ լճակներ: Ջրի ջերմաստիճանը 10—12 է: Ջրերի ել-  
ման տեղում առաջանում են ցեխի խոշոր նստվածքներ: Գետի  
խիճը մեծ տարածության վրա պատաժ է երկաթի ջրօքսիդ-  
ների դարչնա-կարմրավուն շերտով: Հանքային աղբյուրների  
արտամղած ջրերի քանակը մեծ է, նրանցից միայն մեկը տա-  
լիս է օրական մոտ 500—600 հազար լիտր: Զուրը հիդրոկար-  
բոնատային, կալցիում-մագնեզիում-նատրիումային է: Մի-  
այն այս աղբյուրն իր ջրի հսկա քանակով և ցեխի մեծ պաշար-  
ներով կարող է բազա դառնալ տեղում շրջանային կամ ուսու-  
պուրլիկական նշանակության փոքրիկ կուրորտային կայան-  
ուտեղծելու համար. այդ նպատակով պետք է մաքրել և կապ-  
տաժի ենթարկել աղբյուրը:

Երկրորդ աղբյուրը Աթդաշ գյուղից մոտ 9 կմ հարավ-  
արևմուտք է ընկած: Այն բխում է քուն հարթավայրում, փոք-  
րիկ մի լեռնաշարի ստորոտում: Իր ելման պայմաններով  
աղբյուրը շատ հետաքրքիր է:

Մեկ ուղիղ գծով հարթավայրում ընկած են 5 ոչ մեծ  
կուներ, գմբեթներ, որոնք կազմված են տրավերտինից: Յու-  
րաքանչյուր գմբեթի կենտրոնում փոքրիկ ուղղագիծ մի խողո-  
վակ կա, որով և բարձրանում է հանքային ջուրը: Մի քանի-  
սում գլխավոր ջուր է երևում, մյուսներում միայն լսվում է  
նրա բնորոշ աղմուկը: Գմբեթների տրամագիծը 10—16 մետր  
է, բարձրությունը՝ հարթավայրից 2—2,5 մետր է: Նրանց  
կազմող տրավերտինը ղեղնայուն է, ծակոտկեն, բույսերի  
դրոշմներով և երկաթի ջրօքսիդների բարակ երանգով պա-  
տաժ: Զուրը թափանցիկ է, մաքուր թթվաշ, հաճելի թարմացը-  
նող համ ունի: Տարբեր աղբյուրներում ջրի շերմաստիճանը  
տատանվում է 8-ից 14-ի միջև: Զուրն իր քիմիական քաղա-  
ղությամբ ածխաթթվային է, հիդրոկարբոնատա-կալցիու-  
մային:

Հավանաբար այն գիծը, որի վրա ընկած են տրավերտի-  
նային կուները, մակերեսութիւն վրա տեկտոնիկ մեծ ճեղքի

Հետքն է: Նրա միջով մի քանի տեղում մակերևույթ է բարձրացել հանքային ջուրը: Ջրի բխման տեղերում առաջացել են տրավերտինային բլրակներ:

Ներկայումս աղբյուրների ջուրը շատ սակավ է: Անհրաժեշտ է դրանք հորատման միջոցով հետախուզել, որից հետո, Աթղաշ գյուղի մոտ գտնվող առաջին աղբյուրի հետ միասին, այդ հանքային աղբյուրը կարող է տեղական նշանակություն ունեցող փոքրիկ կուրորտի ստեղծման բազա դառնալ:

Ուստի: Ուսուածի աղբյուրները բխում են Որոտան գետի ձախ ափին, նեղ գեղատեսիլ կիրճում: Կիրճի աջ ափը ժայռուտ է, դժվարամատչելի, ձախը կտրված է գետի հունով:

Սիսիանի շրջանի Ուսուած գյուղից 700—800 մետր հեռու, Դարբաս գյուղը տանող ճանապարհին ընդամենը երեք աղբյուր կա, որոնք դասավորված են միմյանցից 50 քայլ հեռավորությամբ: Գլխավոր աղբյուրը բխում է պատովանջրապետված ավազանի հատակից: Ավազանը կառուցել են տեղական բնակիչները: Նրանք այդ չուրն օգտագործում են մաշկային և հողերի հիմանդրությունների բուժման համար: Ջուրը մաքուր է, հոտ չունի, ոչ այնքան հաճելի համով, երկաթային է, մեծ քանակությամբ ածխաթթու է արտադրում և զգալիուն հանքայնացված է:

Երկրորդ աղբյուրը բխում է նստվածքների միջից, բաւալտի շերտի տակից, փոքրիկ այրում: Աղբյուրի ջուրը մասսամբ պահպանվել են ինչոր շինության կավե պատեր: Այդ աղբյուրը նույնպես գոլ է և նույն համն ունի:

Հանքային աղբյուրների շրջանում հորատման աշխատանքներ են կատարվել: Այժմ պահպանվել է միայն մեկ հորատանցք:

Բայտ Ա. Ռ. Գալստյանի տվյալների, այն «Չատրվանում է 62 մ խորությունից: Հորատանցքից ելնող ջրի սյունը 1,5 մետրի է հասնում: Ջուրն իր հոսանքում առաջացնում է երկաթի հիդրօքսիդի գորշավուն նստվածք: Հորատանցքից բխող ջուրը զգալիորեն հանքայնացված է և մեծ քանակությամբ ած-

<sup>1</sup> А. Р. Галстян, «Минеральные воды юго-восточных районов АрмССР и перспективы их использования». Известия АН АрмССР, сер. геогр. и геол., № 2, 1959, том XII.

խաթթու է պարունակում»<sup>1</sup>: Հանքային աղբյուրների և հորատ-անցքերի ջրերը համանման են: Իրենց քիմիական բաղադրությամբ դրանք խառն են՝ հիդրոկարբոնատա-քլորիդա-սուլ-ֆատային, նատրիում-մագնեզիում-կալցիումային, չերմաս-  
տիճանը 26:

Համբ: Համբ գյուղի շրջակայքում, նրանից 1,5 կմ ներքեւ և կամքջից 300—400 մետր դեպի վեր, գետի ձախ ափին բը-խում է հանքային մի աղբյուր: Գետափը ժայռոտ է, աղբյուրը բխում է նստվածքների միջից: Ջրի ելքի մոտ պատրաստված է ոչ մեծ մի ջրավազան: Աղբյուրի ջերմաստիճանը 13,5 է, ջրի քանակը օրական մոտ 15 հազար լիտր: Խնչպես Ուռու-տում, այնպես էլ այստեղ հորատման աշխատանքներ են տարվել:

Ներկայումս, մի հորատանցքից, որը գտնվում է Որոտան գետի հոմի աջափնյա սանդղելանդի վրա, Համբ գյուղի ավերակների մոտ, 72 մետր խորությունից խփում է հանքային ջրի մի շատրվան, որի սյան բարձրությունը 1 մետր է: Զուրը գազ է անջատում, փրփրում է, հաճելի համ ունի և գուրկ է հոտից: Իր քիմիական բաղադրությամբ և ջերմությամբ այն լիովին նման է Ուռուտի ջրին:

Բովադլյար: Ա. Պ. Դեմյոխինի տվյալներով, Հերհեր գետի ավագանում հանքային ջրի լավ հեռանկար ունեցող երկու աղբյուր կա: Այդ աղբյուրները ընկած են Բովադլյար գյուղից մեկ կմ հարավ, գետի աջ ափին, ջրից 1,5 մետր հեռու:

Հանքային ջուրը բխում է նստվածքների միջից, ածխա-թթու գազ է առաջացնում. Հանքային ջրի ելքերը միմյանցից 3 մետր հեռու են: Առաջին աղբյուրի ջրի քանակը օրական մոտ 60 հազար լիտր է, երկրորդինը՝ մոտ 40 հազար: Առաջինի ջերմաստիճանը 19,1 է, երկրորդինը՝ 18,9: Զուրը հստակ է, անգույն և անհոտ, դուրեկան, թթվաշ համ ունի:

Ա. Պ. Դեմյոխինը այդ աղբյուրների մանրազնին ուսում-նասիրության արժանի է համարում, քանի որ «Նրանց քիմիա-կան բաղադրությունը մոտ է Եսենտուկիի հանքային ջրերի տիպին: Հանքային աղբյուրներն ընկած են Հերհեր գետի գեղա-տեսիլ կիրճում, ջերմուկից ընդամենը (ուղիղ գծով) 10 կմ հե-ռավորության վրա: Շրջանը աշքի է ընկնում իր մեղմ կլիմայով

և գտնվում է 1500 մետր բացարձակ բարձրության վրա: Այս բոլորը հնարավորություն է տալիս Բուշաղլյարը դիտել իրեն ջերմուկի զարգացման մոտակա հեռանկար»<sup>1</sup>:

Տասնյակ հետազոտողներ՝ երկրաբաններ և բժիշկներ հանքային աղբյուրներ որոնելու նպատակով շրջել են, ոտքի տակ տվել մեր ռեսպուբլիկայի ոչ այնքան էլ մեծ տերիտորիան, գրանցել դրանք, հետազոտել, անալիզներ արել, որոշներ նրանց բաղադրությունն ու բուժիչ հատկությունները: Ա. Պ. Դեմյոխինը Հայկական ՍՍՌ տերիտորիայում գրանցել է մոտ 500 հանքային աղբյուր:

Ահա Հայաստանի հյուսիս-արևելքը: Քուռ գետի աջ վրակների ավազանը: Անտառապատ սարեր, զով կիրճեր: Երկրաբաններն այստեղ մոտ 40 հանքային աղբյուր են գտել: Դրանցից ամենաաշքի ընկնողների՝ Դիլիջանի և Ֆիոլետովոյի հանքային աղբյուրների մասին մենք արդեն պատմեցինք: Բացի դրանից, այդ շրջաններում հայտնի են Ղալաշա գյուղի մոտ, Զիկատար լեռան լանջին, Նոյեմբերյանի շրջկենտրոնի, Շլորկուտ ձմեռանոցի, Բեյուք-Գյուղադ լեռան, Ոսկեպար, Բաղանիս գյուղերի, Կոտքենդ գյուղի քոշավայրի մոտ, Համդաշիմանում, «Ֆրոլովի ձորակ» կիրճում, Գոլովինոյում, Զատախի-Ծաղկաձոր ամառային քոշատեղի մոտ, Թավուշ գետի վերին հոսանքում, Խրամի ձոր կիրճում և շատ այլ վայրերում: Գտնվող հանքային աղբյուրները: Մեծամասնությամբ դրանք փոքր են և կարող են միայն տեղական նշանակություն ունենալ:

Ահա և Հայաստանի հյուսիս-արևմուտքը: Արագած լեռան հսկայական դանդաղածը, Շիրակի և Ապարանի հրաբխային սարավանդները: Այստեղ համեմատաբար քիչ հանքային աղբյուրներ կան, ընդամենը 15—16 հատ: Դրանցից կարևորների՝ Արագածի դանդաղածի և Լենինականի գոգավորության ածխաթթված-ծծմբաջրածնային ջրերի մասին մենք արդեն պատմել ենք: Բայց չէ՝ որ այստեղ հանքային ջրեր կան նաև Ղովկասյանի շրջկենտրոնում, մի խումբ աղբյուրներ վարդադրյուր գյուղի մոտ, ավելի ճիշտ, Սիս լեռան ստորոտում, եր-

<sup>1</sup> А. П. Демехин, «Минеральные воды бассейна р. Арака». Ереван, 1958.

կու աղբյուր Ամասիայի շրջկենտրոնի մոտ Շաղկաձոր և Զրառատ գյուղերի միջև ընկած Ղոլղաթի հանքային աղբյուրը, Բայանդուր գյուղի մոտ գտնվող աղբյուրը, որից տեղացիները օգտվում են ուսմատիկ հիվանդությունները բուժելու համար, Լուսագյուղի, Քասաղ գյուղի, Թթուզուր գյուղի մոտ գտնվող աղբյուրները և այլն:

Այս հանքային աղբյուրներից ավելի լավ հեռանկար ունեն Ղոլղաթի հիդրոկարբոնատա-սովֆատային, կալցիում-մագնեզիումային հանքային աղբյուրը, որը իր հետ բերում է տրավիրտինային հզոր նստվածքներ, որոնք հորատելու դեպքում կարելի է մակերեսույթ հանել հանքային ջրի մեծ հոսանք: Այնուհետև հետաքրքրական են Ղուկասյանի հիդրոկարբոնատա-քլորիդային, նատրիում-կալցիումային հանքային աղբյուրը իր բարձր ջերմաստիճանով (18—20) և վերջապես, Բայանդուրի հիդրոկարբոնատա - նատրիում-կալցիում-մագնեզիումային ջրերը, որոնց ելքի շրջանում բացառիկ զարգացում են ստանում լճային կավերը: Մրանք կարող են օդտագործվել ցեխային բուժման համար:

Դառնանք մի այլ շրջանի՝ Դեբեդ գետի ավագանին: Լոռու սարավանդն է: Փամբակ գետի գեղատեսիլ կիրճը: Այստեղի հանքային աղբյուրներից մենք նկարագրեցինք Սև և Դեղին գետակների մոտ ընկած աղբյուրները և Մայմեխինը, որը կոչվում է Տաք աղբյուր: Բացի դրանից, այստեղ կա մոտ 35 զանազան հանքային աղբյուր: Դրանք Մտեփանավանի շրջանի՝ Կաթնաղբյուր, Մտեփանավան քաղաքի, Յաղդան գյուղի մոտ, Կիրովականի շրջանի՝ Շաղկաշեն գյուղի մոտ, Զրաշեն գյուղից 2 կմ, երկուաը Լեռնապատ գյուղի մոտ, Բայդաղ գետի վերին հոսանքում, Ժղանով գյուղի մոտ, Բզովդալ գետակի ձորակում, Բզովդալ գյուղի դպրոցի մոտ, Փամբակ ու Կահագնի կայարանների մոտ և Ալավերդու շրջանի Հագվի գյուղի մոտ, Հագվի-ջուր գետակի ձորում, Մանահին գյուղի, Թեղուտ գյուղի վանքի ավերակների մոտ, Ալավերդու և Շամլուլի պղնձահանքերի շրջանում, Շաղկաշատ, Հաղպատ գյուղերում գտնվող հանքային աղբյուրները և շատ ուրիշներ: Թվարկված հանքային աղբյուրներից հետաքրքրություն

են ներկայացնում Հագլիի երկաթային և Թեղուտի սիլիցիումային ջրերը:

Այդ բոլոր հանքային աղբյուրները կարելի է օգտագործել տեղական մասշտաբով:

Հանքային ջրերով ամենից շատ հարուստ են Հրազդան, Գառնի և Վեդի գետերի ավազանները: Ծեսպուբլիկայի կենտրոնական մասը կազմող այս շրջանում կենտրոնացած են մեծ թվով հանքային աղբյուրներ, ինչպես և հորատանցքեր, որոնք հանքային ջուր են ցայտում: Դրանք այնքան շատ են, որ նույնիսկ ճշտորեն հաշվելը հնարավոր չէ, համենայն դեպս 200-ից ավելին է:

Բացի մեր նկարագրած Զառ—Հանքավան—Մարմարիկի, Արդնու և Արարատի խմբերից, այստեղ հետաքրքրական են Բժնի գյուղի մոտ բխող հանքային աղբյուրները: Դրանք միքանի ելք ունեն: Բայց բոլորն էլ աննշան քանակությամբ ջուր են արտամղում: Հանքային ջրերի աղբյուրների մի մասը հայտնաբերվել է Բժնու ամրոցի ստորերկրյա անցքերից մեկի մեջ եղած ջրհորներում: Բժնու հանքային աղբյուրները ջրով հարուստ չեն, բայց նկատի առնելով տեղանքի բնական գեղեցկությունը, նրա առողջարար կլիմայական պայմանները և ջրի բաղադրությունը, այստեղ հնարավոր է տեղական նշանակության առողջարան ստեղծել:

Հրազդան գետի, ավելի ճիշտ, Մարմարիկ գետի ավազանում հետաքրքիր են քիչ ջրաբեր այն հանքային աղբյուրները, որոնք բխում են Ծաղկաձորի կուրորտային վայրում և Զրառատ գյուղի մոտ: Այդ հանքային աղբյուրները ունեն տեղական անուններ՝ Թթու ջուր, Կաթնաղբյուր, Արջնաղբյուր և այլն: Տեղական բնակիչները խմում են որպես սեղանի հանքային ջուր:

Երևանի մերձակա շրջանում հայտնի են Շորջրիձոր ձորակի, Զրաշեն, Սովետաշեն, Դվին, Աղամզալու, Արևշատ, Զովաշեն, Նոր-Բարձրաշեն, Հացավան, Վերին-Քյոթանլու, Գետաշեն գյուղերի մոտ եղած աղբյուրները և այլն:

Գառնի և Վեդի գետերի միջև հայտնի են Շուղայիր, Աղդամլյար, Բողբուրան, Վեդի (Քոթուր-բուլաղ), Գելայսոր, Ջերմանիս, Մանկունք գյուղերի մոտ, Գառնի գետի վերին հո-

ռանքում, ինչպես և Գեղարդում բխող հանքային աղբյուրները:

Սևանա լճի ավազանում նկատվել են 20-ից ավելի հանքային աղբյուրներ, Դրանցից մենք պատմեցինք միայն Կամոքաղաքի շրջանում և Արգիծի գետի ավազանում ընկած հանքային աղբյուրների մասին։ Բայց ՀՀիշատակեցինք Եսենտուլիի տիպի մեծ հեռանկար ունեցող ջրերի մասին, որոնք վերջին տարիներու հորատման միջոցով հայտնաբերվել են Սևանա լճի հարավային ափին, կինք և Մարտունի գյուղերի մոտ։

Սևանա լճի ավազանի հանքային ջրերի մյուս աղբյուրները, որոնք գտնվում են Քեշիկային, Արծվաքար, Նորադուկ, Թթուջուր և այլ վայրերում, իրենց ծավալով փոքր են և միայն տեղական նշանակություն կարող են ունենալ։

✓ Հայոցձորում (Դարալազյաղ) Ա. Պ. Դեմյոխինը<sup>1</sup> ջերմուկի հանքային աղբյուրներից բացի, գրանցել է ևս 27 այլ հանքային ջրեր։ Դրանց մեջ, մեր նկարագրած Բուլավյարի աղբյուրից զատ, հետաքրքիր են Մալիշկա գյուղի մոտ բխող աղբյուրները։ Դրանք խիստ հազեցված են ածխաթթվով և կարող են շշերի մեջ լցնելու համար բազա դառնալ։

✓ Բացի դրանից, Արփա գետի ավազանում կան հանքային ջրերի փոքրիկ խմբեր և առանձին աղբյուրներ, որոնք կարող են օգտագործվել տեղական մասշտաբներով։ Դրանք Սալի, Ղշլաղ, Գորբատեղ, Եղեղիս, Շատին, Հերհեր գյուղերի մոտ, Եղեգիս գետի վերին հոսանքում գտնվող Գետիկ վանք, Սառցալի (Արփա ղետի վերին հոսանքում), Սոլլան, Դայլաղլու, Արենի, Չայքենդ, Աղատեկ, Ազարակաձոր գյուղերի մոտ բխող հանքային աղբյուրներն են։ Չայքենդ և Աղատեկ գյուղերի շրջանում ոչ խոր հորատանցքեր են փորմիւ, որոնք հանքային շուր են տվել։

✓ Հսկայական թվով հանքային աղբյուրներ կան Զանգեզուրում, Որոտան, Սիսիան, Գորիս, Ռոշի և Մեղրի գետերի ավազաններում։ Զանգեզուրի գրեթե բոլոր կիրճերում կարելի է հանքային աղբյուրներ տեսնել։ Ամենահամեստ հաշվարկումներով այստեղ մոտ 110—120 առանձին և խմբերով հանքային աղբյուրներ կան։

<sup>1</sup> А. П. Демехин, «Минеральные воды бассейна р. Арпа». Ереван, 1958.

✓ Որոտան գետի ավազանում, բացի մեր նկարագրած Տաթևի, Ուռուտի, Շամբի աղբյուրներից, Հանքային աղբյուրներ կան Բաղարշայ, Բորիսովկա, Բալաքի-բինա ձմեռանոցի, Անգեղակոթ, Աղվանի, Շահվերդյար գյուղերի մոտ և այլն։

Միսիան գետի ավազանում մեծ հեռանկար ունեն Տոլորս գյուղի մոտ բխող Հանքային աղբյուրները։ Հետաքրքիր են նաև Ղըզըլ-շաֆակ, Ղղկոշտի գետի կիրճում, Դաստակերտ, Մուրիսով, Սոֆլու, Արավուա, Լեռնաշեն, Տաքունտեղ գյուղերի մոտ և այլ վայրերում գտնվող աղբյուրները։ Դրանք շատ են և կարող են սոսկ տեղական նշանակություն ունենալ։

Գորիս գետի ավազանում նույնպիսի հետաքրքրություն են ներկայացնում Գորիսի և Քարահունջի Հանքային աղբյուրները։ Մեծ թվով նման աղբյուրներ կան Ողջի և Մեղրի գետերի ավազաններում։ Իսկ Ողջի գետի ավազանում Կապուտչիղի, Քաջարանի բազմաթիվ աղբյուրները՝ Գյարդ, Աջերաջ, Կիրս, Շաբադին գյուղերի մոտ և այլ վայրերում ընկած Հանքային աղբյուրները։

Մեղրի գետի ավազանում հայտնի են Լիճքի, Մեղրու, Ագարակի բազմաթիվ և Կարճեան, Եվանիձոր, Նյուլադի գյուղերի մոտ բխող աղբյուրները և շատ ուրիշներ։

Ինչպես տեսանք, Հայաստանի հեռանկար ունեցող Հանքային աղբյուրներն ըստ իրենց ուսումնասիրվածության և օգտագործման կարելի է բաժանել հետևյալ 4 խմբերի։

✓ Առաջին խումբը՝ Դրանք այն Հանքային աղբյուրներն են, որ արդեն օգտագործվում են առողջարաններում։ Հիմնականում դրանք Արդնու և Զերմուկի Հանքային աղբյուրներն են։

Երկրորդ խումբը՝ Դրանք հետազոտված, բայց գեռես մասնակիորեն օգտագործվող Հանքային աղբյուրներն են։ Դրանց բազայի վրա լցնող ոչ մեծ գործարաններ են աշխատում և կուրորտներ կառուցվում, ինչպես Հանքավանի, Դիլիջանի, Կեչուտի և Կամոյի Հանքային աղբյուրնեն են։

Երրորդ խումբը՝ Դրանք Արարատի, Զառի, Ուղաշիքի, Կարմիր Հովտի, Ֆիոլետովոյի, Շամբի, Ուռուտի, Ազատեկի, Ախուրյանի, Լիճքի, Տաթևի, Առենի, Ավազանի և այլ վայրերի ուսումնասիրված, բայց գրեթե չօգտագործվող բազմաթիվ Հանքային աղբյուրներն են։

Չորրորդ խոմբ, Կույրիշներ (Սև գետակ), Մայմեխի, Արգիճի, Բուզաղլարի, Աղապածի, Ղոլղաթի, Բժնու, Գորիսի, Մալիշկայի, Բաղարչայի, Դաստակերտի, Գոհճորի, Քարահունջի, Կապուտջիղի և շատ այլ վայրերի շատ ուշատ հանքան աղբյուրներն են, որոնք հաշվառման են ենթարկվել, բայց շեն հետազոտվել:

Նույնիսկ այս ոչ լրիվ թվարկումից երևում է, թե դրանց թիվն առաջին խմբից մինչև չորրորդ խոմբն ինչպես է աճում: Այդ վկայում է այն մասին, որ կուրորտային գործում մեր անհամար բնական հարատությունների միայն շնչին մասն ենք օգտագործում:

### ՀԱՅԿԱՆ ՍՍՌ ԲՈՒԺԻՉՉ ՑԵԽԵՐԻ ԵՎ ՏՈՐՅԵՐԻ

#### ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԸ

Կուրորտներում և ոչ կուրորտային պայմաններում ամենաառըն հիվանդությունների (ուսմատիզմ, մաշկային հիվանդություններ, ամեն տեսակի արտրիտներ և այլն) հանքային բուժման համար կիրառվող միջոցների թվին է պատկանում նաև ցեխարությունը:

Այն նույնպիսի բազմադարյան պատմություն ունի, ինչպես և հանքային ջրերով տարվող բուժումը: Փողովրդական մասսաները իրենց հիվանդությունների ապաքինումը որոնելով և բժշկական օգնություն շտանալով, դիմում էին բնության ուժերին, ըստ որում, բուժման միջոցներն իրենք էին մշակում: Ցեխը լաթերի ձևով քսելով հիվանդ տեղերին պառկում էին արենի տակ, այնքան ժամանակ, մինչև որ ցեխը չորանում էր: Այնուհետև նրանք լվացվում էին հանքային ջըրով: Հաճախ այդ օգնում էր, երբեմն էլ վնաս հասցնում:

Տարեց-տարի բժշկական հսկողությունն ու փորձը մեծանում ու հարստանում էր: Սակայն, մինչև այժմ էլ մեզ մոտ ուսապուրլիկայում ցեխարութումը բժշկական լայն կիրառում չի ստացել:

Այդ կարելի է բացատրել մի կողմից ցեխի հանքավայրերի պակասով, որը ոչ մի կերպ չի կարելի համեմատել մեր հանքային աղբյուրների հարատության հետ, և մյուս կողմից նրանց քիչ ուսումնասիրվածությամբ:

Ե՞նչ է բուժիչ ցեխը և ինչպե՞ս է այն գոյանում։

Բուժիչ ցեխերը կամ հանքային ցեխերը (հանքային տիղմը) շատ քարդ միացություններ են, որոնցում միահյուավում են հանքային ջրերի, օրդանական նյութերի և հողի բաղադրության փոխազդեցությունների ամենատարբեր պրոցեսները։ Ցեխը բաղկացած է օրդանական նյութերից, որոնք քայլավում են նրանց մեջ ներթափանցած ջրի ազդեցությամբ (սովորաբար դրանք բուսական ծագում ունեն՝ աղբյուրը շրջապատող խոտը և այլն) և հանքային ջրի ու հողի՝ ավազի, կավի, կրի, փայլարի, զանազան աղերի, թթուների և գազերի՝ ազոտի, ածխաջրածնի, ածխաթթվի և ծծմբաջրածնի մասնիկներից։ Ցեխագոյացման պրոցեսներում ակտիվ մասնակցություն են ունենում միկրոօրգանիզմները, որոնք ձեւափխում են ինչպես անօրդանական, այնպես էլ օրդանական նյութերը։ Դրանք երկաթի բակտերիաներ են, սովորաբեռնություններ և այլն։

Իրենց արտաքին տեսքով և գլխավորապես խրենց ֆիզիկո-քիմիական հատկություններով ցեխերը շատ բազմազան են։ Նրանց գույնը կապտավուն սևից տատանվում է մինչև բաց-մոխրագույնը։ Մեծ մասամբ նրանց տեսքը կրեմի է նըման, յուղի, կարծր մասնիկների տարրեր խառնուզներով։ Շատ թե քիչ ուժեղ է ծծմբաջրածնի հոտը։ Երբեմն ցեխը ճահճային բույսերի հոտ է ունենում, որոնք մեծ քանակությամբ խառնվում են նրան։ Ցեխերի աղայնությունը նույնպես մեծ տատանումներ է ունենում։

Ցեխի վաննան օրդանիզմի վրա ներգործում է իր ջերմությամբ և մաշկը գրգռող նյութերով։

Բուժման համար ցեխի ամենաարժեքավոր հատկություններից են պլաստիկությունը, մածուցիկությունը, ուռչելը, ջերմատարողությունը, ջերմահաղորդականությունը և այլն։ Այս բուրը կախված են կոլոիդային ֆրակցիաների բաղադրությունից և հատկապես կոլոիդային ծծմբական երկաթից, որը կապակցելով ցեխի հանքային մասնիկները, նրան է հաղորդում նաև այս բոլոր հատկությունները։

Բուժիչ ցեխերն իրենց ծագումով բաժանվում են 4 հիմնական խմբերի։

1. Լիմանային ցեխեր, որոնք առաջացել են ծովից ան-  
շատված աղային ջրավագաններում: 2. Բաց ծովերի հետ կապ  
շունեցող ցամաքային լճերի ցեխեր (որոնց աղային կազմը  
ամբողջովին պայմանավորված է շրջապատող հողերով),  
3. տորֆային ցեխեր և վերջապես, 4. աղբյուրների ցեխեր,  
որոնք առաջանում են հանքային աղբյուրների մոտ: Վերջին-  
ներս ամենից քիչ են հանքայնացված:

Սովետական Միության տերիտորիայում հանդիպում են  
ցեխերի բոլոր տիպերը, օրինակ, հայտնի են Սաքի, Սուջաքի  
և այլ (1 տիպ), Տինաքի, Թամբուքանի, Կարաշիի և այլ (2  
տիպ), Կաշինի և այլ (3 տիպ), Սերգիևյան, Ստարոռուտյան  
և այլն (4 տիպ) ցեխերը:

Ցեխի պաշարները հսկա չափերի են հասնում: Այսպես,  
օրինակ, Կարաշիի հանքավայրը ցեխի այնպիսի պաշարներ  
ունի, որոնք արտահայտվում են մոտ 1,5 միլիոն տոննա պատ-  
կառելի թվով: Նշանավոր Սաքին մոտ 500 հազար տոննա բու-  
ժիչ ցեխ ունի, իսկ Ստարայա Ռուսը և Մալթան մոտ 20—25  
հազարական տոննա: Ստարոռուտյան առողջարանը արդեն  
ավելի քան հարյուր տարի է, ինչ գոյություն ունի և ամուսն ու  
ձմռան սեղոններում տարեկան մոտ 1500 հիվանդ է ընդու-  
նում:

Պետք է ասել, որ բուժման և ցեխերի ոեգեներացիայի  
դոցություն ունեցող մեթոդների առկայությամբ, ցեխային  
առողջարաններ ստեղծելիս ցեխի պաշարների հարցն արդեն  
էական դեր չի կարող կատարել:

Ներկայումս մշակվել է միկրոբիոլոգիական մեթոդ, որը  
հնարավորություն է տալիս ոչ հազվագյուտ նյութերից (կավ,  
գազոնային խոտ, կերակրի աղ) լիարժեք բուժիչ ցեխ ստա-  
նալ: Այն կարող է կիրառվել ոչ կուրորտային պայմաններում,  
ինչպես նաև առողջարաններում, ուր բնական բուժիչ ցեխ  
չկա, կամ էլ նրա քանակն անբավարար է:

Հայկական ՍՍՌ-ում դեռևս հայտնի չեն ցեխի այնպիսի  
հանքավայրեր, որոնց բազայի վրա հնարավոր լինի հատուկ  
ցեխային կուրորտներ ստեղծել: Սակայն շատ հանքային ջրե-  
րի ելքը ուղեկցվում է ցեխերի գոյացմամբ: Մեզ մոտ կա ցե-  
խերի նաև մի ուրիշ տիպ՝ տորֆային ցեխը: Հայկական ՍՍՌ մի

շարք շրջանների զգալի տարածություններ զբաղեցված են տորֆահանքերով։ Ռեսպուբլիկայի տերիտորիայում գրանցված է տորֆի ալելի քան հարյուր հանքավայր։

Հնայած նրան, որ Հայաստանի հանքային ջրերի ռևտոմնասիրությամբ զբաղվել են սովետական իշխանության հաստատման առաջին իսկ օրերից, բայց ցեխերով լրջորեն սկսել են զբաղվել միայն 1944—45 թվականներից։

Բուժիչ ցեխերից Հայաստանում առաջինը օգտագործվել էն Թոխմախանգյուղի ցեխերը։

Հայաստանում ցեխաբուժության պիոներն է հանդիսացել ֆիզիոթերապևտիկ ինստիտուտի նախկին դիրեկտոր, պրոֆ. Ա. Հ. Հակոբյանը։ Նրա ղեկավարությամբ աշխատանքները տարվում էին Երևանի բժշկական ինստիտուտում։ Հետագայում ցեխերի և տորֆերի հետազոտությամբ զբաղվում էր Կուրորտուլոգիայի և բուժման ֆիզիկո-քիմիական մեթոդների ինստիտուտի լաբորատորիան։ Առաջին տարիներին Թոխմախանգյուղի ցեխերից բացի ուսումնասիրվում էին Հանքավանի և Վեդու ցեխերը և Մարտունու ու Համզաշիմանի տորֆերը։

Մինչև այժմ ուսումնասիրվել են (գուցե և ոչ լրիվ կամ էլ նորից ուսումնասիրելու կարիք ունեն) աղբյուրների տիպի ցեխերը, որոնք ուղեկցում են հանքային ջրերի այնպիսի խոշոր խմբերի, ինչպիսիք են Զերմուկը, Հանքավանը, Արգիճին, ինչպես նաև Բայանդուրի, Սարովսանի, Ղուկասյանի, Նոյեմբերյանի (Ոսկեպար), Կիրովականի (Զրաշեն, Փղանով), Ստեփանավանի (Կույբիշև-Սև գետ, Կաթնաղբյուր և այլն) հանքային աղբյուրների ցեխերը։ Առանձին ուսումնասիրության են Ենթարկվել Թոխմախանգյուղի ցեխերը։ Բացի դրանից, հայտնի են Ապարանի շրջանի՝ Քասախ, Սևանա լճի ավաղանի՝ Գեղարքունիք և Կեչիքայ և շատ ուրիշ հանքային աղբյուրների բուժիչ ցեխերը։

Այդ ցեխերից շատերը տեղական բնակչության կողմից վաղուց արդեն օգտագործվում են։

Ահա թե ինչ է գրում Զերմուկի ցեխերի մասին մեր ռեսպուբլիկայի նշանավոր կուրորտագետ, պրոֆ. Լ. Ա. Հովհաննիսյանը. «Ցեխերի ոչ մեծ հանքավայրեր կան Զերմուկում, ուր ինչպես զերմային կուրորտում, որոշ կատեգորիայի հի-

վանդների համար ցեխաբուժությունը պետք է դառնա բուժման էական գործոններից մեկը։ Այդ ցեխերի ֆիզիկո-քիմիական բաղադրությունը, որն ուսումնասիրվել է Օղեսայի բալնեոլո-դիական ինստիտուտում, բավարարեց բուժիչ ցեխերին ներկայացվող սովորական պահանջները։ Ցեխաբուժության փորձը, որ 1933 թվականից Զերմուկում կիրառվում է հասարակ կառուցվածք ունեցող վաննաներում և ապլիկացիաների ձևով, բավական գոհացուցիչ արդյունքներ է տվել։ Ցավոք սրտի, հետագայում, պատերազմի տարիներին, ցեխային տնտեսությունն անկում ապրեց։ Վերջին ժամանակներու այստեղ առեղական բազայի վրա պատրաստվել են ցեխային արհեստական ավագաններ, որոնք նախատեսված են միայն ապլիկացիաներով բուժելու համար։ Սակայն, ցեխային տնտեսության համար լուրջ բազայի ստեղծումը, որը դառնա այստեղ ուղարկվող հիվանդների կոնտինգենտների բուժման կարևոր է էական մեթոդներից մեկը, կուրորտի ապագա ճակատագրի անհրաժեշտ և անհետաձգելի միջոցառումներից մեկը պետք է լինի<sup>1</sup>։


Իսկ Հանքավանում առաջմաս ամեն ինչ նույնն է մնացել։ Այստեղ, ինչպես հնում, տեղական բնակիչները շարունակում են ցեխի վաննաներն ընդունել ուղղակի հանքային աղբյուրների մոտ փոսերի մեջ։ Հանքավանի ցեխերը ուղեկցում են այն հանքային ջրերին, որոնք բխում են Մարմարիկ գետի ափին, ցածրադիր, խոտով ծածկված մի վայրում, ուր ջուրը երկար լճացած է մնում։ Այստեղ հանքային ջրերի ելքը փոքր է, բայց դրանք անընդհատ խոնավացնում են կավային հողը։ Գոյություն ունի նաև երրորդ կոմպոնենտը — բուսական ծածկույթը բարձրահասակ, խիտ խոտը (նկ. 21)։ Այս երեք կոմպոնենտների փոխազդեցության շնորհիվ գոյանում է լապտավուն երանգ, յուղոտ, պլաստիկ, ծծմբաշրածնի սուր հոտ ունեցող հանքային ցեխ։

Այդ ցեխը գոյանում է գետի ափերին, երկար տարածության վրա։ Նրա թերապետիկ արժեքն արդեն որոշված է։ Այն

<sup>1</sup> Л. А. Оганесян, «Некоторые вопросы развития курорта Джермук», Ереван, 1957.

Հետագայում կարող է հաջողությամբ կիրառվել կառուցվող  
երիտասարդ կուլորտում:

Հետաքրքիր են Արգիճիկի հանքային աղբյուրի (տես  
վերևում) մոտ գոյացող ցեխերը, որոնք ընկած են Մարտու-  
նու շրջանի Աթղաշ գյուղի մոտ, Արգիճի գետի հունում։ Ինչ-  
պես վերն ասվեց, այդ հանքային աղբյուրը բխում է գետի  
հունի մեջ, երեք փոքրիկ փոսերում, ուր առաջացել են միմ-  
յանց հետ կապված հանքային փոքրիկ լճակներ։ Հանքային  
ջրի մի մասը լայն առվակով հոսում է ղեպի ղետակը, մի  
մասն էլ լճանալով նրա կալային հունի մեջ, առաջացնում է  
իսկական մի ճահիճ ծծմբաջրածնի սուր հոտ ունեցող մուգ սև  
գույնի հիանալի բուժիչ ցեխով։ Ճահճամած տարածությունը  
100 մ լայնություն և 200—300 մ երկարություն ունի, որը



Նկ. 21. Հանքավանի հանքային ցեխը

Լուսանկար՝ Ն. Ի. Դոլուխանովայի

ձգվում է գետի հոսանքով։ Ցեխը շատ խորն է և մածուցիկ։  
Նրա թերապետիկ արժեքն ապացուցվել է ֆիզիկո-քիմիական  
և կլինիկական ուսումնասիրությունների միջոցով։

Ինչպես նախորդ գլխում ասվեց, Արգիճիի հանքային ջրերի և ցեխերի բազայի վրա կարելի է շրջանային և նույնիսկ ոեսպուլիկական նշանակության ջրաբուժական առողջապահ ստեղծել:

Ծծմբաջրածնի սուր հոտ արձակող բուժիչ ցեխի նույնպիսի ճահճակալում կա նաև Սև գետակի (Ստեփանավանի շրջանի Կույբիշև գյուղի մոտ) ափին բխող աղբյուրներից մեկում։ Այստեղ ճահճակալած տարածությունը հասնում է 20—25 քառ. մետրի։ Հանքային ջրի մեծ ելքը, նրա մոտ գոյացող ցեխը և տեղանքի հիանալի առողջարար կլիման մեզ ստիպեցին դեռևս նախորդ գլխում արժանին մատուցել այդ շրջանի կուրորտային հարստություններին։

Ցեխերի նմանօրինակ գոյացումները շատ տարածված են ողջ ոեսպուլիկայում։ Հանքային ջրերի գրեթե բոլոր ելքերը լինկած են գետերի հոմերում։ Երբ գետերի ափերը ցածրադիր են, խոտանատ, կավապատ, հանքային աղբյուրների մոտ անխուսափելիորեն այդպիսի ցեխ է առաջանում։ Այդ հանքային աղբյուրների թվարկումն անհետաքրքիր է և աննպատակ։ Դրանք ինքնին մեծ նշանակություն ունենալ չեն կարող և կարող են օգտագործվել միայն տեղական մասշտարներով, այն էլ կուրորտային մյուս ֆակտորների հետ միասին։ Ցեխաբուժումն առաջին հերթին պետք է կարգի գցել արդեն գոյություն ունեցող առողջարաններում։

Այժմ ժամանակն է մի քանի խոսք ասել նաև տորֆային ցեխերի մասին, քանի որ ոեսպուլիկայում տորֆի մեծ կուտակումներ կան։

Տորֆային ցեխերի հաջող կիրառումը ամենատարբեր հիվանդությունների (օստեոմիելիտներ, խրոնիկ պոլիարտրիտներ, կոնտրակտուրաներ, կանացի և մաշկային հիվանդություններ և այլն) բուժման համար արդեն ապացուցված է։ Բուժիչ ցեխերի մեծ պաշարներ շունենալու պատճառով, Հայկական ՍՍՌ-ի համար տորֆարուժման խնդիրը մեծ նշանակություն է ստանում։ Բուժիչ նպատակների համար տորֆի կիրառման խնդրով երկար տարիներ զբաղվել է Հայկական ՍՍՌ կուրորտուլոգիայի և բուժման ֆիզիկական մեթոդների ինստիտուտի (Ս. Ս. Ալեքսանդրյան, Ռ. Ա. Զանջուտովա և

ուրիշներ), Երևանի Գյուղատնտեսական ինստիտուտի (Գ. Ա. Զաքարյան և ուրիշներ), Երևանի Բժշկական ինստիտուտի (Ա. Խ. Հարությունյան, Մ. Բ. Շախաթունի) գիտական աշխատողների մի մեծ խումբ։ Տորֆի ուսումնասիրությամբ զբաղվել են նաև երկրաբանները (Ա. Պ. Դեմյոխին, Ա. Ե. Քոչարյան և ուրիշներ):

Տորֆի հանքավայրեր կան Բասարգեշարի, Ստեփանավանի, Կալինինոյի, Կիրովականի, Ղուկասյանի, Վեդու, Մարտունու, Սպիտակի շրջաններում։ Այստեղ որոշակի դեր են կատարել այդ շրջանների բնական պայմանները։ Ծելցեֆի իշվածքներում (զանազան գոգավորություններում) կավե հողերի մեջ, բարձր գրունտային և գետային ջրերի մշտական ներծծման շնորհիվ, լճեր ու ճահիճներ են գոյանում։ Նրանցում փարթամ բուսականություն է ղարգանում՝ եղեգնուսուներ և բոշխներ։ Այս բույսերի մահացած մասնիկների քայլայման պրոցեսները տեղի են ունենում խիստ խոնավության պայմաններում և զանազան միկրոօրդանիզմների մասնակցությամբ։ Լճերն ու ճահիճները փոխակերպվում են ցածրադիր տիպի տորֆահանքերի։

Կալինինոյի շրջանում, Լոռու սարավանդում մոտ 12 տուանձին ճահիճ կա, որոնք ընկած են համեմատաբար ոչ մեծ տարածության վրա։ Դրանք առաջացել են ոչ մեծ լճերի տեղերում։ Վերջիններն իրենց հերթին, գրավել են հրաբխային սարավանդի բլրածածկ ոելցեֆի ափսեածեւ իշվածքները։ Այդ նստվածքների ծագումը հավանաբար կապված է լավային վերջին ծածկույթի սառման պրոցեսների հետ, երբ գաղերը ձգտելով մակերեսույթ դուրս գալ, տարբեր մասերում փշրել են սառած լավաները, որից հետո հոսող ջրերը, իրենց հետ տանելով փշրված նյութը, այդ տեղամասերը վերածել են մեծ գոգավորությունների։ Թերևս այդ իշվածքները հնագույն գետերի հուներ են։ Այսպես, թե այսպես, դրանք լցվել են շրով և վերածվել սակավաջուր ավազանների, որոնց հատակում սկսվել է տիղմ կուտակվել։ Այդ ոչ մեծ լճերի ափերին սկսել է եղեգն և ջրաշուշան աճել, որը և տորֆային կուտակումների համար առատ նյութ է տվել։ Հետագայում լճի կենտրոնը նվաճել է մամուռը և նրա մա-

կերևույթն ամբողջովին ծածկել։ Ներկայումս շարունակվում է առանձին զանգվածների տորֆայնացումը։ Դրան նպաստում են մթնոլորտային տեղումների առատությունն ու քրի անբավարար հոսքը։

Կալինինոյի շրջանի տորֆի ընդհանուր պաշտը, Հաշված Շահնազարի ամենախոշոր հանքավայրը, կազմում է մոտ 1,5 միլիոն խորանարդ մետր։

Շահնազարի ճահիճը ընկած է Շահնազար գյուղից 3 կմ արևմուտք, Հայկական ՍՍՌ և Վրացական ՍՍՌ սահմանագծում և զբաղեցնում է ոելյեֆի ափսեածե իջվածքն իր շրահավաք մեծ տարածությամբ։ Զուրը բոլոր կողմերից դեպի ճահիճ է հոսում, քանի որ ճահիճը արևելքից, հյուսիսից և արևմուտքից շրջափակված է լեռներով, իսկ նրա հարավային ափերը բարձր են։ Զրի մակերևույթային հոսքն ամենից ավելի խնտենսիվ է դառնում երկարատև անձրևների ժամանակ և դարնանացին ձնհալին։ Այդ ժամանակ անձրևաշրերը ճահիճի մի զգալի մասը լցնում են տղմանյութով։ Այդ ճահճի տորֆի պաշարները հասնում են 4 միլիոն խորանարդ մետրի։

Կիրովականի շրջանի Համզաշիման գյուղի մոտ գտնվող տորֆահանքերը զգալի տարածություններ են գրավում։ Այդ մասին է վկայում նաև հենց գյուղի անունը («Համզա» բար աղբքեջաներեն նշանակում է ողջ, բոլորը, իսկ «Հիման»-ը՝ ճահիճ)։

Տորֆի «Գիլի» մեծ զանգվածը ընկած է Սևանա լճի մոտ, Բասարգեշարի շրջկենտրոնից 4 կիլոմետր հեռու Այն Մասրիկ զետի հովտում 20 մետր տարածություն է զբաղեցնում, իսկ նրա տորֆի պաշարները շատ մեծ են։

Տորֆի սակավազոր և սակավ քայլայված հանքավայրեր կան նաև Հայկական ՍՍՌ մյուս շրջաններում։ Դրանցից շատերը կարող են բուժիչ նշանակություն ունենալ։

Գ. Ա. Զաքարյանի<sup>1</sup> տվյալներով, Հայաստանի բոլոր տորֆավայրերը պատկանում են ցածրադիր տիպին, գլխավո-

1 Г. А. Захарян, «Общая характеристика торфяных месторождений Армянской ССР». Доклад на республиканской конференции по изучению и использованию природных лечебных ресурсов АрмССР, Ереван, 1959.

բապես ճահճուտային բուսական եղեգնուտային բոշխա-եղեգնային և բոշխայի ենթատիպին: Ա. Ա. Ալեքսանդրյանը<sup>1</sup> այդ տորֆերի մեջ դուել է ամիակ և ծծմբաջրածին անջատող, դենիտրիֆիկացնող, ճարպաթթվային, դիսուլֆուրացնող և շատ այլ կավային միկրոբներ: Դրանց քանակը աշնանն աճում է և ձմռանը նվազում:

Ա. Ա. Ալեքսանդրյանի տվյալներով Բասարգեչարի, Կիրովականի, Մարտունու և Ստեփանավանի տորֆերը իրենց ֆիկո-քիմիական հատկություններով և միկրոբիոլոգիական կազմով նման են Միրգորոդի և Լուժսկի տորֆերին և բոլոր հիմքերն ունեն շրջանային և գյուղական բուժհիմնարկների բժշկական պրակտիկայում կիրառելու համար:

Այսօր տորֆաբուժումը կիրառվում է Կիրովականի շրջանի Համզաշիման գյուղում, Կիրովականի «Արմենիա» սանտորիայում, Բասարգեչարի շրջանային հիվանդանոցում, Հայկական ՍՍՌ Կուբորտովոգիայի ինստիտուտում և այլն:

Մեր ուսապորվիկայի համար մեծ նշանակություն է ստանում բնական պայմաններում արհեստական եղանակով կավերի, հանքային ջրերի և օրգանական նյութերի միացմամբ ցեխ ստանալու պրոբլեմը:

Կուբորտովոգիայի ինստիտուտում բուժիչ ցեխի ստացման աշխատանքներով զբաղվել է Շ. Վ. Վարդանյանը: 1946—1947 թթ. նրան հաջողվեց բուժիչ ցեխ ստանալ սկզբում լաբորատոր պայմաններում, այնուհետև արտադրական մասշտաբով: Նրա ստացած ցեխն իր ֆիզիկո-քիմիական հատկություններով և բուժիչ ներգործությամբ նման է Տամբովկանի և այլ լճերի բնական բուժիչ տղմային ցեխերին: Այդ ցեխն արդեն 13 տարի անընդհատ օգտագործվում է Երևանի Կուբորտովոգիայի ինստիտուտում, Կիրովականի Քիմ-կոմբինատին կից ցեխաբուժարանում և «Արմենիա» սանտորիայում: Այն նպաստում է հողերի, պերիֆերիկ ներվային սիստեմի, աղե-

<sup>1</sup> А. А. Александрян. «Микробиологическая характеристика торфов некоторых районов Армянской ССР и их антимикробные свойства». Доклад на республ. конференции по изучению и использованию природных лечебных ресурсов АрмССР, Ереван, 1959.

ստամոքսային, կանացի և վիրաբուժական հիվանդությունների բուժմանը:

Տեղական ռեսուլտատների բազայի հիման վրա բուժիչ ցեխի ստացման փորձեր են կատարվել նաև Հանքավանում և Զերմուկում։ Դրանք հիանալի արդյունքներ են տվել։ Իսկ ցեխի պահանջն անընդհատ աճում է։

Երևանի մոտ, Զրվեժում գիպսաբեր կավերի հսկայական պաշարներ կան։ Գիպսի մշակման պրոցեսով տիղմի մի հըսկայական զանգված կդոյանա, որը թերևս ամբողջովին կմնա բժիշկների և քիմիկոսների արամաղբության տակ այն բուժիչ ցեխի վերամշակելու համար։

Երևանի մոտ ընդհանրապես կավի մեծ պաշարներ կան։ Հանքային ջուրն այստեղ առանց դժվարության մեծ քանակությամբ կարելի է բերել։ Այսպիսով, եթե՝ արհեստական եղանակով բուժիչ ցեխի ստացման տեխնոլոգիան արդեն մշակված համարենք, կարելի է ասել, որ Երևանում, այդ մշակված համարենք, կամ բուժիչ ցեխի բազայի վրա, մեծ լավ սարքավորված ցեխաբուժարանի համար բոլոր նախադրյալներն ունենք։

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԿԸՒՄԱՅԱԿԱՆ ԿՈՒԲՈՐՏՆԵՐՆ ՈՒ ԿՈՒԲՈՐՏԱՅԻՆ ՎԱՅՐԵՐԸ

Բնական այսպիսի ուժեղ բուժիչ գործոնների հետ մեկտեղ, ինչպես հանքային աղբյուրներն են և հանքային ցեխերը, կարևոր տեղ է գորավում նաև, այսպես կոչված, կլիմատուտերապիան կամ բուժման նպատակներով տեղանքի կլիմայական առանձնահատկությունների օգտագործումը։

Այս կամ այն հանքային աղբյուրների արժեքը շատ բանով պայմանավորված է նրանց վայրուէ վերցնենք թեկուղ բոլոր հոչակված առողջարանները, որոնք ստեղծվել են հանքային ջրերի բազայի վրա։ Դրանք բոլորը, որպես կանոն, ընկած են գեղատեսիլ առողջարար վայրերում։

Կլիմայական գործոնները, ինչպես մթնոլորտային ճընշումը, ջերմաստիճանը և օդի խոնավությունը, արեգակնային ճառագայթումը, քամին և այլն, մարդու արտաքին միջավայրն ճառագայթումը, քամին և այլն, մարդու արտաքին միջավայրն

ները) կլիմայով, տարածվում է մինչև 1200—1300 մ բարձրության վրա: 2. Չոր-լեռնատափաստանային գոտի, շափավոր տաք և չոր կլիմայով: Այն տարածվում է ոեսպուրլիկայի ներքին փակ մասերում 1300—1700 մ բարձրություններում և հյուսիս-արևելյան շրջաններում մինչև 800 մետրի հասնող բարձրություններում: 3. Լեռնա-անտառային գոտի, անտառային մեղմ կլիմայով, որը տարածվում է 2000—2300 մ բարձրություններում և լավ արտահայտված է Հայաստանի հյուսիսային և հարավ-արևելյան շրջաններում: 4. Լեռնատափաստանային գոտի, շափավոր ցուրտ կլիմայով, որը հյուսիսային շրջաններում տարածվում է մինչև 1900 մ, իսկ հարավային շրջաններում մինչև 2200 մետր բարձրություններում: Այս գոտին ընդգրկում է բարձր լեռնային հարթություններն ու Շիրակի, Լոռու, Ապարանի, Սևանի, Եղարլուրի սարավանդը: 5. Ալպիական գոտի, լեռնային ցուրտ կլիմայով, որն ընդգրկում է ոեսպուրլիկայի լեռնային բարձրադիր շրջանները մինչև 3500 մ բարձրությանը: 6. Լեռնա-տունդրային գոտի, լեռնային դաժան կլիմայով, որը ընդգրկում է լեռնաշղթաների գագաթները 3500 մետրից բարձր: Այդ Արագածի, Կապուտջիղի և այլ լեռնագագաթներն են:

Մեսպուրլիկայի առողջարաններն ու բուժավայրերը ընկած են հիմնականում ամենաբարենպաստ լեռնաանտառային և լեռնատափաստանային գոտիներում:

Հայաստանի հյուսիսում, Լոռու հարթավայրում, Գյուղաբարակի փշատերև ծառերի զանգվածում ստեղծված է մանկական առողջարան: Այդ նույն սարավանդում է գտնվում նաև Ստեփանավան քաղաքը, ուր ամուսնը հանգստի և շոգից միրկելու են գալիս ոեսպուրլիկայի ցածրադիր վայրերի բնակիչները:

Մեսպուրլիկայի հյուսիս-արևմտյան մասում Լենինական քաղաքում տեղավորված է Շահումյանի մանկական սանտորիան:

Աղստև գետի կիրճի անտառախիտ լեռներում, ուր աճում են հաճարի, կաղնու և փշատերև ծառեր, տեղադրված է Դիլիջան առողջարանը: Փամբակ գետի լայն կիրճում է գտնըվում մյուս առողջարանային քաղաքը՝ Կիրովականը, ուր գոր-

են կազմում և խիստ ներգործում են նրա օրգանիզմում տեղի ունեցող պրոցեսների վրա:

Բացի դրանից, մարդու առողջության վրա ազդում են նաև նրա շրջապատի տեսքը: Անտառային, ծովային, լեռնային և այլ գեղեցիկ բնանկարները հանգստացնում են նյարդային համակարգը և օգնում հանգստին ու առողջանալուն:

Կուլորտային-սանատոր բուժում նշանակելիս անհրաժեշտ է խստորեն հաշվի առնել կլիմայական պայմանները: Օրինակ, ստամոքսային հիվանդին պետք է բուժել որոշակի ֆիզիկո-քիմիական բաղադրություն ունեցող հանքային ջրերով, բայց եթե այդ ջրերը գտնվում են բարձր լեռնային վայրում, իսկ հիվանդի սիրտը թույլ է, ապա նրան նման կուրորտողարկել չի կարելի: Եվ ընդհակառակը, եթե հիվանդի սիրտը առողջ է, բայց նա տառապում է սակավարյունությամբ և ընդհանուր թուլությամբ, պետք է այդ ջրերով բուժումը զուգորդել հիվանդին բարձր լեռնային կլիմայում բուժելու հետ:

Երիկամային հիվանդությամբ տառապողին հանքային ջրերի հետ միասին պետք է բուժել շուրջ կլիմայում: Հակառակ դեպքում ջրերով բուժումն արդյունավետ չի լինի:

Կլիման իր կողմնակի դերից բացի, շատ հիվանդությունների բուժման դեպքում նաև ինքնուրուցն և վճռական դեր է կատարում: Գոյություն ունեն հատուկ կլիմայական առողջարաններ, որոնց քանակը շատ մեծ է, ինչպես Սովետական Միության հսկայական տերիտորիայում, այնպես էլ մեր փոքրիկ ուսպուբլիկայում: Յուրաքանչյուր կլիմա իր թերապևտիկ հատկություններն ունի:

Հայաստանի ռելյեֆի կտրվածության և բարձրությունների մեծ տարրերության շնորհիվ նրա տերիտորիայում կարելի է տեսնել մի քանի միանգամայն տարբեր կլիմայական գոտիներ:

Ա. Բ. Բաղդասարյանը<sup>1</sup> Հայաստանը բաժանում է հետևյալ 6 գոտիների: 1. Անապատային-կիսանապատային գոտի, շոր մայրցամաքային (Արարատյան դաշտավայր) կամ շոր մերձարևադաշտային (Մեղրու և մասամբ էլ Ղափանի շրջան-

<sup>1</sup> А. Б. Багдасарян, «Климат Армянской ССР», Ереван, 1958.

ծում է ռեսպուբլիկական նշանակություն ունեցող «Արմենիա» հանգստյան տունը։ Նույնպիսի մի հանգստյան տուն էլ կա Դեբեդ գետի կիրճի բազալտե բարձր սարավանդում, Ախթալա կայարանի մոտ։ Դեբեդ գետի նույն կիրճում, Շահալի կայարանից 3 կմ հեռու, գտնվում է «Հոռի» հանգստյան տունը։

Սևանա լճի հյուսիս-արևմտյան ափի մոտ, կղզում կան մի քանի հանգստյան տներ, Մանկական մշտական ճամբարներ են սփոված Մարմարիկ գետի անտառածածկ զով կիրճում։ Հենց այստեղ, անտառում, Մարմարիկ գետը թափվող գետակի կիրճում է գտնվում Շաղկաձոր կլիմայական առողջարանը։

Բարգուշատի լեռնաշղթայում, գեղեցիկ անտառածածկ մի վայրում, Ղափան քաղաքից 20 կմ հեռու, ընկած է «Կարմըրաքար» հանգստյան տունը։

Ռեսպուբլիկայի հարավում է գտնվում Ջերմուկ բայնեռլեռներին առողջարանը, որը միաժամանակ և կլիմայական առողջարան է։

Ահա սրանք են, որ առայժմ օգտագործվում են։ Տարիներն ու սովետական մարդիկ կշարունակեն այս ցանկը։ Նրա մեջ պետք է մտնեն Գեղամա լեռների և Զանգեզուրի լեռնային բարձրադիր սալագա առողջարաններն իրենց զովարար օդով։


Այստեղ կը ուժի թոքախտով, ուսկրախտով, սակավարյունությամբ տառապող հիվանդները։ Այս առողջարանները կնպաստեն նրանց օրգանիզմի ամրապնդմանն ու կոփմանը։ Զուր չէ, որ Զանգեզուրի լեռնային շրջանների բնակիչների մեջ հաճախ հանդիպում են հարյուր և ավելի տարեկան ծերեր։

Մեր թվարկած շրջանների հետ մեկտեղ շարք կմտնի նաև Հանքավանն իրեն մեղմ կլիմայով և անտառային հանգստացնող բնանկարով։ Առաջին շարքում կը ինեն Սևանա լճի մերձափնյա լվայրերն իրենց ծովային և լեռնային կլիմայով։ Նույնիսկ Արարատյան դաշտավայրի շոր կլիման օգտակար կլինի երիկամային հիվանդների համար։

Այժմ պատմենք այդ շրջանների մասին։

Սկսենք լեռնաանտառային գոտու կլիմայական առողջարաններից, որոնք անտառային շափավոր կլիմա ունեն: Այդ առաջին հերթին Դիլիջանն է, Կիրովականը և Լոռին: Լեռնատափաստանային կլիմային փոխանցվող գոտում են ընկած Ծաղկաձորը և ապագա առողջարան Հանքավանը, իսկ չոր մերձարևադարձային կլիմային փոխանցվող գոտում Ախթալայի հանգստյան տունը:

Դիլիջան: Լեռնակլիմայական առողջարան Դիլիջանը Կիրովական կայարանից 39 կմ դեպի արևելք և Աղստաֆա կայարանից 77 կմ դեպի արևմուտք է ընկած: Այդ երկու կետերի,



Նկ. 22. Դիլիջանի անտառը

Լուսանկար՝ Ա. Պ. Թեմյոլսկինի

ինչպես և Երևանի հետ կապված է ասֆալտապատ խճուղով: Երևանից տանող ճանապարհը՝ 108 կմ, անցնում է Սևանա լճի ափով և Սևանի լեռնանցքով: Ոչ մեծ քաղաք Դիլիջանը գտնվում է Աղստև գետի գեղեցիկ կիրճում, անտառների մեջ, լեռնալանջերին (նկար 22): Սանատորիաներն ու հանգստյան

տներն ընկած են ավելի բարձր կետերում և թաղված են անտառների մեջ:

Գեղեցիկ է և Դիլիջանի շրջակայքը: Գեղատեսիլ Պարզ լիճը, որը գտնվում է համատարած անտառի մեջ, Դիլիջանից մոտ 10 կմ հյուսիս-արևելք, իր գեղեցկությամբ չի զիջում հոշակալոր Ռիցա լճին: Նրանում, ինչպես հայելու մեջ, անդրադառնում են շրջակա անտառապատ լեռները:

Անտառներում աճում են կաղնին, հաճարենին, հացենին, և ոճին և բոխին: Տեղանքն աստիճանաբար բարձրանալով անտառին հաջորդում է ալպիական մարգագետինների գոտին:

Ահա թե ինչպես է Միխայիլ Կոլցովը նկարագրել Դիլիջանի ճանապարհը. «Խճուղային ճանապարհը ոլորապտույտ աղեղով անցնում է լեռնային անտառապատ լեռնաշղթաներով: Մի ակնթարթ անդամ աչք հնարավոր չէ կտրել ասիական այդ Տիրովի հիասքանչ տեսարաններից: Յուրաքանչյուր ըոպե շրջադարձ է, և յուրաքանչյուր ըոպե, ինչպես կինոյում, նոր տեսարան, բնության նոր տրամադրություն, նրա մի նոր կողմը, որը արտահայտվում է կիրճով, սրբնթաց գետով, լեռնային վառվուն ծաղիկներով ծածկված ալպիական մարգագետիններով: Այստեղ բացակայում են Ռազմա-Վիրական ճանապարհի մոայլ վեհությունը, գլխապտույտ անդունդները, շնայած որ ճանապարհի վայրէջքներն ու օղակածե գծերը խստորեն ընդգծվում են: Այստեղ չկան և Ղրիմի կոկետ պատկերները, գույներն այնքան խայտարդետ չեն, բայց ավելի վառ են, կտրուկ, առնական.. Կանաչ լեռները, մարգագետինները, առվակները սկսում են միահյուսվել, վերածվելով բարդ մի կծիկի: Նրանք պտտվում են ճանապարհի շուրջը, իջնում են, այստեղ-այնտեղ ընկնում, միմյանց վրա ելնում, պարում ամենաղարմանալի զուգակցությունների մի ամբողջ հեղեղում, և այդ գեղատեսիլ մոլեգնության կենտրոնում թաքնված է Դիլիջան փոքրիկ քաղաքը, որն իր տվյալներով թոքային հիվանդների, հոգնած նյարդերով և ուղղակի գերհոգնածությամբ տառապող մարդկանց բուժման ամենալավ առողջարաններից մեկն է»<sup>1</sup>:

Դիլիջանը գտնվում է ծովի մակերևույթից մոտ 1250 մե-

<sup>1</sup> М. Колъцов, «19 городов». Изд. Федерации, Москва, 1932.

տըր բարձրության վրա և կլիմայական տեսակտից հարում է բարձր լեռնային շրջանների երկրորդ գոտուն կամ ալպիական գոտուն:

Դիլիջանի կլիման լիովին բավարարում է տուբերկուլյուզին հիվանդների լեռնակլիմայական կայաններին ներկայացվող բոլոր պահանջները: Այդ մթնոլորտային ցածր ճշնշումն է, զով ամառը և արեւոտ, տաք ձմեռը. ջերմաստիճանի և ճնշման սուր տատանումների բացակայությունը, օդի համեմատական շորությունը, ուժեղ քամիների բացակայությունը, արեգակնային ուժեղացած ճառագայթումը և օդի բարձր իոնիզացումը:

1894 թվականից մինչև մեր օրերը կատարված բազմաթիվ ուսումնասիրությունների տվյալներով, Դիլիջանում մթնոլորտային ճնշումները տատանվել են 649 մինչև 657 միլիմետրի սահմաններում: Նման ոչ բարձր մթնոլորտային ճնշումը շատ նպաստավոր է տուբերկուլյուզին հիվանդների համար: Նրանց համար նպաստավոր են նաև մթնոլորտային ճնշման օրական և ամսական աննշան տատանումները:

Օդի տարեկան միջին ջերմաստիճանը, որը կլիմայի կանոնավորության ցուցանիշն է, Դիլիջանում 8,3 է: Շատ հեղինակավոր մասնագետների կարծիքով, ամենալավ կլիմայական գոտին  $10^{\circ}$  միջին ջերմություն է ունենում: Այսպիսով, Դիլիջանի ջերմաստիճանը շատ է մոտենում պահանջվող մեծությանը: Ինչպես տեսնում ենք 27-րդ նկարում<sup>1</sup>, Դիլիջանը դրան ավելի մոտ է, քան Կիսլովոդսկի ( $7,9^{\circ}$ ), Թերերդայի ( $6,4^{\circ}$ ), Աբասթումանիի ( $6,2^{\circ}$ ) տարեկան միջին ջերմաստիճանները, այլև չենք խոսում Դավոսի ( $2,6^{\circ}$ ) մասին:

Դիլիջանում ձմռան միջին ջերմաստիճանը նույնպես ավելի բարձր է, քան վերը թվարկված բոլոր կայաններում:

Նրա գարունն ու աշունը գրեթե նման են Կիսլովոդսկին, իսկ ամառը ավելի զով է: Դիլիջանում ուժեղ ցրտերը շատ հազվադեպ են: Զմռանը շատ արեւոտ օրեր են զինում, օդը մաքուր է, չոր և տաք. մառախուղները միայն լեռնային բարձունքներում են լինում:

<sup>1</sup> Գծանկարի թվական տվյալների մի մասը վերցված է Ա. Հ. Հակոբյանի „Կурорты Армянской ССР“ գրքից:

Դիլիջանում տարեկան 520—560 մմ տեղումներ են լինում, ըստ որում, ամենից շատ գարնանը և ամռան սկզբին: Անձրևները հորդ են, կարճատե, որից հետո անմիջապես արեք դուրս է գալիս: Տեղական լեռնա-դաշտային թույլ և թարմ քամիների շնորհիվ, որոնք լավ օդափոխում են կիրճը, ամռանը տաք է լինում, բայց ոչ հեղձուցիչ: Այստեղ նույնիսկ ամենատաք օրերին շոգը չի զգացվում: Դրան նպաստում է և օդի շորությունը, որը պահպանում է ինչպես շատ տաքանաւուց, այնպես էլ շատ սառնությունից: Դիլիջանը օդի խոնավությամբ հավասար վիճակում է գտնվում Նիցցայի հետ և ավելի նպաստավոր, քան Կիսլովոդսկը, Աբասթումանը, Դավոսը և մյուսները:

Աշումը Դիլիջանում ավելի երկարատե է և տաք, քան գարունը: Ամռան անցումը արեւոտ ձմռանը մեղմ է և երկարատե:

Դիլիջանում արևի ճառագայթումը շատ մեծ է: Կիրճը լայն է և արևմուտքից արևելք ձգված, մի քան, որը արևի ճառագայթներին հնարավորություն է տալիս անարգել կերպով այն ողջ օրը լուսավորել: Շատ քիչ վայրերում է արևի նման առատություն լինում:

Լեռներում արևի ճառագայթման այս առանձնահատկությունը, որը աճում է նաև պարպված մթնոլորտի հետևանքով, նպաստավոր պայմաններ է ստեղծում, այսպես կոչված (հելիոթերապիայի) արեգակնային բուժման համար:

Դիլիջանում օդը մաքուր է և ջինջ, նրանում փոշի չկա: Այդ պայմանավորված է և՝ տեղանքի բարձրությամբ, և՝ անտառային զանգվածներով, և՝ մոտակայքում ֆաբրիկաների ու գործարանների բացակայությամբ:

Դիլիջանում շնչելը հեշտ է: Օդը կենարար ուժ ունի: Հիվանդ թոքերը մաքրվում և ապաքինվում են:

Առողջարանը գործում է ողջ տարին:

Երկարամյա ուսումնասիրությունները հասանառում են, որ Դիլիջանը տուքերկույզողային հիվանդությունների համար առաջնակարգ հիանալի լեռնակլիմայական առողջարան է: Վերջին տվյալներով տուքերկույզողով տառապող հիվանդների առողջացման տոկոսը հասնում է 90%-ի:

Պրոֆ. Ա. Հ. Հակոբյանի տվյալներով, Դիլիջանի կլիմայական պայմանները նպաստավոր են թոքային և ոսկրա-հողային տուբերկուլյոզի, այսինքն թոքերի պրոգրեսիվ, քիչ տարածված տուբերկուլյոզի, վաղ ինֆիլտրատների, պնեվմատորաքսի և պնեվմոպլեվրիտի, խրոնիկ պլեվրիտի, գեղձերի տուբերկուլյոզի, տուբերկուլյոզային պերիտոնիտի, մաշկի տուբերկուլյոզի, կոկորդի սկսվող տուբերկուլյոզի, ոսկրի և հողերի տուբերկուլյոզի բուժման համար։ Տուբերկուլյոզի ոսկրա-գեղձային ձևերի բուժման ժամանակ շատ լավ արդյունքներ է տալիս բուժումը լեռնային արևով։

Դիլիջանի տուբերկուլյոզային սանատորիայի բացումը տեղի է ունեցել 1922 թվականին։ Այն ժամանակ ուներ 25 մահճակալ։ Հայրենական պատերազմի նախօրեին (1940 թ.) մահճակալների թիվը 10 անգամ ավելացավ։ Այժմ սանատորիան ունի մի քանի կորպուս փակ ձևի, ոսկրա-գեղձային ձևի, թոքային հիվանդների համար, բացիլյար և այլն։ Ունի նաև ֆիզիկո-թերապեվտիկ, ռենտգենի կարինետներ, կլինիկա-ախտորոշման լաբորատորիա, աերոսոլյարիում և այլն։ Առողջարանը բացի մեծահասակների սանատորիաներից, ունի նաև մանկական տուբերկուլյոզային սանատորիա։

Դիլիջանի պատմության մեջ պահպանվել են մասնագետ-կուրորտագետների կարծիքները։ Ահա դրանցից մի քանիսը՝ «Հայաստանում կլիմայական կայաններից պետք է առաջին տեղը տալ Դիլիջանին։ Իր բարենպաստ պայմաններով այն գերազանցում է Աբասթումանի և Թերերդայի մեր առաջնակարգ առողջարաններին։ Սովոր մակերեսութից միևնույն բարձրությունն ունենալով հանդերձ, այն դրանց մեջ աշքի է լնկնում իր մեղմ ձմեռով, առատ արևով, օդի չորությամբ և թույլ քամիներով... Դիլիջանը որպես ձմեռային լեռնային բարձրադիր առողջարան, համամիութենական նշանակություն ունի», ն. Ա. Կորոստելև։

Կուրորտագետ Ս. Ս. Նալբանդովը գրում է՝ «Դիլիջանը, որպես առողջարանային վայր, նշվում է շրջակաքի աղդաբնակշության կողմից դեռ անցյալ դարի կեսից, Միության և արևմուտքի մյուս կլիմայական կայանների համեմատությամբ, մեծ առավելություններ ունի։ Դիլիջանը Աբասթումա-

նից և Դավոսից դեպի Հարավ և արևելք ընկած լինելով, տարեկան միջին ջերմաստիճանը 8,6 է, իսկ վերոհիշյալ առողջարաններինը շատ ավելի ցածր: Դիլիջանում արևի առատությունը, տաք ձմեռը, տարեկան միջին համեմատական խոնավությունը և թույլ քամիները, գեղեցիկ լանդշաֆտի հետ մեկտեղ, լրիվ հիմք են տալիս այն առաջնակարգ կլիմայական առողջարան համարելու:

Կիրովական. Կիրովական քաղաքը ընկած է Փամբակ դետի հովտում: Հովիտը կազմված է Փամբակի լեռնաշղթայի հյուսիսային և Բզովդալի լեռների հարավային լանջերից: Առաջինները ծածկված են թավ սաղարթավոր անտառով, իսկ վերջիններս անտառազուրկ են: Հովիտը լայն է, մեղմ գծանկարով: Այստեղ քաղաքային և արդյունաբերական շինարարություն ծավալելու հնարավորություն կա:


Քաղաքը տեղադրված է գետի աջ ափին և ձվվում է դեպի անտառապատ լեռնալանջերը: Շատ փողոցներ հասնում են անտառին և նույնիսկ նրա միջով շարունակվում: Ամենախոշոր անտառապատ կիրճերից մեկում (Վանաձոր) ընկած է «Արմենիա» սանատորիան: Սանատորիայի գեղեցիկ ու թեթև շենքի շուրջը տարածվում է շքեղ մի պուրակ, որը այնուհետև փխանցվում է անտառի:

Կիրովականի կլիման շատ է հիշեցնում Դիլիջանին, բայց այստեղ օդի խոնավությունն ավելի շատ է, քան Դիլիջանում: Այստեղ անձրևներն ավելի հաճախակի են լինում: Ամենամեծ թվով տեղումները լինում են մայիսին և հունիսին: Տարեկան միջին ջերմաստիճանը 7,9, Դիլիջանից դութե՛ 0,5-ով ցածր է և նման է Կիսլովոդսկին:

Զմռան ամսական միջին (նկ. 23) ջերմաստիճանը — 2,0 նման է Թերերդայի ձմեռային ջերմաստիճանին, դարնան ջերմաստիճանը 7,2, հավասար է Դիլիջանին և տանտանվում է Թերերդայի և Կիսլովոդսկի գարնան միջին ջերմաստիճանների միջև: Ամռան ջերմաստիճանը 17,6 նման է Դիլիջանին: Աշունը ջերմաստիճանը 8,6 գրեթե նույնը, ինչպես Կիսլովոդսկում և Դիլիջանում:

Կիրովականում ձմեռը համեմատաբար մեղմ է, բայց երկարատև: Զիւնը գալիս է դեկտեմբերին և մնում մինչև ապ-

ՏԱՐՅԵՐ ԿՈՒՐՈՐՏԱՅԻՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՑՐԻ ՄԻՋԻՆ ՁԵՐՄԱՍՏԻՃԱՆԸ



Նկ. 23. \*Շորժա—Սևանա լճի Արեգունյաց ափի օդերևութաբանական կայանը, Ստեփանավան—Լոռու բարձրավանդակի օդերևութաբանական կայանը, \*\*Շնող—Ախմալայի ամենամոտ օդերևութաբանական կայանը, \*\*\*Ապարան—Հանքավանի ամենամոտ օդերևութաբանական կայանը, \*\*\*\*Հրազդան—Ծաղկաձորի ամենամոտ օդերևութաբանական կայանը:

Բոլոր կայանների 1950/55 թթ. միջին տվյալներն են վերցված, բացի Արզնիի (1926/32 թթ.):

Կիսլովովսկի, Թերերդայի, Աբասթումանի և Դավոսի տվյալները փոխառված են պրոֆ. Ա. Հ. Հակոբյանի «Հայկական ՍՍՌ կուրորտները» գրքից:

րիլ։ Ավելի բարձր լեռները մինչև մայիս և հունիս ծյան ծածկույթի տակ են մնում։ Լեռների բարձունքների խոր ձորերում հաճախ մինչև ամռան կեսերը ծյուն է լինում։ Գարունը համեմատաբար ուշ է գալիս։ Ինչպես սովորաբար լեռնային շրջաններում, այնպես էլ այստեղ արևի ճառագայթները զերմային և քիմիական մեծ ուժ ունեն։

Կիրովականի և նրա մերձակայքի անտառային բնակարները բացառիկ գեղեցկություն ունեն։ Անտառներից վեր տարածվում են ալպիական ծաղկող մարգագետինները։ Կիրովականից երեսում են Փամբակի լեռնաշղթայի գեղեցիկ ծյունածածկ գագաթները՝ Մայմեխը և Թեժսարը։

Որպես կլիմայական կայան Կիրովականի թերություններից է օդի համեմատաբար բարձր խոնավությունը և վերջին տարիներս օդի աղտոտումը Քիմիական կոմբինատի կողմից։

«Արմենիա» սանատորիան գործում է ողջ տարին, նախատեսված է ամռանը 200 և ձմռանը 100 մահճակալի համար։ Սանատորիային կեց գործում են ջրաբուժարանը, ցեխաբուժական բաժանմունքը, աերոսոլյարիա, ֆիզիոթերապևտիկ և այլ կաբինետներ։ Այստեղ բուժվում են նյարդային համակարգի ֆունկցիոնալ հիվանդություններով տառապող ոչ ծանր հիվանդները, վնասվածքներից հետևանքներ ստացածները, շնչառական ուղիների շոր կատառով տառապողներո, ինչպես նաև սրացող և խրոնիկ գինեկոլոգիական հիվանդներու։

Լոռի։ Լոռի հանգստյան տունը գտնվում է Կիրովականի շրջանում, Դեբեդ գետի հովտում, Շահալի կայարանից 3 կմ հեռու։ Շահալի կայարանից այնտեղ է տանում ավտոմոբիլային բարեկարգ մի խճուղի։ Հանգստյան տունը շրջապատող տեղանքը լեռնոտ է, ծածկված է սաղարթավոր անտառներով, շատ գեղեցիկ է։ Շրջանի կլիման չափավոր անտառային է։ Հանգստյան տունը ավելի քան 200 մահճակալ ունի, բայց գործում է միայն ամռան ամիսներին։

Շաղկաձոր։ Շաղկաձորը երևանից 52 կմ հյուսիս է րնկած, նրա հետ կապված է ասֆալտապատ խճուղով։ Այն գտնվում է գեղատեսիլ մի ձորում, որը կտրում է Շաղկունյաց լեռնաշղթան։ Շաղկաձորը երեք կողմից շրջապատված է լեռներով և բաց է միայն Մարմարիկ գետի հովտի կողմից։

Ծաղկաձորը, որը նախկինում կոչվում էր Դարաշիշագ, դեռևս նախառելյուցիոն տարիներին Երևանցիների համար ծառայում էր որպես ամառանոցային վայր։ Ամռանն այնտեղ էին տեղափոխվում նույնիսկ մի քանի հիմնարկներ։

Բացի հանգստան տներից, Ծաղկաձորում տեղավորված են մի շարք պիոներական ճամբարներ։ «Մոր ու մանկան» հանգստյան տունը, որը նախատեսված է 200 մահճակալի համար, գործում է մայիսից մինչև հոկտեմբերը։ Այստեղ ընդունվում են 3-ից մինչև 7 տարեկան երեխաներով մայրերը։ Ինչպիսի ազատ տարածություններ կան երեխաների համար, անտառային կածաններ, լեռնային առվակներ և վառ ծաղիկների մի ամբողջ ծով։ Նրանց բույրերով է լցվում ողջ կիրճը։

Զմռանը Ծաղկաձորը լցվում է դահուկավորներով։

Լեռների ձյունե հաստ ծածկություն և մեղմ ռելյեֆը հնարավորություն են տալիս դահուկային զվարճական գրոսանքներ կատարելու։

Ծաղկաձորի կլիման սառն է, չափավոր խոնավ, ամենից շատ մոտենում է Աբասթումանի լեռնային առողջարանին։ Ինչպես ցուց է տարիս 23-րդ գծագիրը, Ծաղկաձորի տարեկան միջին ջերմաստիճանը ավելի ցածր է, քան Աբասթումանինը, ձմռան, գարնան և ամռան ամիսներին ավելի սառն է, քան Աբասթումանում, իսկ աշունը համեմատաբար տաք է։

Ամռանը Ծաղկաձորում տաք է, բայց ոչ շոգ։ Այն սկսվում է հունիսին և վերջանում սեպտեմբերին։ Այդ շրջանում Ծաղկաձորում օդը ամենից շատ ավելի չոր է։ Օդի խոնավությունն ավելանում է ձմռանը և գարնանը։ Անձրևներն ամենից շատ գալիս են գարնանը։

Չունը գալիս է նոյեմբերին և մնում մինչև մարտ—ապրիլ, բայց դեռևս մայիսին մի քանի ձորափոսերում կարելի է ձյան հանդիպել։ Ծաղկաձորում օդը պարզ է ու մաքուր։ Այստեղ արդյունաբերական ձեռնարկություններ չկան, փոշի չկա։

Հանճախան։ Հանքավանի մանրամասն նկարագրությունը տրված է «Հայկական ՍՍՌ կարևորագույն հանքային աղբյուրները» գլխում։

Ախրալա։ Երևան—Թբիլիսի երկաթուղու Ախթալա կայա-

րանի շրջանում, բազալտե բարձր սարավանդի վրա Ախթալայի հանգստյան տան շենքերն են իրեն շրջապատող պուրակի հետ մեկտեղ: Կայարանից նրա հեռավորությունը ընդամենը 3 կիլոմետր է, ըստ որում, ճանապարհն անընդհատ վեր է բարձրանում:

Հանգստյան տան շուրջը տարածվում է գրեթե ամբողջովին մշտադաշտ մի պուրակ: Նրան հարում է մրգի մեծ այգին: Այստեղից շրջակայքի հիանալի տեսարանն է բացվում: Այդ անծայրածիր անտառներն են և Դերեղ գետի ձորը, որով և անցնում է երկաթուղին: Կանաչապատ անտառածածկ լեռները, հանկարծահայտ ժայռերն ու զառիթափերը Ախթալա այցելողների հիացմունքն են շարժում:

Այստեղ անտառում բնությունն է իր պարզեները մատուցում: Անտառում կա ընկույզ, տանձ, հոն, մորի և այլն: Անտառում, բազալտե ժայռի վրա հնագույն ժամանակներից պահպանված մի վանք կա իր բերդապարիսպով (նկ. 24):

Ախթալայի կլիման արդեն այն չէ, ինչ Շաղկաձորում: Այստեղ շատ շող է, և եթե անտառը լիներ, հազիվ թե որևէ մեկի մտքով անցներ այստեղ հանգստյան տուն կառուցել:


Այս շրջանը հայկական լեռնապարի հյուսիսային ծայրամասն է: Այն իր վրա կրում է լեռնապարի ազդեցությունը, մի կողմից խոնավություն բերող խոնավ լեռների մոտիկությունը, մյուս կողմից Արևելյան Անդրկովկասի տափաստանային ոեժիմի ազդեցությունը:

Չմեռն այս շրջանում տեսական չէ, շափակոր է, ամառ շող, գարունը խոնավ, իսկ աշունը, ինչպես ողջ Հայաստանում, տաք է և երկարատև:

Տարվա ամենատաք ժամանակը հունիս-սեպտեմբեր ամիսներն են: Այդ շրջանում ամսական միջին ջերմաստիճանը հասնում է 18—23-ի: Հուլիսը և օգոստոսը ամենատաք ամիսներն են, որոնց ամենաբարձր ջերմաստիճանը հասնում է 34—35-ի: Տարվա ամենացուրտ ժամանակը դեկտեմբերից մինչև փետրվարն է: Այդ ամիսների միջին ջերմաստիճանը 0,3-ից 1,5 է: Ամենացուրտ ամիսները սովորաբար հասնում են մայիս-հունիսից մայիսի միջին ջերմաստիճանը՝ 12,5 է:

Պաբար հունվարն ու փետրվարն են: Նույնիսկ այդ ամիսներին նվազագույն ջերմաստիճանը ընդամենը — 8 է:

Օդի տարեկան միջին ջերմաստիճանը այստեղ 11,3 է (աղյուսակ 23), որը 1,3-ով ավելի է կլիմայական առողջարան-ների համար իդեալական համարվող տարեկան միջին ջերմ-աստիճանից: Ինչպես երկրորդ աղյուսակում ենք տեսնում, Ախթալայում օդի ջերմաստիճանը շատ է մոտենում Մահսի<sup>1</sup> կլիմային: Նույնպիսի ջերմաստիճան է լինում նաև Բելգրա-դում, գրեթե նույնը և Բուրգասում, Պիազենցայում և այլն:



Նկ. 24. Ախթալա հանգստի տան շրջակայքը  
Լուսանկար՝ Ե. Ա. Սարգսյանի

Օդի խոնավությունը առավելագույնին է հասնում մա-  
յիս—հունիս և հոկտեմբեր, նոյեմբեր ամիսներին: Այստեղ  
տեղումները քիչ չեն, մոտ 500 մմ: Այսպիսով շրջանը ավելի  
շուտ պատկանում է, միջին հաշվով, առավելագույն տեղում-

<sup>1</sup> Հստ Կեպպինի, Մահսի կլիման այդ մերձարևադաշինից չափա-  
վոր գոտուն անցնող կլիման է:

ներ ունեցող շրջանների թվին, ինչով և տարբերվում է Մահսի կլիմայից, նրան համընկնելով ձմռանն իր փոքր քանակությամբ տեղումներով։ Անձրններն ամենից շատ գալիս են մայիսին և հունիսին։ Իսկ ամենափոքրաքանակ տեղումները լինում են դեկտեմբերին, հունվարին և օգոստոսին։ Զյուն գրեթե շի գալիս։ Զյան ծածկույթը շատ անկայուն է։ Ուժեղ ամպամածություններ են լինում ձմռանը և ամենից առաջ գարնան առաջին կեսին։

### Ա. Դ Հ Պ Լ Ա Մ Կ 2

Մահսի կլիմա ունեցող շրջանների օդի միջին ջերմաստիճանները

	Միջին ջերմաստիճանները	
տաք շրջանի (մայիսից մինչև սեպտեմբեր)	ցուրտ շրջանի (նոյեմբերից մինչև մարտ)	մկանը
Բոլոնիա (Իտալիա) . . . . .	21,4	4,9
Բուրգաս (Բուլղարիա) . . . . .	20,0	3,9
Բելգրադ (Հարավուավիա) . . . . .	19,3	2,5
Ալեսանդրիա (Իտալիա) . . . . .	20,6	3,4
Պիաչենցա (Իտալիա) . . . . .	20,7	3,4
Մեդրի (Հայկական ՍՍՌ) . . . . .	23,1	3,9
Ախմալա (ըստ Շնողի օդ. կ. տըզ-յալների) . . . . .	19,6	2,9
		13,2
		12,1
		11,1
		12,1
		12,1
		13,6
		11,6

Դերեղ պետի կիրճի միջով փշում են արևմտյան, ավելի սակավ հյուսիսային և հյուսիս-արևելյան ուղղության քամիներ։

Ախմալայում միշտ տաք է։ Հանգստյան տունը գործում է ապրիլից մինչև նոյեմբեր։

Ընդհանուր գծերով այսպիսին է անտառային գոտում գտնվող առողջարանների կլիման։ Ինչպես տեսնում ենք, յուրաքանչյուր շրջան իր առանձնահատկությունն ունի և ոչ մեկը մյուսին շի կրկնում։ Նույնը պետք է ասել նաև լեռնա-տափաստանային գոտու բուժավայրերի մասին։

Այդպիսիք են Խոռու բարձրավանդակը (Ստեփանավանը և Գյուղագարակը), Աևանի մերձափնյա շրջանը, Լենինականն ու Կարմրաքարը։

Լոռու սարավանդը ընկած է Հայկական ՍՍԾ հյուսիսում։ Այն երեք կողմից շրջափակված է լեռների մի շղթայով։ Հասավից Բզովդալի լեռնաշղթայով, արևմուտքից և ոնավ լեռների ճյուղավորումներով, հյուսիսից Սոմխեթի լեռների լանջերով։ Սարավանդի արևելյան մասը բաց է և լոռու լերկ ու բլրածածկ տափաստանը ձգվում է մինչև Դեբեղ գետը։ Սարավանդն առաջացել է լավաներից և հարթավայրի բնույթ է կը բռամ, որը դեպի արևելք փոքր ինչ թեքություն է ստանում։ Այստեղ են գտնվում Ստեփանավանի և Կալինինոյի հացահատիկային և անասնապահական շրջանները։ Բարձրահասակ խոտով ծածկված, կանաչ մարգագետիններն ու ցորենի ծփող դաշտերը կտրտված են ջորագետ, Կամենկա և այլ գետերի հոմներով։ Տեղանքը գրեթե զուրկ է անտառային բուսականությունից։ Անտառը միայն առանձին տեղերում է պահպանվել, ամենից շատ լեռնալանջերում։

Սարավանդի կլիման շատ առողջարար է։ Զմեռը մեղմ է, երկարատև, ամառը զով։ Ստեփանավանի օղերևութաբանական կայանի տվյալներով, բարձրավանդակի տարեկան միջին ջերմաստիճանը՝ 7,3 է, այսինքն գրեթե անքան, որքան Կիւլովդսկում, ավելի բարձր, քան Թերերդայում ու Արասթումանիում։

Լոռու սարավանդում ձմեռը համեմատաբար տաք է։ Ստեփանավանի օղերևութաբանական կայանի տվյալներով (աղ. 23), ձմռանը միջին ջերմաստիճանը՝ 1,2 ավելի ցածր է, քան Դիլիջանինը։ Գարնան միջին ջերմաստիճանը՝ 6,4 է։ Ամռան միջին ջերմաստիճանը՝ 15,9, այնպես է, ինչպիսին Հանքավանում, Շաղկաձորում, Սևանա լճի Արեգունի ափում։ Այն բարձր է Թերերդայի, Ձերմուկի և Դավոսի ամառային միջին ջերմաստիճանից, ցածր քան Կիւլավոդսկում, Կիրովականում, Դիլիջանում և Աբասթումանում, Արգնիում և Ախթալայում։ Աշնան միջին ջերմաստիճանը գրեթե այնպիսին է, ինչպիսին Կիւլովդսկինը և փոքր ինչ բարձր է Շաղկաձորից և Սևանի Արեգունի ափից։

Ջերմաստիճանի տարեկան տատանումները շատ քիչ են։ Պրոֆ. Ֆիգուրովսկու կարծիքով, Կովկասի լեռնային և հարթավայրային տափաստաններից ոչ մի տեղ ջերմաստիճանի

այդքան քիչ տատանումներ շեն նկատվում, որքան կոռու հար-  
թավարյում:

Կոռու սարավանդի կլիման աշքի է ընկնում իր զգալի  
շափակորոթյամբ: Երջակա լեռները ձմռանը նրան պաշտ-  
պանում են ցուրտ օդի հոսանքներից, ամռանը՝ երաշտից:  
Ամենացուրտ ամսի՝ հունվարի միջին ջերմաստիճանը—3,4 է:  
Միջին հունիսյան ջերմաստիճանը 17-ից շի անցնում: Զյան-  
ծածկույթը կայուն է, նրա բարձրությունը երբեմն 150 սան-  
տիմետրի է հասնում: Զյունը նստում է դեկտեմբերի վերջերին  
և հալչում մարտի սկզբին: Իսկ մարտի երկրորդ կեսից կոռու  
հարթավայրում արդեն գարուն է:

Նրա կլիման խոնավ է, տարեկան մինչև 750 մմ տեղում-  
ներով: Առանձնապես շատ անձրև է գալիս հունիսին և մայի-  
սին: Դրանք հեղեղի բնույթ են կրում, հաճախ ամպրոպ է վի-  
նում և կարկուտ է գալիս: Ամենից քիչ տեղումները դեկտեմ-  
բերին և հունվարին են լինում: Ամառը համեմատաբար խո-  
նավ է: Ջմռանը օդը ավելի չոր է: Կոռու սարահարթի միջին  
բարձրությունը 1500—1600 մետր է, օդը մաքուր է, լայնար-  
ծակ սարահարթը լավ է օդափոխվում և լուսավորվում: Այս  
բոլորը, շափակոր խոնավությունը, մեղմ ձմռան և ոչ շոգ ամ-  
ռան հետ միասին, բացառիկ պայմաններ են ստեղծում սա-  
րավանդում կլիմայական առողջարաններ կառուցելու համար:

Կուրորտագետ պրոֆ. Ա. Հ. Հակոբյանի տվյալներով,  
«կոռու ողջ սարահարթը պրակտիկ բժիշկներին վաղուց հայտ-  
նի է, որպես թոքային և սակավարյունությամբ տառապող  
հիվանդների, մասնավորապես երեխաների հանգստյան լա-  
վագույն մի վայր է»<sup>1</sup>,

Այժմ ամռանը շատ մանկապարտեզներ Ստեփանավան  
են տեղափոխվում: Առանձնապես հոշակված է Գյուղագարակ  
կամ «Մեծ Սոճուտ» սանատորիան: Այն գտնվում է Պուշկին-  
յան լեռնանցքով Կիրովականից Ստեփանավան տանող ճա-  
նապարհի վրա: Բազումի հարավային փեշերը ծածկված են  
սաղարթավոր անտառով, որը հասնում է մինչև Գյուղագարակ:

<sup>1</sup> А. А. Акопян, «Курорты Армении», Эривань, 1934.

Այստեղ սոճիներ են անկված, որից Մեծ Սոճուտ անունն է ստացել:

Հոռու սարավանդի ընական այս հիանալի տվյալներին ավելանում է սոճու բուրմունքով հաղեցած հրաշալի օդը: Իարձր ու փարթամ սոճիները այս անկյունը երեխաների համար բառացիորեն մի դրախտավայր են դարձնում:

Սևանա լիճի ափը: Սևանա լիճը լեռնային մի գոգահովիտ է, որը բոլոր կողմերից շրջափակված է լեռներով: Հյուսիսից և հյուսիս-արևելքից Արեգունու և Սևանի լեռներն են, արևմուտքից և հարավ-արևմուտքից Գեղամա լեռները, իսկ հարավից Վարդենիսի լեռները: Այս բոլոր լեռները 3000 մետրից ավելի բարձր են:

Լիճը ընկած է ավելի քան 1900 մ բարձրության վրա: Լճի հայելու տարածությունը մոտ 1300 քառակուսի կիլոմետր է: Այն ՍՍՌՄ բարձրադիր լեռնային լճերից ամենամեծն է: Նրա ափերը հիմնականում ժայռոտ են և բուսական ծածկույթից զուրկ: «Լավայից առաջացած պղնձե լերկ լեռներ,— Սևանի մասին պատմում է Միխայիլ Կոլցովը,— կարծր են և ըստ որում ոչ իրական, ուրվականային, ինչպես լուսնի ամայի մի քնակար, որոնք կապույտ ջրի վրա ծառայում են որպես ափեր: Այդ Հայաստանի «կիսահեքիաթային հրաշքն է», հսկայական լիճը՝ Գոկչա կամ Սևանա ծովը, որը երկրի կեղևի գիգանտային երերումով երկուսից ավելի կիլոմետրով ծովի մակերեսովյից վեր է խոյացել: Կապույտ ջրի գրեթե մեկ ու կես հազար քառակուսի կիլոմետր... Մոտորանավով մենք շարժվում ենք դեպի լճի խորքը: Մի ժամից հետո քարե փոքրիկ մի կղզյակ, Սևանա մենաստանը՝ հայկական Սոլովեյին, մեղանչած վանականների երբեմնի աքսորավայրը<sup>1</sup>: Այժմ փոքրիկ կղզին միացել է ցամաքին: Կղզում գտնվում է հանգստյան տունը, որը գործում է ամառային և աշնանային ամիսներին: Կղզում պահպանվել են բազմադրյան պատմություն ունեցող վանքերը, «խստագեմ պատերը,— գրում է Միխայիլ Կոլցովը,— հարություն են տալիս վաղ միջնադարի հիշողություններին, քարե

1 М. Колъцов, «19 городов». Изд. Федерации, Москва, 1932.

የኢትዮጵያውያንድና ስራውያንድ በአዲስአበባ የተያያዘውን አገልግሎት በመሆኑ

սեղանները ճշտորեն կրկնում են հնագույն-հեթանոսական զոհասեղանները<sup>1</sup>

Սևանի ափերի կլիման յուրահատուկ է: Սևանի ավազանը շրջափակված լինելու պատճառով, համեմատաբար քիչ տեղումներ են լինում, տարեկան մոտ 350 մմ: Այդ պատճառով էլ Սևանի կլիման շափակոր չոր կլիմաների կարգին է պատկանում:

Էճի շատ բարձր տեղադրության և օդի շորության շնորհիվ այստեղ արեգակի ճառագայթման շատ մեծ տևողություն է նըկատվում, որի պատճառով և Սևանը գերազանցում է բոլոր հայտնի կուրորտների և նույնիսկ հոչակավոր արևարուժարան առողջարան Լեյզենին, ուր հիվանդներին բուժում են արևով:

Պրոֆ. Ա. Հ. Հակոբյանից վերցրած Յ աղյուսակը<sup>2</sup> վառ կերպով վկայում է այդ տեսակետից Սևանի ափերի բացառիկ պայմանների մասին:

Շորժայի օդերևութաբանական կայանի տվյալներով Սևանի օդի միջին ջերմաստիճանը 5,6 է, որը որոշ շափով ցածր է Թերերդայի և Արասթումանի տարեկան միջին ջերմաստիճանից, շատ ավելի ցածր Կիսլովոդսկից և Դիլիջանից և շատ բարձր Դավոսից (աղյուսակ Յ):

Սևանի Արեգունու ափը իր ձմռան միջին ջերմաստիճանով ( $-3,6$ , Շորժայի օդերևութաբանական կայանի տվյալներով) շատ է մոտենում Կիսլովոդսկուն, Արգնուն, գարնան միջին ջերմաստիճանով՝ ( $4,2$ ) Մաղկաձորին և Հանքավանին, ամռան միջին ջերմաստիճանով՝ ( $16,1$ ) Արասթումանին, Մաղկաձորին, Հանքավանին, Լոռու սարավանդին, աշնան ջերմաստիճանով՝ ( $7,2$ ) Մաղկաձորին և Արասթումանին:

Էճի ջուրը ամառը լողի համար լիովին պիտանի է. այն տաք է ( $19-22^{\circ}$ ), փափուկ, թափանցիկ:

Սևանի կլիմայի արժանիքներից է նաև նոսր և լիովին մաքուր օդը, շափակոր խոնավությունը, ջերմաստիճանի օրական ոչ մեծ տատանումները, ամպամած օրերի փոքր թիվը և այլն: Կլիմայաբուժական հիմնարկների ստեղծման համար առանձնապես նպաստավոր է Սևանա լճի հյուսիս-արևելյան

<sup>1</sup> М. Колъцов, «19 городов», Изд. федерация, Москва, 1932.

<sup>2</sup> А. А. Акопян, «Курорты Армении», Эривань, 1934.

Արեգունի ափը: Այդ ափը ունի հիանալի, փոշեղուրկ, խխունջածածկ բազմաթիվ լողավայրեր: Առողջարանների շինարարության համար մի քանի հրապարակներ կան: Այստեղ ուժեղ քամիներ չեն լինում:

Շատ հեշտ կարելի է այն կանաչապատել:

Արեգակի ճառագայթման շտեսնված երկարատևության և ինտենսիվության, հատկապես ուղարամանիշակագույն ճառագայթման շնորհիվ, այս ափում կարելի է համամիութենական հելիոթերապետիկ հիանալի առողջարաններ կառուցել:

Չպետք է մոռանալ, որ Սևանի առողջարանները միաժամանակ և՝ լեռնային, և՝ ծովային տիպի կլինին, որ Սևանում բնական այդպիսի պայմանների հազվագյուտ ներդաշնակություն կա:

Կուրորտոլոգ Ա. Հ. Հակոբյանի կարծիքով «այս բոլոր տվյալների հանրագումարը մեզ այն եզրակացության է բերում, որ Սևանա լիճը կուրորտային հարստությունների այնպիսի բաղադրյալներ ունի և այն էլ նման յուրօրինակ կոմբինացիաներով, որոնք ոչ մի տեղ այնպես չեն արտահայտվում, ինչպես Սևանում. ա) լեռնային բարձրադիր կլիմա, բ) մաքուր, փոշեղուրկ ծովային օդ, գ) ջերմաստիճանի և խոնավության օրական փոքրիկ տատանումներ, դ) արևոտ ժամերի մեծ քանակ (2800 ժամ), ե) արևի առատ ճառագայթում, որը նաև լճի ջուրն է տաքացնում, իսկ այս վերջինն իր հերթին տաքացնում է Արեգունի ափի օդը»<sup>1</sup>:

Լենինական: Լենինականում 1500 մ բարձրության վրա տեղադրված է Շահումյանի անվան մանկական սանատորիան: Այն լենինական քաղաքի հետ կապված է բարեկարգ խճուղիով: Սանատորիայի շրջանը շատ գեղեցիկ է: Այն լեռնային բարձրադիր մի տափաստան է, որը ծածկված է խոտերի և ծաղիկների շքեղ գորգով: Սանատորիայի մոտով հոսում է Ախուրյան գետը:

Շրջանի կլիման շատ առողջարար է, շափակոր զով, լեռնա-տափաստանային: Ամառը տաք է, ձմեռը ցուրտ, ձյունառատ: Հովհաննի միջին ճերմաստիճանը 19—20 է, հունվա-

<sup>1</sup> А. А. Акопян, «Курорты Армении», Эревань, 1934.

ըինը — 10—12։ Տեղումների տարեկան քանակը հասնում է 500 մմ-ի։ Քամիները շափավոր են։

Սանատորիան նախատեսված է 175 մահճակալի համար, գործում է մայիսի վերջից մինչև օգոստոսի վերջը։ Այն նախատեսված է 7-ից 14 տարեկան երեխաների համար։ Զ. Մ. Շմավոնյանի տվյալներով, այնտեղ կարող են բուժվել նյարդային համակարգության ֆունկցիոնալ խանգարումներով տառապող երեխաները և մանկական հիվանդությունների հետևանքով առաջացած բարդությունները (ոչ ծանր)։

Կարմրաքար։ Մ. Մ. Նահապետյանի տվյալներով<sup>1</sup> «Կարմրաքար» հանգստյան տունը ընկած է Բարգուշատի լեռնաշղթայի լանջին, անտառածածկ գեղատեսիլ մի վայրում, Ղափան կայարանից 20 կմ հեռու, ծովի մակերեսույթից 1700 մ բարձրության վրա։ Մինչև Ղափան կայարանը երկաթուղով են գնում, ապա ավտոբուսով։ Կարմրաքարը միջին լեռնային մի վայր է, որն աշքի է ընկնում իր լեռնաանտառային կլիմայով և լանդշաֆտի գեղեցկությամբ։ Հանգստյան տունը 75 մահճակալ ունի և գործում է մայիսից մինչև սեպտեմբեր։ Նրա շրջակայքում շրջագայելու համար պատմական շատ հուշարձաններ կան (Տաթևի հոչակավոր ամրոցը և այն)։

Կարմրաքարի հանգստյան տունը, ինչպես և Լենինականի ու Լոռու սանատորիաները, որոնք վերջին տարիներս են ստեղծվել, օրինակ պետք է դառնան։ Տեղական նշանակության, նման ոչ մեծ սանատորիաներ ու հանգստյան տներ կարող են ստեղծվել Հայաստանի առողջարար կլիմա ունեցող շատ շրջաններում։

Ջերմուկ։ Ջերմուկ ջրաբուժական առողջարանը, ինչպես և կուրորտավայր Հանքավանը, մանրամասնորեն նկարագրված են Հայաստանի կարևոր հանքային աղբյուրներին վերաբերող գլխում։

Արշատ։ Արարատը, որպես հանքային ջրերով հարուստ մի վայր, մանրամասնորեն նկարագրված է այն գլխում, ուր տրված է նաև Հանքավանի, Ջերմուկի նկարագրությունը։

Այժմ կրկին նայենք այն աղյուսակին, ուր համեմատու-

<sup>1</sup> М. М. Нагапетян, «Дом отдыха Кармракар».

թյան մեջ է դրվում տարբեր լեռնա-կլիմայական առողջարանների օդի ջերմաստիճանն ըստ սեզոնների:

№ 23 աղյուսակին նայելիս առաջին իսկ հայացքից երևում է, որ եթե հայկական առողջարանների ձմռան միջին ջերմաստիճանները (առանց Արարատ և Շնող օդերևութաբանական կայանների) տեղավորված են  $7,3^{\circ}$  հատվածում ( $-0,6^{\circ}$ -ից մինչև  $-7,9^{\circ}$ ), ապա հետագայում, ըստ սեզոնների, այդ հատվածը խիստ կրճատվում է: Այսպես, օրինակ, գարնանը այն ընդամենը կազմում է  $5,8^{\circ}$  ( $3^{\circ}-8,8^{\circ}$ ), ամռանը՝  $3,3^{\circ}$  ( $14,3^{\circ}-17,6^{\circ}$ ) և աշնանը՝ արդեն  $2,8^{\circ}$  ( $6,1^{\circ}-8,9^{\circ}$ ):

Այսպիսով, մեր առողջարանների ձմեռային և գարնանային ջերմաստիճանները միմյանցից ավելի սուր կերպով են տարբերվում, քան ամռան և հատկապես աշնան ջերմաստիճանները: Աշունը Հայաստանում ամենուր տաք է և երկարաւուն: Մեր բոլոր առողջարանների ամենամեծ առավելություններից մեկը հենց այդ է:

Մեր լեռնա-կլիմայական առողջարաններն ընդհանուր առմամբ շատ ցուրտ չեն: Իրենց տարեկան և սեզոնային միջին ջերմաստիճաններով նրանք համապատասխանում են Կիւլովողակին, Թերերդային և Աբասթումանին, իսկ թոքային հիվանդությունների այնպիսի մի առողջարան, ինչպիսին Դավոսն է, գարնանը, ամռանը և աշնանը, օդի ջերմաստիճանով, հայկական առողջարաններից շատ ցածր է: Ձմռանը Դավոսը գրեթե համապատասխանում է Ջերմուկին (ձմռանը Ջերմուկը միջին հաշվով  $0,2^{\circ}$ -ով ցուրտ է Դավոսից), դրա փոխարեն գարնանը Ջերմուկում  $1,2^{\circ}$ -ով տաք է, քան Դավոսում: Ամռանը Ջերմուկում միջին հաշվով  $3,1^{\circ}$ -ով ավելի տաք է, քան Դավոսում, իսկ աշնանը՝  $2,6^{\circ}$ -ով:

Հայկական առողջարանների մեջ, ջերմաստիճանային պայմաններով ևս կարելի է առանձնացնել 3 խոամբ, որը նույնպես № 23 աղյուսակում լավ նկատելի է:

Առաջին խոամբը Աևանի Արեգունյան ափն է, Սաղկաձորը, Ջերմուկը, Հանքավանը: Այս առողջարաններում օդի տարեկան միջին ջերմաստիճանը, ինչպես նաև օդի միջին ջերմաստիճանն ըստ սեզոնների ավելի ցածր է, քան Աբասթումանում: Այդ ցուրտ լեռնա-կլիմայական առողջարանների խոամբն

է: Այդ առողջարանների օդի ձմռան և գարնան միջին ջերմաստիճաններն ավելի ցածր են, իսկ ամռանն ու աշնանն ավելի բարձր, քան թեքերդայում:

Առողջարանների երկրորդ խումբը Լոռու սարավանդն է, Դիլիջանն ու Կիրովականը: Այս առողջարանների տարեկան միջին ջերմաստիճանը, ինչպես և սեզոնների միջին ջերմաստիճանը (բացառությամբ ձմռան) համապատասխանում են Կիսլովոդսկին: Չմեռն այս առողջարաններում ավելի տաք է, քան Կիսլովոդսկում: Այդ լեռնա-կլիմայական տաք առողջարանների խումբն է:

Երրորդ խումբը Արարատն է, Ախթալան և Արզնին: Այդ, եթե կարելի է այսպես ասել, շոգ առողջարանների խումբն է:

Օդի ամենաբարձր ջերմաստիճանը գարնանը, ամռանն ու աշնանը Արարատյան դաշտավայրում է, բայց կլիման խիստ մայրցամաքայնության պատճառով, Արարատի ձմեռային ջերմաստիճանը սուր կերպով ընկնում է և մոտենում Կիրովականի ու Թեքերդայի ձմռանը:

Ախթալայում օդի տարեկան միջին ջերմաստիճանը Արարատից ցածր է, նույնը պետք է ասել նաև գարնան, ամռան և աշնան միջին ջերմաստիճանների մասին: Ամենատաք ձմեռն Ախթալայում է, որը Հայաստանի միակ առողջարանային վայրն է, ուր ձմռան միջին ջերմաստիճանը  $0^{\circ}$ -ից բարձր է:

Արզնիում տարեկան միջին ջերմաստիճանն ավելի ցածր է, քան Արարատում և Ախթալայում, բայց գարնան ու աշնանը մյուս բոլոր առողջարաններից բարձր է: Չմռանն Արզնիում օդի միջին ջերմաստիճանը համապատասխանում է Աբասթումանին, և փոքր ինչ ցածր է, քան Սևանի Արեգունյան ափի ձմռան միջին ջերմաստիճանը: Աշնանն Արզնիում օդի միջին ջերմաստիճանը նույնն է, ինչ Կիրովականում և շատ մոտ է Դիլիջանին ու Կիսլովոդսկին:

Ընդհանուր առմամբ այս է մեր առողջարանների կլիմայական թուցիկ բնութագիրը:

Կուրորտային գործի ղարդացման հեռանկարները Հայկական ՍՍՌ-ում անսահմանորեն մեծ են: Եթե այդ բոլորն օգտագործենք, ապա մեր ռեսպուբլիկան կարող է վերածվել համատարած առողջարանների, իսկ հանքային ջրի արտահանությամբ կարող է գրավել աշխարհում առաջնակարգ տեղ:

Գործող առողջարաններում (Արգնի, Զերմուկ, Դիլիջան) առաջին հերթին պետք է օգտագործել այն բոլորը, ինչ բնությունը շռայլորեն պարզել է այդ շրջաններին:

Այդ առողջարանների ղարդացման յոթնամյա պլանով, նրանց կարողությունը 1965 թվականին պետք է ավելանա 2000 մահճակալով, բայց նրանց կուրորտային հսկայական հնարավորությունների հետ համեմատած քիչ է: Այդ առողջարանները հանձինս իրենց «արբանյակների» շատ հարուստ ուղերվ ունեն, Արգնու «արբանյակները» Արգելն ու Ավագանն են, Զերմուկինը՝ Կեշուտն ու Դալին, իսկ Դիլիջանինը՝ Բլդանն ու Ֆիոլետովոն:

Ամենից առաջ պետք է խոսել Դիլիջանի «արբանյակների» մասին:

Դիլիջան լեռնա-կլիմայական առողջարանում պետք է օգտագործվեն Բլդանի (Դիլիջանի) և նրան շատ մոտ ընկած Ֆիոլետովոյի հանքային ջրերը:

Այդ հնարավորություն կտա Դիլիջանում զուգահեռաբար բուժել նաև աղե-ստամոքսային հիվանդությունները, որոնք հաճախ ուղեկցում են հիմնական հիվանդությանը:

Արժե այս մասին մտածել: Զէ՞ որ այնքան էլ շատ միջոցներ պետք չեն, որպեսզի Դիլիջանի և Ֆիոլետովոյի ջրերը առողջարան հասցվեն:

Հայտնի է, որ Եսենտուկիի տիպի ջրի պահանջը հսկայական է: Եսենտուկիին օժանդակություն է հարկավոր: Ինչո՞վ է վատ մեր կանաչ գեղեցկուհի Հանքավանը: Ինչո՞ւ շպետք է Հանքավանը դառնա այդ կարգի համամիութենական առողջարան: Հանքավանի ջրերը ոչնչով չեն զիջում Եսենտուկիի ջրերին: Սրանք նույնիսկ նրա նկատմամբ փոքր-ինչ առավե-

լություններ ունեն: Հանքավանի ջրերում բիոլոգիապես ակտիվ երկարժեք երկաթի առկայության շնորհիվ, այդ ջրերը կարելի է կիրառել նաև սակավարյունության բուժման համար, որին կօժանդակի և Հանքավանի լեռնային առողջարար կլիման: Հանքավանը կուրորտային հարուստ հնարավորություններ ունի: Նա ևս «արբանյակներ» ունի: Դրանք Մարմարիկի լայն հովտում ընկած Կարմիր Հովիտ, Ուշաշիկ, Զառ, Շաղկաձոր վայրերն են:

Հանքավանում առողջարան կառուցելու հերթին պետք է դասել նաև առողջարանների կառուցումը Կամոյում և հատկապես Արարատում:

Արարատյան ջրերը նման են Ծղալտուբոյին: Այստեղ մեր կողքին, գնացքով կամ ավտոմեքենայով, Երևանից ընդամենը երկու ժամվա ճանապարհով հեռու, Արարատյան ծաղկող հովտում կարելի է նման տիպի առողջարան ստեղծել:

Այստեղ ամռան շոգ ամիսներին կարելի է նաև կազմակերպել երիկամային հիվանդների, իսկ աշնանը խաղողով տարվող բուժումը: Այս առողջարանն իր առանձնահատկությամբ Հայկական ԱՍՏ-ում միակն է լինելու:

Գոյություն ունեցող և կառուցվելիք նոր առողջարաններում պետք է ձգտել ընդլայնելու սանատորիաների պրոֆիլները, նրանցում ընդգրկել ավելի ու ավելի բազմաթիվ հիվանդությունների բուժումը: Այդ հնարավորությունը մեզ տալիս են հանքային աղբյուրներով, ցեխերով և տորֆահանքերով հարուստ մի շարք շրջանների կլիմայական բարենպաստ պայմանները:

Պետք է լավ ուսումնասիրել Տաթևի, Ուռութի, Շամբի, Կույբիշևի (Սև գետակի վրա), Արգիճիի և ուրիշ շատ հանքային աղբյուրները: Ամենից առաջ, իհարկե, պետք է զբաղվել Տաթևի հանքային աղբյուրներով: Նրանից ոչ հեռու են գտնըվում Ղափանի և Քաջարանի արդյունաբերական կենտրոնները: Նրանցում զբաղված բանվորները կարող են Տաթևում բուժվել ու հանգստանալ:

Միայն թե Տաթևում առողջարան կառուցելիս պետք է աշխատել շխախտել նրա բնական հաղվագյուտ գեղեցկությունները:

Պարտադիր չէ, որ բոլոր հանքային աղբյուրների մոտ գեղեցիկ, հարմարավետ առողջարաններ կառուցվեն: Բայց կարելի է կոլտնտեսությունների, սովորողների, տեղական տնտեսական և արդյունաբերական կազմակերպությունների (ընդգրկելով նաև առողջապահության տեղական օրդաններին) ուժերով այդ ջրերի բազայի վրա ջրաբուժարան կառուցել, ջրաբուժական կայաններ ստեղծել:

Հայաստանի շատ վայրեր նաև ուրիշ կուրորտային գործուներ ունեն: Բուժիչ ցեխով և տորֆերով հարուստ շրջաններում կարելի է ցեխաբուժարան կառուցել կամ էլ տեղական բուժարաններին և հիվանդանոցներին կից կազմակերպել նաև ցեխային վաննաների ընդունումը:

Այս առումով պետք է խոսել գոյություն ունեցող բոլոր առողջարաններում ցեխաբուժությունն ու տորֆաբուժությունը լայնորեն կիրառելու մասին:

Բասարգեշարի շրջանային հիվանդանոցի և Կիրովականի «Արմենիա» սանատորիայի փորձը պետք է ընդօրինակեն մյուս առողջարաններն ու բուժհիմնարկները:

Ամուսն ամիսներին ցեխաբուժությունը կարելի է կատարել ավագանների մոտ ցեխը արևի տակ՝ տաքացնելու միջոցով: Երեանում, Թոխմախան լճի ցեխերի և Զրվեժի գիպսաբեր կավերից արհեստական ճանապարհով ստացված ցեխի բազայի վրա կարելի է մեծ ցեխաբուժարան կառուցել:

Բոլոր առողջարաններում և բուժարար վայրերում արեգակնային ճառագայթման երկարատևության, հատկապես ուղարամանիշակագույն ճառագայթման ինտենսիվության շնորհիվ սանատոր բուժման կոմպլեքսի մեջ պետք է մտցնել նաև արևաբուժությունը (հելիոթերապիա):

Մենք ցանկանում ենք Հայկական ՍՍՌ բոլոր բուժվայրերի մեջ հատկապես առանձնացնել երեք մեծ շրջաններ: Մարմարիկ գետի կանաչ հովիտը, Սևանի Արեգունի ափը և Լոռու ընդարձակ սարավանդը: Այս երեք շրջանները ասես հատկապես շնորհված են գեղեցիկ բնանկարներով, օդով,

արելվ, կանաչով, ջրով, հանքային աղբյուրներով, բուժիչ ցեխներով:

Նրանցում կարելի է տասնյակ սանատորիաներ, հանգըստյան տներ, մանկական հրապարակներ, պիոներական ճամբարներ, տուրիստական բազաներ, հյուրանոցներ, անհատական տնակներ—ամառանոցներ կառուցել և նրանց շուրջը պարկեր, այգիներ, ջրային կայաններ ստեղծել:

Մարմարիկ գետի հովիտը Հանքավանից մինչև Աթարբեկյան, այդ թվում նաև նրանց հատող Զառի, Շաղկաձորի և այլ անտառահովիտները կարելի է լիովին օգտագործել:

Սևանի Արեգունի ափում սանատորիաներ կառուցելու համար նպատակահարմար է օգտագործել նրա մերձափնյա գոտին, Շորժա գյուղից 3 կմ հյուսիս-արևելք ընկած վայրերից սկսած Աղբուզաղ և Թոխուզա գետերի հովիտների երկայնքով, ընդգրկելով մոտ 10—15 կմ տարածություն։ Ամառանոցային ավան կառուցելու համար կարելի է օգտագործել այդ ափի շարունակությունը մոտ 10—12 կմ երկարությամբ դեպի հյուսիս-արևմուտք, իսկ պիոներական ճամբարների համար լավ հեռանկարներ ունի Արտանիշի ծովածոցին հարող ափը, որը բացառիկ գեղեցիկ է և ցուրտ քամիներից պաշտպանված։

Այդ նպատակով կարելի է օգտագործել Գեղամա սարահարթերը, Զանգեզուրը և այլ վայրերը։ Բայց եթե մենք ուսպուրլիկայում նույնիսկ տասնյակ հիանալի առողջարաններ կառուցենք, միևնուն է, հիվանդները ողջ տարին շեն կարող այնտեղ մնալ։ Ամիսն անցավ, ուղեգրի ժամկետը վերջացավ, հիվանդը պետք է տուն վերադառնա։ Առողջական վհճակը բարելավվեց, բայց չէ որ մեկ ամսվա մեջ շես կարող քեզ տանջող ցավից ազատվել։ Իսկ որպեսզի բուժումը տանը շարունակվի ջուրը խմելով, անհրաժեշտ է, որ այն շշերով շատ վաճառքի հանվի։ Սեղանի ջրերը պետք է խանութներում վաճառվեն, իսկ բուժիչ ջրերը դեղատներում, որոշ մասը հաճախորդների առաջին իսկ պահանջով, մի մասն էլ բժշկի դեղատոմսով։ Դրանք պետք է շատ լինեն, առատ, ամենատարբեր տեսակներով, դանազան համարներով, յուրաքանչյուր համարն իր առանձնահատկություններով։

Հանքավանում շշերի մեջ է լցվում միայն մեկ բուժիչ

ջուր: Իսկ նրա կողքին, Կարմիր հովտում բացառիկ դուրեկան համ ունեցող սեղանի հանքային ջրի ոչ մեծ մի աղբյուր կա:

Ջերմուկի լցնող գործարանը շատ հզոր է և տեխնիկայի վերջին խոսքով հագեցված, 22երի մեջ կարելի է լցնել նաև կեշուտի և Դալիի ջրերը: Դիլիջանի գործարանում, Բլդանից բացի, 22երի մեջ կարելի է լցնել նաև Ֆիոլետովոյի և այլ հանքային աղբյուրների ջրերը:

Բայց բանը ոչ միայն այն է, որ ընդլայնենք արդեն գործող գործարանների ըների ասորտիմենտը: Պետք է շարք մտնեն նաև մյուս հանքային ջրերի գործարանները, որպեսզի երևան գան՝ «Տաթև», «Շամբ», «Ուռուտ», «Արարատ», «Արգիճի» և այլ ու այլ պիտակներ կրող 22եր:

Պակաս կենսական պրոբլեմ չէ սանատորիաներն ու հանգըստի տները ողջ տարին գործի դնելու խնդիրը: Հատկապես արդյունավետ է ձմռան ամիսներին հատուկ պատշգամբներում և աէրոսոլյարիումներում շուրջտարյա կլիմայաբուժությունը: Ձմռանը, ձյան կայուն ծածկութն օգտագործելով, կարելի է կուրորտային բոլոր շրջաններում զրադվել նաև դահուկային սպորտով: Շատ նպաստավոր են Ջերմուկի ձմեռային պայմանները, իսկ առողջարանն աշխատում է միայն մայիսից—հոկտեմբեր ամիսներին:

Այդ նույն Ջերմուկի շուրջտարյա գործունության հարցը կապված է առողջարանի շեռուցման հետ:

Ամենից լավ է այդ առողջարանները շեռուցել նույն հանքային ջրերով, եթե, իհարկե, դրանք բարձր շերմաստիճան ունեն: Տաք չորերով առանց հատուկ ծախսերի և վառելանյութի կարելի է շեռուցել առողջարանային շենքերը: Այսպիսով, առողջարանները կարող են ողջ տարին աշխատել: Տաք ջրերի առկայությունը հնարավորություն կտա և շերմոցներ կառուցելու, իսկ տարվա բոլոր եղանակներին մեծ թվով արևոտ օրերը հնարավորություն կտան, առողջարանի կարիքների համար, դրանցում ողջ տարին ծաղիկներ, բանջարեղեն և նույնիսկ մրգեր աճեցնել:

Ջերմուկի թերմալ ջրերը, որոնց շերմաստիճանը հասնում է  $64^{\circ}$ -ի և որոնց քանակը օրական 2 միլիոն լիտր է, ներկա-

յումս օգտագործում են հանքային ջրերի շշալցման գործարանի ջեռուցման, նրա լվացող մեքենաների համար և այլն:

Այդ ջրերի խոր հետախուզության և ուսումնասիրության դեպքում, իհարկե, հաշվի առնելով նրանց քանակը, դրանք կարող են օգտագործվել ողջ առողջարանի, արտադրական և բնակելի շենքերի ջեռուցման, իսկ եթե դրանցից գոլորշի ստացվի, ապա նաև փոքրիկ ջերմաէլեկտրակայանի կառուցման համար:

Հանքավանի հանքային աղբյուրների շրջանը, որոնց ջերմաստիճանը հասնում է  $35^{\circ}$ -ի, իրենց արտամղած ջրի ընդհանուր քանակով, օրական մոտ 3 միլիոն լիտր, հետախուզված է մինչև 120 մետր խորության վրա:

Ոչ մեծ խորության վրա կարելի է բարձր ջերմություն ունեցող ջրեր ստանալ, որոնք կարող են օգտագործվել շենքերի ջեռուցման համար:

Հանքավանում ծավալված լիոնարդյունաբերական և կուրորտային շինարարությունն այժմ դրա կարիքն է զգում:

Արարատ ավանի մոտ ընկած հանքային ջրերը, որոնց ջերմաստիճանը հասնում է մինչև  $26^{\circ}$ -ի, հետախուզված են մինչև 500 մետր խորությամբ:

Արդյունաբերական ձեռնարկությունների, ավանի բնակելի շենքերի և ապագա առողջարանի ջեռուցման համար պիտանի ավելի բարձր ջերմաստիճան ունեցող ջրի ստացումը պահանջում է զգալիորեն խոր հորատանցքեր փորել:

Բուռն կերպով զարգացող Արդնի առողջարանը ներկայումս իր տրամադրության տակ ունի  $24^{\circ}$ -ի ջուր, որը ջրաբուժության համար տաքացնելու անհրաժեշտություն ունի: Բացի կուրորտից, տաք ջրի կարիք ունեն հանքային ջրի շիշ լցնող և ածխաթթու գազի գործարանները, շենքերի և ցեխերի ջեռուցման համար: Այդ պատճառով էլ այժմ մեր առջև ծառացել է տաք ջրերի հետախուզական խոր հորատանցքեր փորելու հարցը:

Նման պայմաններ ենք տեսնում նաև Կամոյի շրջանում, ուր հնարավոր է տաք և նույնիսկ եռման ջրեր ստանալ, որոնք անհրաժեշտ են քաղաքի և տեղական փոքրիկ առողջարանի

(որի շինարարությունն արդեն նախատեսված է) կոմունալ կարիքների համար:

Հայկական ՍՍՌ լեռնային բարձրադիր բնակավայրերի՝ ջերմուկի, Սիսիանի, Կամոյի ջեռուցման կազմակերպման հարցը (որը պետք է իրագործվի ստորերկոյա եռման ջրերի մեծ պաշարների, թերևս և գոլորշու հաշվին), անհապաղ լուծում է պահանջում, քանի որ նշված վայրերը անհրաժեշտ քանակությամբ տեղական վառելանյութ լունեն և պետք է այն մեծ ծախսերով Միության մյուս ռեսպուբլիկաներից բերեն:

Բացի հանքային ջրերից ջրաբուժության մեջ կարելի է օգտագործել նաև զանազան հանքերի ջրերը: Հանքերի ջրեր են կոչվում լեռնային հանքահորերից ելնող ստորերկոյա ջրերը:

Օգտակար հանածոների հանքավայրերի շրջանում, հանքերի ջրերը, ներգործելով լեռնային ապաների վրա, հարստանում են ամենատարբեր էլեմենտներով, որոնք պետք է ազդեն մարդու օրդանիկմի վրա, այդ պատճառով էլ այդ ջրերը կարող են ջրաբուժության մեջ օգտագործել: Այդ ջրերով փորձնական բուժումը կարելի է կատարել Ախթալայում:

Ախթալայի հանքերի թթու ջրերը իրենց քիմիական բաղադրությամբ նման են Օրենբուրգի մարզի Գայ առողջարանի բուժիչ ջրերին, հատկապես երկաթի, պղնձի, ցինկի, սիլիցիումական թթվի և այլ միկրոէլեմենտների պարունակությամբ: Գայ առողջարանի ջրերը լավ ցուցանիշներ են տալիս ուսմատիկմի, կանացի, մաշկային և այլ հիվանդությունների բուժման ժամանակ: Նման արդյունք պետք է սպասել նաև Ախթալայի թթու ջրերով բուժելու դեպքում:

Ախթալայի հանքավայրին անմիջապես մոտ, ընդամենը 3 կմ հեռավորության վրա գործող հանգստյան տունը կարող է որպես փորձնական բուժման բազա ծառայել:

Ախթալայի հանքավայրի բարձիթողի արված տեղամասները հնարավորություն կտան միանգամայն մաքուր, հեշտությամբ կապտաժվող ջրեր ստանալ:

Եթե Ախթալայի հանքերի ջրերը բուժիչ լավ ցուցանիշներ ցուցաբերեն, ապա այդ հետազոտությունները պետք է շարու-

Նակվեն նաև Հայկական ՍՍՌ մյուս հանքերի ջրերի նկատ  
մամբ: Ի դեպ, պետք է ասել, որ այդպիսիները քիչ չեն:

Եղրափակելով, մի քանի խոսք ասենք տուրիզմի մասին:

Հայաստանի ողջ տերիտորիան գրեթե ամբողջովին ըն-  
կած է բարձր սարահարթերի վրա: Իսկ լեռներում օդը նոսր է  
և մաքուր: Հայաստանի կլիման, շնայած մի շաբք յուրահատ-  
կությունների, ընդհանուր առմամբ, ամռանը շոգ է և արևոտ,  
ձմռանը ցուցու և ձյունոտ: Ամառը և աշունը տևական են,  
տաք, չորացին: Երբ ոռւսական հարթավայրում վաղուց արդեն  
անձրև է գալիս և հաճախ էլ նույնիսկ ձյուն, Հայաստանում  
լինում են տաք ու պայծառ օրեր:

Արևի ճառագայթների տակ, կախարդանքով կանգնած են  
ոսկի հագած անտառները: Երկինքը կապույտ է, խաղաղ, օդը  
թափանցիկ: Չմռանը Արագածում, լեռնանցքներում, լեռնա-  
հովիտներում ձյան առատությունը դահուկային սպորտի հա-  
մար անհրաժեշտ պայմաններ է ստեղծում: Տուրիստի համար  
Հայաստանը մի դանձարան է: Այլևս որտեղ կարելի է փոքրիկ  
տարածության վրա այդքան հակառակություններ, բնության  
այդքան ամենաբազմազան զեղեցկություններ, հնագույն ճար-  
տարապետության այդքան հուշարձաններ տեսնել:

Տուրիստի համար շատ հետաքրքիր է և հայ ժողովրդի  
ստեղծարար աշխատանքը, գործարանների, ֆաբրիկաների,  
ավանների շինարարությունը, հին քաղաքների աճը, նորերի  
ծնունդը:

Այնտեղ, ուր երեկ լեռներում խուլ լոռություն էր թագավո-  
րում, այժմ աղմկում են նորակառուցները, խոյանում են ար-  
դյունաբերական գիգանտները (Քաջարան, Դաստակերտ  
և այլն):

Տուրիստի շրջագայությունը լեռնային ճանապարհներով,  
արևի տակ կատարած արշավները, կոփում են նրա օրգա-  
նիզմը: Լեռնային օդն աննկատելիորեն իր գործն է կատարում:

Հայաստանում տուրիստների թիվը տարեց տարի աճում  
է: Պետք է երկրում ընդլայնել տուրիստական բազաների  
ցանցը, վրանային ավաններ ստեղծել և այլն:


Կուրորտային գործի հետագա զարգացումը նոր հսկայական ջանքեր ու աշխատանք է պահանջում:

Մեր բժիշկները, կուրորտագետները, ճարտարապետները, միկրոբիոլոգները, քիմիկոսները, հիդրոերկրաբանները, կլիմայագետները, անտառագետները, բուսաբանները, տեխնիկները պետք է իրենց ջանքերը շխնայեն այս գործում:

Մեր ոեսպութիկան բոլոր հնարավորություններն ունի ժողովրդական առողջապահության մարդարիտը դառնալու:

Յ Ա Վ Ա Ն Դ Ա Կ Ա Ւ Ի Թ Յ Ա Խ Ե

Հայկական ՍՍԸ-ն կուրորտային ռեսուրսներով հարուստ երկիր է . . . . .	5
Կուրորտային գործի զարգացումը Հայաստանում . . . . .	19
Հանքային ջուրը . . . . .	33
Հայկական ՍՍԸ կարևորագույն հանքային աղբյուրները . . . . .	50
Հայկական ՍՍԸ բուժիչ ցեխերի և տորֆերի կարևորագույն հանքավայրերը . . . . .	101
Հայկական ՍՍԸ կլիմայական կուրորտներն ու կուրորտային վայրերը . . . . .	111
Վելոչափան . . . . .	135



ՆԻՐԱ ԽՎԱՆՈՎՆԻԿ ԴԵԼՈՒԽԵԱՆՈՎԱ  
НИНА ИВАНОВНА ДОЛУХАНОВА

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԿՈՒՐՈՐՏԱՅԻՆ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տպագրվում է Հայկական ՍՍՌ ԳԱ Երկրաբանության ինստիտուտի  
գիտական խորհրդի նանձնարարությամբ

Պատ. Խմբագիր՝ Ա. Լ. Անոնչյան  
Հրատ. Խմբագիր՝ Ա. Ա. Հովհակիմյան  
Նկարչական ձեռվորումը՝ Հ. Է. ԴԱՎԹՅԱՆԻ  
Տեխ. Խմբագիր՝ Հ. Լ. ԳՈՐՈՅԱՆ  
Սրբադրիչ՝ Ս. Ա. ԳԵՂՈՐԳՅԱՆ

Վֆ 07229, հրատ. № 2241, ԽՀԽ № 815, պատվեր 235, տիրաժ 1000  
Հանձնված է արտադրության 30/V 1963 թ., ստորագրված է տպագրության  
27/XI 1963 թ. տպագրական 9<sup>1</sup>/<sub>8</sub> մամուլ + 3 ներդիր. հրատարակչական  
6,83 մամուլ, թուղթ՝ 84×108<sup>1</sup>/<sub>32</sub>, Գինը 27 կուլ.

---

Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչության տպարան  
Երևան, Բարեկամության 24:

14317

ЕГԵЧИЛ  
1963